ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

ՎԱՐՍԵՆԻԿ ՄԱՆՎԵԼԻ ԲԶՆՈՒՆԻ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը. 00. 02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր

Օհանջանյան Սերժ Հայկի

Երևան 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ……..……3

ԳԼՈՒԽ 1 ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
……..……..9

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Նորամուծությունների տեղը և դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում……9

1.2. Նորամուծական զարգացման սոցիալական պայմանները……..….20

1.3. Փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական …….…….27

զարգացման առանձնահատկությունները

ԳԼՈՒԽ 2. ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ……42

ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2.1. Մարդկային գործոնի դերը նորամուծական զարգացման
մեջ……...42

2.2 Նորամուծությունների զարգացման սոցիալական ասպեկտները……49

2.3. Կլաստերի դերը փոքր և միջին
ձեռնարկությունների……..56

նորամուծական զարգացման գործում

ԳԼՈՒԽ 3. ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
…….63

ՀՀ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

3.1 Նորամուծական գործունեության ներկա վիճակը և
……63

զարգացման նախադրյալները

3.2. Փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական ……77

գործունեության պետական խթանման խնդիրները

3.3 Նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական
……...90

արդյունավետությունը տնտեսության կլաստերացման պայմաններում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……1
10

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆԿ……119

ԱՌԱՋԱԲԱՆ

Հասարակական և քաղաքական զարգացման ներկա փուլը նպաստում է նոր տիպի տնտեսության ձևավորմանը, որը հիմնված է տեխնոլոգիական և գիտատեխնիկական առաջընթացի վրա: 21-րդ դարում պետության կայուն և դինամիկ տնտեսական զարգացումը գրեթե անհնար է պատկերացնել առանց նորամուծական մոտեցումների կիրառման՝ ինչպես առանձին կազմակերպությունների, այնպես էլ ազգային տնտեսության մակարդակով: Նորամուծությունների ներդրումը նպաստում է որակական բարձր հատկանիշներով օժտված նոր արտադրանքի թողարկմանը, ինչը մեծապես կանխորոշում է շուկայում մրցակցային առավելությունների ձևավորումը: Հատկապես մրցակցության խորացման պայմաններում նորամուծական զարգացումը կազմակերպությունների համար ստեղծում է լայն հնարավորություններ շուկայում սեփական դիրքերի ամրապնդման համար: Այն հանդիսանում է ժամանակակից տնտեսության հիմնական գերակայություններից, որը յուրահատուկ խթան է գործարար ակտիվության համար և հիմնված է մտավոր կապիտալի ու արտադրության գործոնների նորովի համադրման վրա: Նորամուծական զարգացումը ոչ միայն տնտեսության մրցունակության հիմքն է, այլ նաև ստեղծում է պայմաններ անհատի բազմակողմանի դրսևորման համար՝ ստեղծագործական ինքնաիրացման և մարդկային կապիտալում ներդրումների իրականացման միջոցով: Նորամուծությունները հանդես են գալիս նաև որպես նոր որակի տնտեսական աճի ապահովման կարևոր միջոց և տնտեսության հիմնական շարժիչ ուժ: Նորամուծական տնտեսությունն էականորեն տարբերվում է ավանդականից և իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների նոր տեսակ, որոնք ծագում են արտադրության գործընթացում՝ դրա մասնակիցների միջև:

Զարգացման ներկա փուլում գիտությունը դարձել է կարևոր արտադրողական ուժ, ինչը ենթադրում է վերջինիս և տնտեսության սերտ փոխհամագործակցություն և գիտության նվաճումների առևտրայնացում: Գիտելիքի և տեղեկատվական ռեսուրսների լայնամասշտաբ օգտագործման արդյունքում ձևավորվում է զարգացման սկզբունքորեն նոր մոդել, որի արդյունավետ գործունեությունը կարող է ապահովվել միայն համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի պայմաններում: Եթե նախկինում գլխավորը և որոշիչը արդյունաբերական կարողություններն ու ֆիզիկական կապիտալն

էին՝ զերծ սոցիալական և հոգևոր արժեքներից, ապա ներկայումս որպես այդպիսին հանդես է գալիս մարդկային կապիտալը: Այն, իր հերթին, ձևավորվում է որոշակի ինստիտուցիոնալ միջավայրում՝ իր վրա կրելով հասարակական բոլոր ինստիտուտների ազդեցությունը: Դա է պատճառը, որ զգալիորեն մեծ է հասարակական և սոցիալական պայմանների ազդեցությունը նորամուծական զարգացման վրա, ինչն անհրաժեշտ է առավելագույնս հաշվի առնել այդ ուղղությամբ համապատասխան մոտեցումների մշակման ժամանակ:

Ժամանակից պայմաններում նորամուծական զարգացումը մրցակցային առավելությունների հիմքն է, որից օգտվում են ինչպես խոշոր կորպորացիաները, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկությունները: Միևնույն ժամանակ, նորամուծական զարգացումը պահանջում է սոցիալական գործոնների լիարժեք իրացում, ինչը հնարավոր է բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի առկայության դեպքում: Գիտելիքահենք տնտեսության կայացման արդի պայմաններում որոշակիորեն փոխվում են նորամուծական գործունեության կառավարնան ձևերն ու եղանակները, մշակվում են ժամանակակից գործիքներ ու մեխանիզմներ, ստեղծվում են նոր ինստիտուտներ և ներդրվում են կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման լծակներ: Դա, անշուշտ, պահանջում է նոր մոտեցում ցուցաբերել տնտեսության նորամուծական զարգացման հեռանկարների հանդեպ:

Միջազգային ինտեգրացիոն հարաբերությունների զարգացման և մրցակցության խորացման ներկա պայմաններում նորամուծական զարգացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում առանձնակի կարևորություն է ստանում: Դա պահանջում է ստեղծագործ և գիտատար գործունեության խթանում՝ միտված նորամուծությունների արդյունավետ կիրառմանը: Հայաստանի Հանրապետությունում նորամուծական գործունեության առանձնահատկությունների բացահայտմանը, դրա վրա ազդող բազմաբնույթ գործոնների գնահատմանը, դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված վերջին տարիներին իրականացված հետազոտությունները զգալիորեն նպաստեցին տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը: Այդուհանդերձ, ներկայումս խիստ արդիական են նորամուծական զարգացման պետական խթանման,

համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման, կլաստերների ստեղծման և զարգացման, փոքր և միջին ձեռնարկություններում նորամուծությունների կիրառման հետ կապված հիմնախնդիրների համակողմանի վերլուծությանն ու լուծման մոտեցումների մշակմանն ուղղված հետազոտությունները: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի *հրատապությունն ու արդիականությունը:*

<u>Հիմնախնդրի մշակվածության աստիճանը:</u> Չնայած այս ուղղությամբ գիտական աշխատանքների և հոդվածների առկայությանը, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում նորամուծությունների սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները համակողմանի և համակարգված կերպով ուսումնասիրված չեն: Քննարկվող թեմայի հետ կապված առանձին խնդիրներ դիտարկված են Ժ. Ֆ. Շումպետերի, Տ. Բ. Վեբլենի, Թոֆլեր Էլվին, Ա. Ա. Բովինի, Պ. Ն. Զավլինի, Դ. Ի. Կոկուրինի, Վ. Պ. Տրետյակի, Ռ. Ա. Ֆատխուդինֆովի, Մ. Յու. Շերեշևայի, Ս. Վ. Ռատների, Յու. Յակովեցի, Մ. Կաստելսի, Ռ. Մ. Նիժեգորոդցևի, Լ. Ա. Վորոնինայի, Գ. Ի. Վարդանյանի և այլ հեղինակների աշխատություններում: Մեր կողմից կատարված հետազոտության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ փորձ է արվել հիմնավորել տեսական հետազոտությունների կիրառելիության և համապատասխանության հիմնահարցերը ՀՀ-ում՝ նպատակ հետապնդելով բացահայտել ՀՀ նորամուծական համակարգի կայացման սոցիալական և տնտեսական խնդիրները՝ շեշտադրելով մարդակենտրոն զարգացման տեսլականը: Գնահատվել է ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման ներուժը և մշակվել են դրա խթանման մոտիվացիոն համակարգերն ու միջոցները:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել նորամուծական զարգացման տեսական հիմքերը՝ ինստիտուցիոնալ և տնտեսական պարադիգմաների համատեքստում,

- վերլուծել նորամուծությունների զարգացման արդի պայմաններն ու առանձնահատկությունները,
- հետազոտել փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման հիմնական բնութագրիչներն ու նախադրյալները,
- գնահատել մարդկային գործոնի դերը նորամուծությունների իրականացման գործում և վերլուծել դրա մոտիվացիոն համակարգի առանձնահատկությունները,
- հետազոտել կլաստերների նշանակությունը նորամուծական զարգացման համատեքստում,
- ուսումնասիրել փոքր և միջին ձեռնարկություններում նորամուծական գործունեության պետական աջակցության մոտեցումները և մշակել դրանց բարելավման ուղիները,
- բացահայտել նորամուծական կլաստերների ձևավորման առավելությունները փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական գործունեության զարգացման գործում,
- մշակել տնտեսության կլաստերացման պայմաններում կազմակերպությունների նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատմանն ուղղված տեսամեթոդական և գործնական լուծումներ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ կազմակերպություններն են, իսկ առարկան՝ նորամուծական զարգացման առանձնահատկությունները և դրա արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառների, մասնավորապես, նորամուծական տնտեսության, կառավարման, փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնահարցերին առնչվող հայրենական և արտասահմանյան գրականությունը այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային, գրաֆիկական վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- բացահայտվել է բարոյական մոտիվացիայի ազդեցությունը նորամուծական գործունեության խթանման վրա, գնահատվել է տնտեսության նորամուծական զարգացման գործում մարդկային կապիտալի դերը և ներկայացվել են դրա զարգացմանն ուղղված առաջարկություններ,
- կազմակերպությունների նորամուծական զարգացման գործում կլաստերների դերի գնահատման արդյունքում մշակվել են դրանց շրջանակներում ինտեգրացիոն փոխգործակցության արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները,
- մշակվել են փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական գործունեության ուղղությունները և ներկայացվել են առաջարկություններ նորամուծութունների խթանմանն ուղղված պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- առաջարկվել է կազմակերպությունների նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդաբանություն և գնահատվել է պետական խթանման տնտեսական նպատակահարմարությունը:

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները, որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

Կազմակերպությունների նորամուծական զարգացման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություններ հանրապետությունում նորամուծությունների խթանման համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին

տարիներին ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա: Դրանց գործնական կիրառումը, մեր կարծիքով, թույլ կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի կազմակերպությունների նորամուծական գործունեության արդյունավետության բարձրացման հետ կապված խնդիրների լուծմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքում ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման, նորամուծությունների զարգացման և այդ ուղղությամբ պետական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և իրականացման ընթացքում: Կատարված վերլուծության արդյունքները, եզրակացություններն ու առաջարկությունները, ինչպես նաև հետազոտության արդյունքում մշակված մոտեցումներն ունեն կիրառական բնույթ և կարող են օգտագործվել նորամուծական զարգացման քաղաքականության մեջ ինչպես միկրո, այնպես էլ մակրո մակարդակով: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նորամուծական զարգացման հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար:

ԳԼՈՒԽ 1 ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Նորամուծությունների տեղը և դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում

Շուկայական հարաբերություններին անցման փուլում հատկապես մեծ նշանակություն է ստանում տնտեսական առաջնթացի ապահովման և զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների և պայմանների ստեղծումը, ինչը հնարավորություն կտա տնտեսական գործունեության ընդլայնման միջոցով ապահովել ցանկալի արդյունքներ: Անշուշտ, այս համատեքստում հատկապես կարևորվում է այնպիսի միջոցների կիրառումը, որոնք տնտեսավարող սուբյեկտների համար կապահովեն մրցակցային առավելություններ և բարենպաստ շուկայական դիրք: Դրանց շարքում հատկապես առանձնանում են նորամուծությունները, որոնք տնտեսական զարգացման ներկա փուլում ձեռք են բերել առանձնահատուկ նշանակություն և ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ միկորմակարդակում հանդիսանում են տնտեսական զարգացման կարևոր գործիքներից մեկը:

Ընդհանուր առմամբ, նորամուծությունների խթանումը պետության տնտեսական քաղաքականության առանցքային ողղություններից է, քանի որ ժամանակակից պայմաններում գիտատեխնիկական զարգացման արդյունքների և տեխնոլոգիական նվաճումների կիրառումը կարևոր պայման է հանդիսանում խորացող մրցակցությանը դիմագրավելու համար: Պետք է նշել, որ նորամուծական զարգացումն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր բնագավառները, որոնք գտնվում են միմյանց հետ սերտ փոխկապակցվածության պայմաններում: Ընդ որում, առանձին ոլորտներում ձախողումները կարող են բացասաբար անդրադառնալ ընդհանուր տնտեսական համակարգի գործունեության վրա՝ հանգեցնելով վերջինիս արդյունավետության անկմանը: Միևնույն ժամանակ, նորմուծությունների զարգացումը ենթադրում է համապատասխան սոցիալական պայմանների ստեղծում, որը տնտեսական բաղադրիչի հետ միասին հանդես է գալիս որպես կարևոր գործոն:

Տնտեսության նորամուծական զարգացման տեսանկյունից, ակնհայտորեն, կարևորվում են հատկապես փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք առանցքային

դերակատարում ունեն շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովման հարցում: Տնտեսության գիտատար զարգացումն, անշուշտ, պահանջում է թողարկվող ապրանքների ու ծառայությունների որակական հատկանիշների շարունակական կատարելագործում և տնտեսական գործունեության ճկունության ապահովում, ինչը փոքր և միջին ձեռնարկությունների հիմնական մրցակցային առավելություններից է: Հետևաբար, նորամուծական գործունեությունը հատկապես կարևորվում է տվյալ ոլորտում, քանի որ, մի կողմից, դրա զարգացման համար առկա են բավարար նախադրյալներ և, մյուս կողմից, այն հատկապես անհրաժեշտ է դրանում գործող սուբյեկտների համար՝ շուկայական կանյուկտուրայի փոփոխությունների և նոր տնտեսական հարաբերությունների պահանջներին հարմարվելու և բավարարելու համար:

Հարկ է նշել, որ նորամուծական գործունեությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ գործընթացի կառավարման ժամանակ: Մասնավորապես, նորամուծական արտադրություններում իրականացվող ծախսերի հիմնական մասը բաժին է ընկնում թողարկվող ապրանքների առաջին խմբաքանակին, իսկ դրան հաջորդողներն համեմատաբար քիչ ծախսատար են: Այսպես, տպագիր գրքի թվայնացումը բավականին ծախսատար է, սակայն դրա էլեկտրոնային տարբերակի կրկնօրինակումը մեծ ծախսեր չի պահանջում: Այսինքն, այս դեպքում գործում է մասշտաբի էֆեկտը, ինչը պետք է հաշվի առնել նորամուծությունների ներդրման և այդ ուղղությամբ ծախսերի իրականացման ժամանակ: Ի դեպ, նույն տրամաբանությունը գործում է գերհզոր համակարգիչների, «խելացի» հեռախոսների և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված այլ ապրանքների արտադրության նպատակով իրականացվող ծախսերի դեպքում: Հետևաբար, կարող ենք պնդել, որ նորամուծությունների արդյունքում ստեղծվող ապրանքների համար գործում է աճող եկամտաբերության օրենքը, համաձայն որի արտադրանքի թողարկման ծավալների աճին զուգընթաց սահմանային ծախսերը նվազում են: Այս տեսանկյունից, նորամուծությունների և բնական մենաշնորհների միջև առկա են որոշակի նմանություններ՝ ծախսերի կառուցվածքի առումով:

Ընդհանուր առմամբ, նորամուծական ապրանքերի ծախսերի կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (գծապատկեր 1), որտեղ LRAC-ն և LRMC-ն

համապատասխանաբար միջին և սահմանային ծախսերն են երկարաժամկետ հատվածում: [1]



Գծապատկեր 1. Նորամուծական ապրանքների ծախսերի փոփոխությունը երկարաժամկետ հատվածում

Միաժամանակ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ եթե բնական մենաշնորհի դեպքում մասշտաբից էֆեկտն ապահովվում է խոշոր ձեռնարկությունների կողմից, ապա նորամուծական զարգացման պայմաններում նման դերակատարում իրականացնում են փոքր և միջին սուբյեկտների կողմից՝ նոր տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ բարձր հակվածության և գործունեության ճկունության հաշվին: Հետևաբար, խոշոր ձեռնարկությունների կտրվածքով մասշտաբից էֆեկտի որպես առավելության դիտարկումը ներկա փուլում այլևս արդիական չէ, քանի որ այն նորամուծական զարգացման պայմաններում դրսևորվում է նաև փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում:

Իհարկե, անժխտելի է այն փաստը, որ խոշոր ձեռնարկությունները, տիրապետելով ֆինանսական, նյութական, կադրային և այլ մեծ ռեսուրսների, կարող են շուկայական միջավայրի վրա էական ներգործություն ունենալ: Սակայն պետք է նաև հաշվի առնել այն, որ փոքր և միջին ձեռնարկությունները նշված ռեսուրսների բացակայությունը փոխհատուցում են աշխատողների մոտիվացման բարձր մակարդակով ու

[1] Стрелец И. Сетевая экономика: учебник. М.: Эксмо, 2006г. Стр. 14

կազմակերպական կառուցվածքի ճկունությամբ: Ընդ որում, հատանշական է այն փաստը, որ ժամանակակից խոշոր կորպորացիաների առաջացումը տեղի է ունեցել նորամուծական գործունեությամբ զբաղվող փոքր և միջին ձեռնարկությունների հենքի վրա: Մասնավորապես, 1976 թվականին 91 հազար ԱՄՆ դոլար կապիտալով ստեղծվեց Apple computers-ը, որի վաճառքի ծավալները 1982 թվականին կազմեցին 583 մլն ԱՄՆ դոլար, իսկ արդեն 1981 թվականին IBM-ը ներկայացրեց միկրոհամակարգիչների իր սեփական տարբերակը, որն անվանվեց «անհատական համակարգիչ»: Դրանց ծրագրային ապահովումն իրականացվեց Բիլ Գեյթսի և Փոլ Ալենի կողմից, ովքեր գիտակցելով ծրագրային ապահովման միջոցների և, հատկապես, օպերացիոն համակարգերի զարգացման ներուժը, հիմնեցին Microsoft ընկերությունը: Ներկայումս այն ծրագրային ապահովման առաջատարն է աշխարհում, իսկ Բիլ Գեյթսը՝ ամենահարուստ մարդկանցից մեկը[2]: Ներկայացված օրինակը վկայում է այն մասին, որ փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում նորամուծական զարգացումը հսկայական ներուժ է իր մեջ պարունակում խոշորամսշտաբ ծրագրերի իրականացման համար:

Ժամանակից պայմաններում նորամուծական զարգացումը մրցակցային առավելությունների հիմքն է, որից օգտվում են ինչպես խոշոր կորպորացիաները, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկությունները: Միևնույն ժամանակ, նորամուծական զարգացումը պահանջում է սոցիալական գործոնների լիարժեք իրացում, ինչը հնարավոր է բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի առկայության դեպքում: Այդ իսկ պատճառով, նորամուծական զարգացման տեսամեթոդաբանական հիմքերի ուսումնասիրության հարցում հատկապես մեծ է ինտիտուցիոնալ տնտեսագիտության դերը, որի ներկայացուցիչներից Տորստեյն Վեբլեն (1857-1929), Ուէսլի Կլէյր Միտչելլը (1874-1948), Ջոն Կոմմոնսը (1862-1945) որոշակի ավանդ ունեն նշված հարցերի տեսական հիմքերի ուսումնասիրության գործում:

Ինստիտուցիոնալիզմի հետազոտության առարկան ոչ թե դասական տեսություն-ներում ուսումնասիրվող «տնտեսական» մարդն է, այլ նրա վարքագծի խթանները, որոնք ձևավորվում են սոցիալական, տնտեսական և ինստիտուցիոնալ պայմանների ազդեցությամբ և պայմանավորում են նորամուծական զարգացման ներուժը: Ինչպես նշում է Տ. Վեբլենը, դասական տեսություններում հետազոտության առանցքը ոչ թե

[2] Էլվին Թոֆլեր, Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Զանգակ, Եր., 2006թ. էջ 18-20

վարքագծի, այլ շուկայական մեխանիզմի առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Ըստ Վեբլենի, մարդը ղեկավարվում է երեք գլխավոր «բնազդով»՝ ժառանգական հակումներ, «լավ աշխատանքի» ձգտում, հետաքրքրասիրություն և աշխարհը ճանաչելու ցանկություն: Դրանք պայմանավորում են մարդկային վարքագծի շարժառիթները և իրացվում են որոշակի ինստիտուցիոնալ պայմանների առկայության դեպքում: Վեբլենի տվյալ դրույթը բնորոշում է տնտեսության նորամուծական զարգացման ռազմավարության էությունը, որը հիմնվում է դրա համար անհրաժեշտ խթանների ստեղծման վրա[3]:

Ջոն Կոմմոնսը, ի տարբերություն Տ. Վեբլենի, հիմնական շեշտադրումը կատարում է սոցիալ-իրավական ինստիտուտների վրա, համարելով, որ դրանք են հանդիանում տնտեսական հարաբերությունների սուբյեկտ, այլ ոչ թե անհատները: Հետևաբար, ուսումնասիրության առարկա պետք է դառնա անհատների, և ոչ թե կոլեկտիվի գործողությունները: Վերջիններս իրենցից ընդամենը ներկայացնում են տնտեսական գործունեության մասնակիցների հետաքրքրությունների մերձեցման ուղի: Նման տեսակետը, մեր կարծիքով, հատկապես արդիական և կարևոր է կլաստերներում միավորվող տնտեսավարող սուբյեկտների նորամուծական զարգացման մեխանիզմի մշակման համար, երբ պահանջվում է որոշել կլաստերի մասնակիցների միջև փոխադարձ կապերի ձևավորման կանոնները՝ հաշվի առնելով պարտավորությունների ու պատասխանատվության բաշխման, ինչպես նաև իրազեկվածության մակարդակը:

Ինստիտուցիոնալ կառուցվածքների հետազոտմանն է նվիրված ժամանակակից ինստիտուցիոնալ տեսության ներկայացուցիչներ Ա.Ալչյանի, Ջ. Բյուկենենի, Գ. Դեմսեցի, Տ. Էգգերտեսսոնի, Ռ. Ժոզների, Կ. Մենարի, Ռ. Քոուզի, Դ. Նորտի, Ս. Պեյովիչի, Մ. Օլսոնի, Օ. Ուիլյամսոնի և ուրիշների աշխատությունները:

Ժամանակակից ինտիտուցիոնալիզմի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ուսումնասիրում է ոչ թե առանձին անհատի վարքագիծը, այլ ինստիտուցիոնալ կառուցվածքները: Որպես հիմնավորում ներկայացվում է այն փաստարկը, որ անհատի տնտեսական հետաքրքրություններն ու նախասիրությունները ձևավորվում են ինտիտուցիոնալ միջավայրի ազդեցության պայմաններում: Այս դեպքում ինստիտուտները

[3] Веблен Т. Теория праздного класса. Пер с англ. М. Прогресс. 1984г. стр.55

հանդես են գալիս որպես հասարակական զարգացման արդյունք և ձև, որոնց շրջանակներում և մասնակցությամբ իրականացվում է տնտեսական գործունեությունը:

Ակնհայտ է, որ անմիջական կապ գոյություն ունի նորամուծական զարգացման տեսության և ինստիտուցիոնալիզմի միջև, քանի որ վերջինիս առանցքային դրույթներն առաջինի տեսամեթոդաբանական հիմքն են կազմում: Անշուշտ, բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրը նորամուծությունների իրականացման և զարգացման անհրաժեշտ պայման է հանդիսանում: Դա է հիմնական պատճառը, որ մեծ թվով հետազոտողների կարծիքով նորամուծական զարգացման տեսությունը ձևավորվել է XX դարում: Տվյալ ժամանակաշրջանում խիստ աճեց նորամուծությունների դերը հատկապես տնտեսական գործունեության զարգացման և մրցակցային առավելությունների ձեռք բերման գործում: Յու. Վ. Յակովեցն առանձնացնում է նորամուծական զարգացման երեք հիմնական փուլեր. [4]

- 1910-1930 թվականներ, որը բնութագրվում է տեսական հիմքերի ձևավորմամբ և համարվում է հիմքային նորամուծությունների ժամանակաշրջան,
- 1940-1960 թվականներ, երբ իրականացվում է առաջին փուլում ձևավորված հիմնարար նորամուծական գաղափարների դետալացումը և զարգացումը,
- 1970 թվականի կեսերից մինչ այժմ, որին բնութագրական է նորամուծական և տեխնոլոգիական զարգացման հեղափոխական թռիչքը:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ նորամուծական զարգացման հիմքը գիտատեխնիկական առաջընթացն է, որի դերն ու նշանակությունը հանգամանալից ուսումնասիրության է արժանացել նեոդասական և էվոլյուցիոն տեսության ներկայացուցիչների կողմից: Համաձայն որոշ տեսակետների, նորամուծական տեսության ձևավորման ակունքները հանգում են տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում ճգնաժամերի ընդհանուր տեսությանը: Վերջինիս հիմքերը դրվել են Մ. Ի. Տուգան-Բարանովսկու[5], Ն. Դ. Կոնդրատևի[6] կողմից և խորացվել են Ժոզեֆ Ֆ. Շումպետերի

[4] Яковец Ю.В. Эпохальные инновации XXI века. Ю.В. Яковец; Междунар. Ин-т П.Сорокина-Н.Кондратьева. М.: ЗАО «Издательство «Экономика», 2004г. стр. 19.

[5] Туган-Барановский М.И. Избранное. Периодические промышленные кризисы. История английских кризисов. Общая теория кризисов. М.:Наука- РОСС-ПЭН, 1997г. стр. 79

[6] Кондратьев Н.Д. Большие циклы конъюнктуры и теория предвидения. М.: Экономика, 2002г. стр. 214

նորամուծությունների տեսությունում[7]: Ժ Շումպետերն իր աշխատությունում բացահայտում է տնտեսական առաջընթացում ձեռներեց-նորարարի դերը՝ ուշադրության կենտրոնում պահելով փուլային տատանումների արդյունքում տնտեսության նորամուծական զարգացման օրինաչափությունների հետազոտությունը:

Ակնհայտ է, որ տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ փոփոխությունները սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր շարժիչ ուժերից են և առանցքային ազդեցություն ունեն տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության ու մրցունակության բարձրացման վրա: Դրանց հետ անմիջականորեն կապված է նորամուծական զարգացումը, որի արդյունքում արտադրողական ուժերը, տնտեսական հարաբերություններն ու տնտեսավարման ձևերը ենթարկվում են որակական փոփոխությունների: Ժ. Շումպետերի կողմից առանձնացվում են նորամուծությունների հինգ հիմնական տեսակներ, որոնք առանձին-առանձին կամ տարբեր համակցություններով կանխորոշում են տեխնոլոգիական հեղափոխությունը: Մասնավորապես, դրանք հետևյալներն են.

1. նոր հումքի օգտագործումը,
2. նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրումը,
3. արտադրության կազմակերպման ձևի և նյութատեխնիկական ապահովման մեխանիզմների փոփոխությունը,
4. որակական նոր հատկանիշներով օժտված ապրանքի արտադրությունը,
5. իրացման նոր շուկաների բացահայտումը:

Նման դասակարգման հիման վրա Ժ. Շումպետերի կողմից նորամուծությունը սահմանվեց որպես փոփոխություն՝ նոր ապրանքների ու ծառայությունների, արտադրական և տրանսպորտային միջոցների, տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման և օգտագործման նպատակով[8]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ու դրանց հետ ուղղակիորեն առնչվող ոլորտներում տեղի ունեցող գործընթացները վկայում են հետարդյունաբերական զարգացման փուլին անցման մասին: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ տեղի ունեցող

[7] Шумпетер Й.А. Теория экономического развития. М.: Эксмо, 2007г. стр. 96.
[8] Shumpter Josef A. Business Cycles.Theoretical, Historical and statistical Analysis of Capitalist Proces. N. Y., Vol. 1.2. 1939

արմատական փոփոխությունների ու որակական տեղաշարժերի վերաբերյալ մեկնաբանություններում չկա միակարծություն: Նշված փոփոխությունների արդյունքում ձևավորված տնտեսական համակարգը նկարագրելու համար օգտագործվում են նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «նոր տնտեսություն» (New Economy Stephen B. Shephard,[9] Kevin Kelly[10]), «ապագայի տնտեսություն», (J. Bradford De Long, A. Michael Froomkin)[11], «գիտելիքահենք տնտեսություն» (Գ. Վարդանյան[12], OECD (Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն)[13]), «թվային տնտեսություն», «տեղեկատվական, գլոբալ տնտեսություն»[14] և այլն:

Ամերիկացի տնտեսագետ Ռ. Կրոուֆորդը ժամանակակից հասարակության զարգացման հիմնական ուղղորդիչ համարում է գիտելիքը, որը հանգեցնում է նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների արտադրությանը և, որպես դրա հիմնական հետևանք՝ տնտեսական և սոցիալ-քաղաքական փոփոխությունների[15]: Իսկ Ֆ. Մախլուպի կարծիքով ժամանակակից տնտեսության ամենակարևոր ոլորտը գիտությունն է, որի յուրաքանչյուր բնագավառ կապված է տեղեկատվության արտադրության, կուտակման կամ տարածման հետ[16]: Դ. Բելը նշում է, որ այժմ ապրանքների և ծառայությունների արտադրությունն իր գերակա դիրքերը զիջել է հետազոտությունների անցկացմանը, կրթական համակարգի կազմակերպմանը և կյանքի որակի բարձրացմանը, որտեղ ներդրումներն ավելի մեծ չափով կախված են տեսական գիտելիքների ձեռքբերումից: Ժամանակակից հասարակությունը ենթադրում է ինտելեկտուալ այնպիսի դասի առաջացում, որի անդամները հանդես են գալիս որպես խորհրդականներ, փորձագետներ կամ տեխնոկրատներ[17]:

---

[9] Encyclopedia of New Economy, Wired , May 1998 www.hotwired.com/special/ene/

[10] Kevin Kelly , New rules for the New Economy, WIRED September, 1997, www. wired. Com /wired/5.09/newrules.html

[11] J. Bradford De Long, A. Michael Froomkin “The Next Economy” April 1997www.law.miami.edu

[12] Վարդանյան Գ. Ի. «Գիտելիքահենք տնտեսություն: Հնարավորություններ և մարտահրավերներ», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն էջ 10

[13] OECD. The knowledge-based Economy. Pariz 2006 p 9

[14] Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура” Под. Ред. О. И. Шкаратина М.: ГУ ВШЭ, 2000г. Стр. 63

[15] Crawford R. In the Era of Human Capital: The Emegence of Talent, Intelligence, and Knowledge as the Worldwide Economic Force and What It Means to Manegers and Investors/ R. Crawford. New York Harper Business, 1991. p. 4.

[16] Уэбстер Ф. Теории информационного общества/ Ф. Уэбстер; Пер. с англ. М. В. Арапова, Н. В. Малыьиной; Под. ред. Е. Л. Вартановой- М.: Аспект Пресс, 2004г. стр. 18

[17] Bell, D (1967)Notes on the Post-Industrial Society// The Public Interest No 7 p.102

Համաձայն Յու. Օսիպովի մոտեցման, նորամուծական զարգացման արդյունքում ի հայտ եկող որակները կանխորոշում են անցումը դեպի հետմոդեռն տնտեսություն, որի դրսևորման ձևերից մեկը, Ս.Վ. Ռենտերի կարծիքով, կյանքի բոլոր ոլորտներ տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ ներթափանցմամբ և տարածմամբ բնութագրվող գիտելիքների տնտեսությունն է[18]: Հետազոտելով գիտելիքների դերն ու նշանակությունը նորամուծական զարգացման և տնտեսական աճի ապահովման գործում, Բենուա Գոդենը գիտելիքի տնտեսությունը դիտարկում է որպես «հովանոցային» տնտեսակարգ, որը հնարավորություն է տալիս է հավաքել գիտության և նորամուծությունների ոլորտում գոյություն ունեցող գաղափարները, սկզբունքները, ինչպես նաև ցուցիչները մեկ հայեցակարգային համակարգում[19]:

Նորամուծական զարգացման արդի պայմանների համակարգային ուսումնասիրությանն են նվիրված նաև Մ. Կաստելսի հետազոտությունները: Ըստ վերջինիս, ժամանակակից տնտեսությանը հատուկ են այնպիսի հիմնարար բաղկացուցիչներ, ինպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և ցանցային կառուցվածքների միջոցով հասարակության վրա դրանց ազդեցությունը[20]: Համաձայն այս մոտեցման, տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակակից հասարակության զարգացման հիմնական մեխանիզմն են, որը հնարավորություն է տալիս իրացնել տեխնիկական հնարավորությունները և ապահովել տեղեկատվության արագ և արդյունավետ կուտակում, փոխակերպում և հաղորդում:

---

[18] Ратнер С.В. Методологические проблемы развития конкурентоспособных научно-инновационных сетей: организационно- экономическое и инструментальное обеспечение. С.В. Ратнер. Ростов-на- Дону: Издательство ЮНЦ РАН, 2009г. Стр. 101

[19] Goden B. The New Economy. What the Concept Owes to the OECD // Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №21. 2003a. Mode access: http://www.csiic.ca.
Goden B. Taking Demand Seriously: OECD and the Hole of users in Science and Technology Statistics // I Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №12. 2001. Mode access: http://www.csiic.ca. Goden B. Knowledge-Based Economy: Conceptual Framework or Buzzword? // Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №24. 2003b. Mode access: http://www.csiic.ca. Goden B. Technological Gaps: Quantitative Evidence and Qualitative Arguments // Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №23. 2003c. Mode access: http://www.csiic.ca.

[20] Кастельс М. Становление общества сетевых структур. Новая постиндустриальная волна на Западе.Анталогия (под ред. В.Л. Иноземцова) М. 1999г. стр. 494-505

Կարծում ենք, որ բոլոր տնտեսական համակարգերի բնականոն գործունեության և դինամիկ զարգացման հիմքը գիտատեխնիկական տեղեկատվության արդյունավետ կիրառումն է: Հատկապես գիտելիքահենք տնտեսությունում առավել ուժեղ է գիտության, տեխնիկայի և արտադրության միջև կապը, ինչն, ըստ Ռ.Մ. Նիժեգորոդցևի, վկայում է արտադրության նորամուծական զարգացման մասին[21]: Անշուշտ, զարգացման ապագա մոդելների հիմքը կազմում են ներկա փուլում իրականացվող գիտական հետազոտությունները, որոնք նորամուծական զարգացման անհրաժեշտ պայման են հանդիսանում ինչպես առանձին սուբյեկտների, այնպես էլ երկրի տնտեսության համար: Ավելին, գիտությունը հանդես է գալիս որպես յուրահատուկ արտադրողական ուժ, իսկ գիտական հետազոտությունների և մշակումների արգասիք հանդիսացող գիտելիքները՝ տնտեսական աճի առանցքային գործոն:

Այսպիսով, գիտելիքահենք տնտեսության կայացման արդի պայմաններում որոշակիորեն փոխվում են նորամուծական գործունեության կառավարման ձևերն ու եղանակները, մշակվում են նորամուծական զարգացման կառավարման նոր գործիքներ ու մեխանիզմներ, ստեղծվում են նոր ինստիտուտներ և ներդրվում են տնտեսական սուբյեկտների նորամուծական ակտիվության աջակցության և խթանման լծակներ: Դա, անշուշտ, պահանջում է նոր մոտեցում ցուցաբերել տնտեսության նորամուծական զարգացման հեռանկարների հանդեպ: Համաձայն Յու.Վ. Յակովեցի, ցանկացած տնտեսություն կարող է զարգանալ միայն նորամուծությունների հիման վրա՝ հիմնարար և նորամուծությունները բարելավող կլաստերների միջոցով[22]:

Պետք է նաև նշել, որ նորամուծական զարգացումը կապված է որոշակի ռիսկերի հետ, ինչով պայմանավորված տվյալ գործընթացի կառավարման գործուն մեխանիզմների մշակման անհրաժեշտություն է առաջանում: Դրանք պետք է ուղղված լինեն գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վրա հիմնված տնտեսության մրցունակության բարձրացմանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նաև հաշվի առնել զարգացման ներկա փուլի առանձնահատկությունները, երբ նանոտեխնո-

[21] Нижегородцев Р.М., Никитенко С.М. Эффективные механизмы модернизации и инновационного развития экономики (теория и практика). Р.М. Нижегородцев, С.М. Никитенко. Кемерово: ООО «Сибирская издательская группа». 2010г. стр. 29

[22] Яковец Ю.В. Эпохальные инновации XXI века. Ю.В. Яковец; Междунар. Ин-т П.Сорокина-Н.Кондратьева. М.: ЗАО «Издательство «Экономика», 2004г. стр. 81

լոգիաների, գլոբալ տեղեկատվական ցանցերի, բիոտեխնոլոգիայի և այլընտրանքային էներգիայի առկայությունը լիովին նոր որակ են հաղորդում տնտեսական զարգացմանը:

Պետք է նշել, որ տնտեսության նորամուծական զարգացման հիմնական բաղադրիչներից են հանդիսանում ազգային նորամուծական համակարգերը (ԱՆՀ), որոնք ինստիտուցիոնալ տեսակետից նոր տեխնոլոգիաներում և արտադրանքում մարմնավորված գիտելիք ստեղծող և հաղորդող փոխկապակցված ինստիտուտների համախումբն է[23]: Ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ձևավորումը, ինչը նորամուծական տնտեսության զարգացման հիմնաքարն է, ուղղակիորեն կախված է պետության ակտիվ քաղաքականությունից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ոլորտը բավականին ծախսատար է և պահանջում է մեծ ներդրումներ, հետևաբար նաև ենթադրում է պետության կողմից ներդրումների իրականացում կամ բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծում: Մյուս կողմից, վերջինս դինամիկ կերպով զարգանում է պետության կողմից խիստ սահմանափակված միջամտության դեպքում: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորումն ուղղակիորեն հանգեցնում է տնտեսական արդյունավետության բարձրացմանը, որն, իր հերթին, նախադրյալներ է ստեղծում նորամուծությունների ոլորտի զարգացման համար: Այդ մասին է վկայում նաև Պորտերի «տեխնոլոգիական խզվածքի» տեսությունը, համաձայն որի յուրաքանչյուր երկիր ձգտում է ավելի շուտ նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ ներդնել տնտեսության տարբեր ճյուղերում և դրանով իսկ համեմատական առավելություն ստանալ այլ երկրների նկատմամբ[24]:

Պայմանավորված այն հանգամանքով, որ հատկապես ճգնաժամային փուլերում պետությունները բախվում են սպառման ծավալների կրճատման հետ, կարծում ենք, տրամաբանական է ազգային տնտեսության մասշտաբով նորամուծությունների զարգացումը: Այն այլ հավասար պայմաններում հանգեցնում է արտադրական ծախսերի էական կրճատման, արտադրանքի որակական հատկանիշների բարձրացման և, դրանով իսկ, հնարավորություն տալիս երկրներին որոշակի հարաբերական մրցակցային առավելություններ ձեռք բերել մյուսների նկատմամբ:

---

[23] Яковлева Н.В. Структурные и институциональные условия инновационного развития региональных промышленных систем. Экономическая наука современной России, 2009г. №3(46)

[24] Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան -Երևան «ԱՌՏ» 2002թ. էջ 69

Ամփոփելով, պետք է նշել, որ տնտեսական զարգացման ներկա փուլն առանձնանում է գիտելիքի և տեղեկատվական ռեսուրսների լայնամասշտաբ օգտագործմամբ, որի արդյունքում ձևավորվում է զարգացման սկզբունքորեն նոր մոդել: Վերջինիս արդյունավետ գործունեությունը կարող է ապահովվել միայն համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի պայմաններում, որը գիտելիքահենք տնտեսության կայացման երաշխիք է: Եթե նախկինում գլխավորը և որոշիչը արդյունա-բերական կարողություններն ու ֆիզիկական կապիտալն էին՝ զերծ սոցիալական և հոգևոր արժեքներից, ապա ներկայումս որպես այդպիսին հանդես է գալիս մարդկային կապիտալը: Այն, իր հերթին, ձևավորվում է որոշակի ինստիտուցիոնալ միջավայրում՝ իր վրա կրելով հասարակական բոլոր ինստիտուտների ազդեցությունը: Դա է պատճառը, որ զգալիորեն մեծ է հասարակական և սոցիալական պայմանների ազդեցությունը նորամուծական զարգացման վրա, ինչն անհրաժեշտ է առավելագույնս հաշվի առնելայդ ուղղությամբ համապատասխան մոտեցումների մշակման ժամանակ: Նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

1.2 Նորամուծական զարգացման սոցիալական պայմանները

Նորամուծական զարգացումը հանդիսանում է ժամանակակից տնտեսության հիմնական գերակայություններից, որը յուրահատուկ խթան է գործարար ակտիվության համար և հիմնված է մտավոր կապիտալի ու արտադրության գործոնների նորովի համադրման վրա: Այն ոչ միայն տնտեսության մրցունակության հիմքն է, այլ նաև ստեղծում է պայմաններ անհատի բազմակողմանի զարգացման համար՝ ստեղծագործական ինքնահիրացման և մարդկային կապիտալում ներդրումների իրականացման միջոցով: Նորամուծությունները հանդես են գալիս նաև որպես նոր որակի տնտեսական աճի քաղաքականության կարևոր միջոց և տնտեսության հիմնական շարժիչ ուժ: Նորամուծական տնտեսությունն էականորեն տարբերվում է ավանդականից և իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների նոր տեսակ, որոնք ծագում են արտադրության գործընթացում դրա մասնակիցների միջև:

Նորամուծական կառավարումն իրենից ներկայացնում է գործունեության յուրահատուկ ոլորտ, որում օգտագործվում և իրենց գործնական կիրառումն են ստանում սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի, ինչպես նաև գիտության այլ ուղղությունների ձեռքբերումները: Կազմակերպության զարգացումը հնարավոր է դառնում մարդու կողմից առաջ քաշվող մտավոր գաղափարների կյանքի կոչման արդյունքում, որի հիմնական նպատակն է շահութաբերության մակարդակի բարձրացումը և կապիտալի կուտակման հնարավորությունների ընդլայնումը: Այն տեղի է ունենում արտադրողականության աճի և աշխատանքի որակի բարձրացման հաշվին, ինչի արդյունքում ստեղծվում են նախադրյալներ նոր տիպի տնտեսության զարգացման համար: Այս տեսանկյունից, նորամուծական կառավարումը կոչված է ապահովելու նման բարդ գործընթացի կազմակերպումը՝ համապատասխան գիտական մոտեցումների կիրառմամբ:

Գաղտնիք չէ, որ տնտեսական զարգացման ներկա փուլում գիտությունը դարձել է կարևոր արտադրողական ուժ, ինչը ենթադրում է վերջինիս և տնտեսության սերտ փոխհամագործակցություն և գիտության նվաճումների առևտրայնացում: Հատկանշական է այն հանգամանքը, որ ներկայումս արտադրողական ուժերի կառուցվածքում որոշիչ դերակատարում ունեն ոչ այնքան արտադրության միջոցներն ու աշխատուժը, ինչքան օգտագործվող նյութերը, սարքավորումները, տեխնոլոգիաները, նոու-հաուն և այլ ոչ նյութական ակտիվները[25]: Աստիճանաբար փոփոխվում են նաև արտադրական հարաբերությունները, ինչի հետևանքով աշխատանք և կապիտալ գործոնների դասական հակամարտությունը դադարում է լինել առաջնային: Առավել կարևոր նշանակություն են ստանում գիտելիքի և ոչ նյութական ակտիվների վրա հիմնված մրցակցային տնտեսական հարաբերությունները:

Նորամուծական գործընթացը հանդիսանում է գիտատեխնիկական առաջընթացի տարրերից, որը հիմնված է կազմակերպության կենսագործունեության մեջ նպատակասլաց փոփոխությունների իրականացման վրա և ստեղծում է նախադրյալներ զարգացման առավել բարձր որակական մակարդակի անցման համար: Ինչպես

[25] Захаров Н.И. Стратегические горизонты модернизации России (политико-экономический аспект). Режим доступа: URL: http: //www. rkpr. inion. ru/ras/ view /publication/ general. html?id=100020853

յուրաքանչյուր գործընթաց, նորամուծությունները ևս զարգացման ընթացքում անցնում են որոշակի փուլեր, որոնց համախումբն իրենից ներկայացնում է նորամուծական պարբերաշրջանը (տես գծապատկեր 2):

Ընդհանուր առմամբ, շուկայական տնտեսության պայմաններում կարևոր նշանակություն է ստանում յուրաքանչյուր անհատի ստեղծագործական մտածողության ձևավորումը և դրա հիման վրա նորամուծական գործունեության իրականացումը, ինչն, ինքնահիրացման լայն հնարավորություններ է ստեղծում: Ինչպես նշում է Ա. Մասլոուն, նման անձինք համեմատաբար քիչ են խուսափում անորոշությունից և հակված են դիմել ռիսկի: Նրանք չեն արհամարհում անորոշությունը, սակայն չեն էլ կարծում, որ անհայտը վաղուց հայտնի է և անիմաստ է զբաղվել դրա հետ կապված խնդիրների լուծմամբ[26]:



Գծապատկեր 2. Նորամուծական գործընթացի հիմնական փուլերը

[26] Маслоу А. Мотивация и личность. 3-е изд. Пер. с англ. - СПб.: Питер, 2010г. стр. 224

Մեր կարծիքով, անհատի ստեղծագործական հակումների իրացումը ևս մեծապես պայմանավորված է իրեն շրջապատող միջավայրով և սոցիալական պայմաններով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ սահմանափակ ռեսուրսների նորամուծական օգտագործման այլընտրանքային եղանակների ընտրությունն, որպես կանոն, իրականաց-վում է բացառապես որոշակի սոցիալական խմբերի փոխգործունեության արդյունքում: Միաժամանակ, ակնհայտ է ընտանիքի՝ որպես ժամանակակից տնտեսական սոցիումի առաջնային բջջի դերն ու ազդեցությունը: Այն անհնար է գերագնհատել, քանի որ դրա շրջանակներում և համապատասխան ինստիտուտների ազդեցության տակ են տեղի ունենում նորամուծական մղումների հիմք հանդիսացող կրթական և դաստիարակչական գործընթացները:

Փաստորեն, սոցիալական փոխգործունեության ոլորտում են ձևավորվում ժամանակակից հասարակության ստեղծագործական հարաբերությունները, որտեղ առավել բացահայտ են հանդես գալիս մարդկային կապիտալի «սեփականատերերի» մոտիվներն ու նպատակները: Ընդհանուր դրույթների և մշակումների տեսակետից, որպես խնդրի հետազոտման դիատանկյուն, հարկ է առանձնացնել տնտեսական նորամուծությունների զարգացումը կանխորոշող առավել առանցքային սոցիալ-տնտեսական խթանների շրջանակը:

Պետք է նկատել, որ նորարական գաղափարների տարածումն ու ընդլայնված վերարտադրություն ապահովող սոցիալական ինստիտուտների ձևավորումը մեծ ներդրումներ են պահանջում: Ժամանակակից տնտեսությանն այլևս պետք չէ «գիտելիքն առանց ըմբռնման», այժմ պահանջվում է տնտեսական ապրելակերպի խորը ընկալում և ստեղծագործական զարգացման ուղիների մշակում: Մյուս կողմից, լիարժեք ստեղծագործական մտածելակերպի ձևավորումը պետք է զուգակցել սեփականության արդարացի համակարգով, որն իրենից ներկայացնում է որոշակի սոցիալ-տնտեսական ինստիտուտների համախումբ: Ինչպես նշում է Հ. Հեգելը, մարդկային գործունեության մտահղացումը, անհատի ինքնահաստատման ձգտումը, ստեղծագործական միտքն ու հոգին կարող են զարգանալ միայն այն դեպքում, եթե մարդը հնարավորություն ունենա ինքնուրույն տնօրինել ինչպես իր հոգեկան-հոգևոր ներուժն ու գիտելիքները, այնպես էլ ստեղծագործական-աշխատանքային գործունեության օբյեկտներն-արտադրանքները: Հենց հոգու ներքին ազատությունն է մարդուն դարձնում հիրավի ազատ, ինչպես

տնտեսական, այնպես էլ ամբողջ հասարակության իմաստով[27]: Կարծում ենք, որ նշված դրույթները ներկայումս առավել քան արդիական են, քանի որ ժամանակակից տնտեսական համակարգում գիտելիքների նկատմամբ մարդու իրավունքները դառնում են սեփականության համակարգի հիմք:

Հասարակական հարաբերություններում անհատի վարքագիծը, լայն առումով, ածանցվում է պատմական, սոցիալական և բարոյահոգեբանական պայմաններից: Ցանկացած կազմակերպության համար առանցքային նշանակություն է ձեռք բերում անձնակազմի վարքագծի այնպիսի ուղղորդումը, որը կբխի սեփական շահերից: Դրանով պայմանավորված, առանձնահատուկ ուշադրության է արժանի բարոյական մոտիվա-ցիայի համակարգը, որն իրենից ներկայացնում է նորամուծական զարգացումն ուղղորդող յուրահատուկ գործոն:

Տնտեսական զարգացման ժամանակակից փուլում կարևոր նշանակություն է ձեռք բերում ազատական արժեքներին դավանող, ստեղծագործական հակումներ դրսևորող քաղաքացիական հասարակության ձևավորումը: Գիտելիքահենք տնտեսության պայմաններում, երբ տեղեկատվական հասարակությունում հարաբերությունները ձևավորվում են առավելապես հորիզոնական կապերի միջոցով, հասարակական ուշադրության մասին վկայող գործոնները կարող են լավագույն միջոց հանդիսանալ այդ հարաբերությունների ցանկալի սցենարներով ուղղորդման համար:

Անշուշտ, հասարակական հարաբերությունների անբաժանների և հիմնական մասն են կազմում տնտեսական հարաբերությունները, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ բարոյական խթանների կիրառումը կարող է նպաստել նաև տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, բարոյական մոտիվացիայի համակարգը պետք է դիտարկել ոչ թե որպես նյութական մոտիվացիային այլընտրանք, այլ դրանց փոխլրացնող: Այն ամրապնդում է կոլեկտիվ մտածելապերպը և ձևավորում սերտ կապվածություն

[27] Ինչպես նշում է Հ. Հեգելը «Քանի որ սեփականությունում իմ կամքը, որպես անձնական կամք, առավել ևս, եզակի կամքը ինձ համար դառնում է անկողմնակալ, ապա սեփականությունը ստանում է *մասնավոր սեփականության* բնույթ, իսկ ընդհանուր սեփականությունը, որը իր բնույթով կարող է լինել մասնավոր տիրապետության տակ, ստանում է ընդհանրության *քանդողի* սահմանում, որում իմ բաժնի թողելը իրենք իրեն քմահաճականություն;... Սեփականությունում իմ կամքը անձնական է, առկա է այդ ինչ որ բանը, հետևաբար, սեփականությունը դառնում է այդ կամքի անձնականը: Քանի որ ես իմ կամքին սեփականության միջոցով տալիս եմ իրական կեցություն, ուստի սեփականությունը նույնպես պետք է որոշվի ինչպես այն, իմը: Դրանում է կայանում *մասնավոր սեփականության* անհրաժեշտության մասին կարևոր ուսմունքը»: (Гегель Г.В.Ф. Философия права. - М.: Мысль, 1990. - с. 104,105).

կազմակերպության և առանձին աշխատողների նպատակների միջև: Ինչպես նկատում է Ա. Նեդչենկոն, տնտեսական նորամուծությունների սոցիոլոգիան անմիջականորեն կապված է համապատասխան լոկալ (ստեղծագործ խմբեր) և ազգային (ստեղծագործ խավ) համագործակցություններում միավորված ստեղծագործ անհատականությունների ձևավորման և սոցիալականացման խնդրի հետ[28]:

Ընդհանրացնելով վերը նշվածը, կարող ենք պնդել, որ տնտեսական նորամուծությունների նկատմամբ ինտելեկտուալ կապիտալի սեփականատիրոջը մոտիվացնելը սոցիալ-տնտեսական ցանցերի և անմիջականորեն դրանց հետ կապված սոցիալական կապիտալի հիմնական գործառույթներից է: Ընդ որում, ոչ բոլոր սոցիալական ցանցերը կարող են դիտարկվել որպես այդպիսիք: Դրանց կիրառումն առանց մտադրության և մարդկային էներգիայի ոչ մի օգտակար (արժեքավոր, արդյունա-վետ) արդյունք չի ստեղծի, իսկ սոցիալական կապիտալը ոչ միայն չի գոյատևի, այլև կվերանա:

Ժամանակակից տնտեսական նորամուծությունների սոցիալական պահանջները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 2):



[28] Федченко А.А. Достойный труд и толерантность как инновационные составляющие рынка труда. Инновационное развитие экономики России: ресурсное обеспечение: Вторая Международная конференция; Москва, МГУ имени М.В. Ломоносова, Экономический факультет; 22-24 апреля 2009 г. Сборник статей: Том 1. Под ред. В.П. Колесова, J1.А. Тутова. М.: Издательство МГУ, 2009г. стр. 261.

Գծապատկեր 3. Նորամուծական զարգացման սոցիալական պահանջների համակարգը

Գծապատկեր 2-ում ներկայացված են նորամուծությունների զարգացման համար անհրաժեշտ սոցիալական պայմանները, որոնցից յուրաքանչյուրը բխում է նախորդից: Մասնավորապես, ցանկացած նորամուծություն, նախ և առաջ, ենթադրում է շարժառիթների որոշակի համակարգ, որոնք պետք է առկա լինեն յուրաքանչյուր կազմակերպության անձնակազմում: Այս տեսանկյունից, բացառություն չեն նաև փոքր և միջին ձեռնարկությունները, որոնցում շարժառիթների տարածման շղթան բավականին կարճ է, սակայն՝ ինտենսիվ: Դա պայմանավորված է նրանով, որ ինչքան փոքր է կազմակերպությունն, այնքան ակնառու է անձնակազմի յուրաքանչյուր անդամի շահերի բխելիությունը կազմակերպության գործունեության արդյունավետությունից: Եթե խոշոր կորպորացիաներում անձնակազմի որևէ անդամի անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքները կարող են և նկատելի չլինել, ապա փոքր և միջին ձեռնարկությունների պարագայում ցանկացած գործելաոճ, թե դրական, թե բացասական, անմիջականորեն ազդում է ինչպես ամբողջ կազմակերպության գործունեության, այնպես էլ նրա առանձին անդամների վարքագծի վրա:

Ընդհանուր առմամբ, խթանների առկայությունն այն կայուն հիմքն է, որի վրա ձևավորվում է ստեղծագործ մտածելակերպը: Անձնակազմի յուրաքանչյուր անդամ, գիտակցելով սեփական անձի կարևորությունը կազմակերպության նորամուծական զարգացման համատեքստում, պետք է իր գործունեությամբ նպատակադրվի նորարությանը: Նման բարոյահոգեբանական մթնոլորտում ստեղծագործ և ազատ մտածելակերպը սահուն կերպով վեր է ածվում տնտեսական մտածելակերպի: Այլ կերպ ասած, այդպիսի իրավիճակում տեղի է ունենում ստեղծագործ և տնտեսական մտածելակերպերի նույնականացում, ինչը կարող է իրականացվել միայն սեփականության իրավունքի առկայության պայմաններում: Միևնույն ժամանակ, տնտեսական հարաբերությունների զարգացումը պայմանավորում է սեփականության ինստիտուտի արդիականացման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է տալիս նորարարին վաստակել և իր ընտանիքի համար ապահովել արժանապատիվ կյանք: Ակնհայտ է, որ առանց նյութական կողմի, նորարարական մկրտումները անընդհատ անկում կապրեն, ինչն էլ բացասաբար կանդրադառնա նորամուծական զարգացման տեմպերի վրա: Հաշվի

առնելով վերոնշյալը, յուրաքանչյուր մակարդակի տնտեսավարող սուբյեկտ պետք է ճիշտ գնահատի իր սոցիալական կապիտալի ներուժը և քայլեր ձեռնարկի այն զարգացնելու և առավել լիարժեք օգտագործելու համար: Այս համատեքստում, ի լրումն նյութական խթանների, կարևոր նշանակություն են ստանում բարոյական խթանները, որոնք «շարժում» են նորարարի նեքին ազդակները: Յուրաքանչյուր ստեղծագործողի համար առաջնային են ոչ միայն նյութական խրախուսումները, այլ նաև սոցիալական ճանաչումն ու դերի բարձրացումը: Այս պայմանները պետք է դիտարկվեն որպես փոքր և միջին ձեռնարկությունների սոցիալական կապիտալի զարգացման հիմնասյուներ, ինչի ուսումնասիրությանն է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

1.3 Փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման առանձնահատկությունները

Գիտելիքի կուտակումը և տնտեսության մեջ դրա կիրառման շրջանակների շարունակական ընդլայնումն, անշուշտ, նորամուծական զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է հանդիսանում: Դրա նշանակությունը հատկապես մեծանում է տեխնոլոգիական առաջընթացի ներկա փուլում, երբ արտադրության ոլորտում գիտատեխնիկական զարգացման արդյունքների ներդրումն առաջանցիկ զարգացման հնարավորություն է ապահովում: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տնտեսության կառավարման համակարգի արդիականացումը ազգային տնտեսության նորամուծական զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն է: Միկրոմակարդակում այն ուղղակիորեն անդրադառնում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության վրա՝ նպաստելով նրա մրցակցային առավելությունների բարձրացմանը: Դա հատկապես ցայտուն կերպով է դրսևորվում փոքր և միջին ձեռնարկություններներում՝ պայմանավորված արտաքին գործոնների նկատմամբ դրանց զգայունության բարձր աստիճանով:

Գ. Բ. Կլեյների[29] կարծիքով, XXI դարասկզբին համաշխարհային տնտեսության վիճակը և զարգացումը պայմանավորող երեք հիմնական գործընթացները

[29] Клейнер Г.Б., Качалов Р.М., Нагрудная Н.Б. Системная парадигма в экономических исследованиях: стратегическое планирование кластеров. Стратегическое планирование и разви-

(հետխորհրդային ինստիտուցիոնալ վերափոխումներ, գլոբալիզացիա և կոգնիտիվիզացիա) պետք է հաշվի առնվեն ցանկացած մակարդակում գործող սուբյեկտների ռազմավարության մշակման ժամանակ: Ընդ որում, եթե առաջինը և երկրորդն իրենց մեջ պարունակում են որոշակի վտանգ և մարտահրավեր հայրենական ձեռնարկությունների համար, ապա երրորդը, ունենալով նորամուծական զարգացման հզոր ներուժ, կարող է թուլացնել մյուս երկուսի բացասական ազդեցությունը:

Նախկին վարչահրամայական համակարգի փլուզումը և դրանով պայմանավորված համակարգային փոփոխություններն ուղղակիորեն անդրադարձան տնտեսական գործունեության արտաքին և ներքին միջավայրի վրա, ինչի արդյունքում տնտեսավարող սուբյեկտների առջև ծառացան նոր մարտահրավերներ: Արտաքին միջավայրի անկայունությունը, որը հիմնականում պայմանավորված էր ձեռնարկությունների միջև ձևավորված ավանդական կապերի և հարաբերությունների խզմամբ, լուրջ հիմնախնդիրներ ստեղծեց այդ սուբյեկտների բնականոն կենսագործունեության ապահովման և շուկայական կոնյուկտուրայի փոփոխություններին օպերատիվ արձագանքման առումով: Ինչ վերաբերում է ներքին միջավայրի անկայունությանը, ապա այն հիմնականում հասարակական-տնտեսական հարաբերությունների վերափոխման հետևանք էր: Բավական է միայն հիշատակել սեփականության ինստիտուտի արմատական փոփոխությունը և դրա ուղղակի արդյունք հանդիսացող բազմաձև սեփականության առաջացումը, որը նոր որակ և բովանդակություն հաղորեց ընդհանուր տնտեսական և, մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեությանը: Նման պայմաններում առանձնահատուկ կարևորություն ստացավ նորամուծական զարգացումը, որը, կարելի ասել, նոր ձևավորվող տնտեսական կապերի և փոխհարաբերությունների օբյեկտիվ պահանջ էր: Որակական նոր բովանդակություն ձեռք բերած միջանձնային կապերն ու շփումները, ինչպես նաև գործատու-վարձու աշխատող փոխհարաբերությունները մոտիվացիայի համակարգի վերաիմաստավորման և արդիականացման անհրաժեշտություն էին ստեղծում: Ակնհայտ է, որ մրցակցային պայքարում սեփական դիրքերն ամրապնդելու և շուկայական միջավայրում հաջողություններ արձանագրելու համար ցակնացած կազմակերպության համար

тие предприятий: Тез. докл. и сообщ. 8- го Всерос. симп. Секция 1.М.:ЦЭМИ РАН, 2007г. стр.56-60.

առաջնային նանակություն ունեցող խնդիրներից է աշխատանքային կոլեկտիվում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը: Միանշանակ է, որ խնդիրն առավել սուր էր արտահայտվում հատկապես տնտեսության առանցքային բաղադրիչ հանդիսացող փոքր և միջին ձեռնարկություններում, քանի որ դրանք հարաբերականորեն նոր ինստիտուտ էին:

Հայտնի է, որ տնտեսական զարգացման ներկա փուլն առանձնանում է տնտեսական ինտեգրացիայի և գլոբալիզացիայի խորացման միտումներով, որոնք որոշիչ և առարկայական ներգործություն ունեն ազգային տնտեսությունների վրա: Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ գլոբալիզացիան ունի երկակի ազդեցություն հայրենական ձեռնարկությունների և, մասնավորապես փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների վրա: Այն, մի կողմից, ստեղծում է ռեսուրսների ներգրավման և գիտելիքի ու նորամուծությունների արագ փոխանցման լայն հնարավորություններ, իսկ մյուս կողմից՝ տնտեսական տարածքների ինտեգրման և շուկայի ընդլայնման հաշվին էապես սրում է մրցակցությունը:

Կոգնիտիվիզացիան, փոխելով ձեռնարկությունների հիմնարար հասկացությունների (ռեսուրսներ, գործառույթներ, վերարտադրական պարբերաշրջան) բովանդակությունը և արտադրության գործընթացի կազմակերպման ավանդական մոտեցումները, դրանց հաղորդում է նոր իմաստ: Հատկապես առանցքային նշանակություն են ստանում տնտեսության տեղեկատվայնացման մակարդակն ու կլաստերացումը (հանգուցավորում): Առաջինը, որպես ձեռնարկություններում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ զարգացման և կիրառման գործընթաց, թույլ է տալիս ավտոմատացնել արտադրության կազմակերպման ու իրականացման համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվության ձեռքբերման գործընթացը՝ դրանով իսկ ստեղծելով կազմակերպական ճկուն կառուցվածքների անհրաժեշտություն[30]: Միաժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաներն օժանդակում են տեղեկատվական ցանցերի ձևավորմանն ու տարածմանը, ինչն անհրաժեշտ պայմաններ է ապահովում

[30] Ратнер С.В. Методологические проблемы развития конкурентоспособных научно-инновационных сетей: организационно-экономическое и инструментальное обеспечение. С.В. Ратнер. Ростов-на- Дону: Издательство ЮНЦ РАН, 2009г. стр. 95

ցանցային էֆեկտների յուրացման համար[31]: Ի դեպ, այն հասանելի է ինչպես խոշոր կորպորացիաներին, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկություններին: Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների և ցանցային կառուցվածքների միջոցով նոր տնտեսության ձևավորումը հնարավորություն է տալիս փոքր, միջին և խոշոր կազակերպություններին սերտ համագործակցության մեջ գտնվել գիտության հետ[32]: Միավորվելով կլաստերներում, էմերջայնտության (անհամատեղելին միավորելով) հիման վրա հնարավոր է դառնում ապահովել նորամուծական զարգացման անընդհատությունը:

Տեղեկատվայնացման և տնտեսության կլաստերացման գործընթացներն առավել էական ազդեցություն են ունենում փոքր և միջին ձեռնարկությունների վրա: Վերջիններս, հանդիսանալով տնտեսական հարաբերությունների կարևոր սուբյեկտներից, պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն նորամուծական գործունեության արդյունավետության ապահովման համար: Միայն նման մոտեցման դեպքում է հնարավոր արտաքին և ներքին շուկաներում ապահովել մրցունակություն և զբաղեցնել նպաստավոր դիրքեր: Այս տեսանկյունից, փոքր և միջին ձեռնարկությունների կառավարումը, որպես որոշակի արդյունքներին հասնելու նպատակով համապատասխան տեխնոլոգիաների օգտագործմամբ օբյեկտի վրա ազդեցության գործընթաց, պետք է ուղղված լինի դրանց նորամուծական ակտիվության (որպես կառավարման օբյեկտ) խթանման մեթոդների և գործիքների կիրառմանը, ինչպես նաև նորամուծական զարգացման (որպես կառավարման սուբյեկտ) նպատակով համալիր և ամբողջական ռազմավարության մշակմանը:

Փոքր և միջին ձեռնարկությունները, որպես նորամուծական գործընթացների հիմնական մասնակիցներ, տնտեսության զարգացման գործում հանդես են գալիս, մի կողմից, որպես կառավարման օբյեկտ, իսկ, մյուս կողմից՝ որպես կառավարման սուբյեկտ: Առաջինը ենթադրում է նորամուծական գործընթացների ակտիվացմանն ուղղված պետական կարգավորման մեթոդների և գործիքների մշակում, իսկ երկրորդը՝ ազգային տնտեսության նորամուծական զարգացման ծրագրից բխող և նորամուծական ներուժի ձևավորմանն ու ընդլայնմանն ուղղված ռազմավարության մշակում:

---

[31] Воронина Л.А., Ратнер С.В. Научно-инновационные сети в России: опыт, проблемы, перспективы. - И.: ИНФРА-М. 2010. Стр. 201

[32] Кастельс М. Информационная эпоха, экономика, общество и культура: Пер. с англ. Под науч. ред. О.И. Шкаратана. М.: ГУ ВШЭ, 2000г. стр. 96

Արտաքին միջավայրի փոփոխականությունը և անորոշության խորացումն, անշուշտ, փոքր և միջին ձեռնարկությունների կառավարման համակարգի առջև դնում են նոր պահանջներ: Ակնհայտ է, որ այդ համակարգի կայունությունը և ամբողջականությունն երկարատև ժամանակահատվածում հնարավոր է ապահովել միայն կառավարման սուբյեկտի ճկունության և զարգացման ռազմավարության այլընտրանքային տարբերակների առկայության դեպքում: Մինչդեռ, փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում դա շատ հաճախ չի ապահովվում և, այդ առումով, նորամուծական տնտեսությանն անցումը շատ սուբյեկտների համար ստեղծում է մի շարք խնդիրներ, որոնցից գլխավորը ժամանակակից մենեջմենթի զարգացումն է: Այն պետք է միտված լինի նորամուծական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը, նորամուծական կապիտալի ձևավորմանը և արդյունավետ կիրառմանը: Կարևոր խնդիրներից է նաև կազմակերպչական այնպիսի մոդելների ներմուծումը, որոնք լավագույնս են բավարարում ոչ միայն շահույթն ավելագույնի հասցնելու, այլ նաև նորամուծությունների նկատմամբ պահանջարկի բավարարման հիման վրա նորամուծական երկարաժամկետ զարգացման նպատակներին:

Փոքր և միջին ձեռնարկությունները, որպես նորամուծական տնտեսության կառավարման օբյեկտ և սուբյեկտ, առավել զգայուն են արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունների նկատմամբ, ինչն, անշուշտ, սահմանափակում է նորամուծական զարգացման հնարավորությունները: Նորամուծական զարգացումը թելադրում է իր պահանջները՝ ենթադրելով արտաքին և ներքին միջավայրի փոփոխություններին նպաստող գործոնների հետազոտություն: Մասնագիտական գրականության մեջ որպես այդպիսիք դիտարկվում են մատակարարները, մրցակիցները, սպառողները, աշխատանքի շուկան, պետական կարգավորման մարմինները, օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, բնակչության մշակութային-կրթական մակարդակը, կազմակերպության փոխհարաբերությունները բնակչության հետ, քաղաքական և սոցիալական գործոնները, միջազգային իրավիճակը և գիտատեխնիկական առաջընթացի մակարդակը[33]: Ըստ էության, նշվածները կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր սուբյեկտի, այդ թվում նաև փոքր և միջին ձեռնարկությունների համար: Միևնույն

[33] Մենեջմենթ: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ (երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն),-Եր.:Տնտեսագետ 2009թ. էջ 74-79

ժամանակ, գիտատեխնիկական առաջընթացի ներկա փուլում, երբ մրցակցային առավելություններ են ձեռք բերում հիմնականում նորամուծական զարգացման ուղին բռնած կազմակերպությունները, որոշակիորեն փոխվում են նաև արտաքին և ներքին միջավայրի վրա ազդող գործոնները: Մեր կարծիքով, փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում դրանց դիտարկումն ահրաժեշտ է իրականացնել նորամուծական գործընթացի պարբերաշրջանների տրամաբանությունից ելնելով:

Նորամուծությունների հիմքում ընկած գաղափարները ձևավորվում են հետազոտությունների, մշակումների, մարքեթինգի և տեխնոլոգիական դիֆուզիաների տարբեր փուլերում[34]: Մասնավորապես, դրանցից կարրելի է առանձնացնել հետևյալները:

1. Տեխնիկայի և տեխնոլոգիաների կատարելագործմանն ուղղված հիմնարար հետազոտություններ, որոնք հանգեցնում են կազմակերպական և սոցիալ-տնտեսական նորամուծությունների: Դրանց համար խթան են հանդիսանում գիտության ու տեխնիկայի ինքնաբերական զարգացումները:

2. Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, որոնք ի թիվս այլ խնդիրների լուծման, խրախուսում են նաև ստեղծագործ աշխատանքը: Այս դեպքում խթան են հանդիսանում սոցիալ-տնտեսական նորամուծությունները: Պետք է նկատել, որ սա այն երևույթն է, երբ տեղի է ունենում ինքնազարգացում: Ստացվում է մի շղթա, երբ համակարգային նորամուծությունները նախադրյալ են հանդիսանում այլ նորամուծությունների համար, որոնք էլ, իրենց հերթին, հանգեցնում են նոր փոփոխությունների:

3. Կոնյուկտուրային փոփոխությունները և մրցակցային միջավայրի առանձնահատկություններ: Այս դեպքում առավել արդյունավետ է մրցակցային շուկայական կառուցվածքը, որը դրդում է տնտեսավարող սուբյեկտներին անընդհատ կատարելագործել կիրառվող տեխնիկան ու տեխնոլոգիան՝ դրանով իսկ խթան հանդիսանալով նորամուծությունների հանար:

Հիմնվելով վերոնշյալի տրամաբանության վրա՝ Վ. Նովիկովը նորամուծությունը ներկայացնում է հետևյալ հաջորդական փուլերով, այն անվանելով նորամուծական ցիկլ[35]:

---

[34] Скаржинский М.И. Рутины и инновации.Часть II. Проблемы новой политической экономии. 2005г.№ 2 .

[35] Новиков В.С. Инновации в туризме М.: ИЦ "Академия", 2007г. стр. 86

1. Նոր մտահաղացումների և գիտելիքների ստացում, որը հանգեցնում է նորամուծական գաղափարի ձևավորմանը:

2. Գաղափարի հարստացում և մշակում, որի արդյունքում ձևավորվում է նորամուծության մոդելը:

3. Մոդելի փորձարկում, որի արդյունքում բացահայտվում և վերացվում են թերությունները, ինչպես նաև կազմակերպվում են նորամուծության գործնական ներդրման նախապատրաստական աշխատանքները:

4. Նորամուծության գործնական փորձարկում, որի արդյունքում վերացվում են կիրառական բնույթի թերությունները:

5. Նորամուծության զանգվածային կիրառում:

6. Անկման փուլ, երբ սկսում է կիրառվել մեկ այլ նորամուծություն[36]:

Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ տնտեսական զարգացման ներկա պայմաններում առավել քան կարևորվում է նորամուծական գործընթացների կառավարման խնդիրների համակարգված ուսումնասիրությունը, ինչը փոքր և միջին ձեռնարկություններին հնարավորություն կտա լիարժեք օգտագործել նորամուծական տնտեսության առավելությունները:

Ինչպես արդեն նշվեց, նորամուծական զարգացման հիմքը նոր գաղափարներն ու մտահաղացումներն են: Հետևաբար, արտաքին միջավայրի վրա ազդող գործոնների շարքում առանցքային նշանակություն կարող են ունենալ տնտեսության զարգացման օբյեկտիվ պահանջներից բխող նորամուծական խթանները: Մասնավորապես, մրցակցային միջավայրը պահանջում է անընդհատ կատարելագործել կիրառվող տեխնիկան ու տեխնոլոգիաները, բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև արտադրել մրցունակ արտադրանք: Այս տեսանկյունից, նորամուծական ցիկլի առաջին փուլը նոր մտահաղացումների և գիտելիքների ստացումն է, որը հանգեցնում է նորամուծական գաղափարի ձևավորմանը:

Երկրորդ փուլն իր մեջ ընդգրկում է նորամուծական մոդելի տեղծման նպատակով նոր գաղափարների ձևավորման և մշակման գործընթացները: Ակնհայտորեն, այստեղ առանցքային դեր է վերապահված գիտությանը, առանց որի զարգացման

[36] Голиченко О. Российская инновационная система: проблемы развития. Вопросы экономики.2004г. № 12

համապատասխան մասնագետների առկայությունը հնարավոր չի լինի ապահովել: Ի վերջո, նոր գաղափարների կրող հանդիսանում էն կադրային ռեսուրսները և հենց դրանով է պայմանավորված նրանց անհրաժեշտությունը: Այս հարցում առանքային տարբերություն գոյություն ունի արդյունաբերական և հետարդյունաբերական տնտեսական համակարգերի միջև: Եթե արդյունաբերական հասարակարգում առաջնային էր գիտակրթական համակարգգ, ապա հետարդյունաբերականում որպես այդպիսին հանդես է գալիս գիտական համակարգը: Միայն գիտական մոտեցումն է հնարավորություն տալիս զարգացնել նոր գաղափարները՝ դրանք վերածելով կիրառական նորամուծական մոդելների: Պատահական չէ, որ հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, որը նորամուծական զարգացման դրոշակակիրն է, գերիշխում են գիտական կադրերով համալրված փոքր և միջին ձեռնարկությունները: Վերջիններիս խնդիրն է ոչ թե ինչ-որ մեկի կողմից բացահայտված գործողությունների անթերի կատարումը, այլ նախաձեռնողականության ու նորարարության ցուցաբերումը: Հասարակության գիտական մակարդակը պայմանավորում է նաև նորամուծական պարբերաշրջանի 3-րդ և 4-րդ փուլերի արդյունավետ իրականացումը:

Նորամուծական ցիկլի հաջորդ փուլի իրականացումը մեծապես պայմանավորված է համապատասխան ենթակառուցվածքների գործունեության արդյունավետությամբ: Դրանք ապահովում են նորամուծական զարգացման անհրաժեշտ հիմքերը՝ պայմաններ ստեղծելով նորարարական գործընթացում ոչ միայն խոշոր կորպորացիաների, այլ նաև փոքր և միջին ձեռնարկությունների ներգրավման համար: Ըստ էության, ենթակառուցվածքներն այն անհրաժեշտ օղակներն են, որոնք ապահովում են նորամուծական զարգացման բնականոն ընթացքը: Դրանք հնարավորություն են տալիս առևտրայնացնել և տարածել նոր գաղափարները, գիտելիքների և հմտությունների փոխանակման միջոցով իրականացնել շղթայական նորամուծություններ և, վերջին հաշվով, մրցակցային առավելությունների ձեռք բերման միջոցով առավելագույնի հասցնել տնտեսական գործունեության արդյունավետությունը: Վերոնշյալը հիմք է տալիս պնդելու, որ նորամուծական զարգացումը բխում է շուկայական մրցակցության պահանջից և հանդիսանում է մրցակցային միջավայրի ուղղակի արտացոլում: Փաստորեն, ցանկացած կազմակերպության, այդ թվում նաև նորամուծական զարգացմանը միտված փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին միջավայրի

փոփոխությունների վրա ազդող գործոնների շարքում որպես զարգացման ուղենիշ պետք է դիտարկել հատկապես մրցակցային միջավայրը:

Վերջին փուլում ենթադրվում է նորամուծության կենսացիկլի ավարտ, որին հետևում է շուկայում փոքր և միջին ձեռնարկությունների կայուն դիրքն ապահովող նոր գաղափարների և մտահաղացումների ծնունդը: Պետք է նկատի ունենալ, որ առանց բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի անհնար է պահպանել նորամուծական ցիկլերի հաջորդականությունը և ապահովել զարգացում: Ընդ որում, հարկ է նշել, որ ինստիտուցիոնալ միջավայրն ունի երկակի ազդեցություն: Որպես արտաքին միջավայրի փոփոխական, այն ենթադրում է ինչպես նորամուծական զարգացումը կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, այնպես էլ նորարարության համար անհրաժեշտ սոցիալական պայմաններն ապահովող բարոյահոգեբանական, մշակութային և մարդկային նորմերի առկայություն: Նման փոխհարաբերությունները ներթափանցում են կազմակերպության ներքին միջավայր, ինչից ելնելով, կարելի է նշել, որ ինստիտուտները նաև ներքին փոփոխականներ են:

Նորամուծական զարգացմանը միտված փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության վրա ազդող գործոնների վերլուծությունը ենթադրում է նաև ներքին փոփոխականների ուսումնասիրություն: Նորամուծական զարգացման պայմաններում բացի ներքին միջավայրի հիմնական փոփոխականներից, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության վրա առաջնային ազդեցություն են ունենում նաև այլ փոփոխականներ: Ինչպես արտաքին միջավայրի փոփոխականների պարագայում, այստեղ ևս նշանակալի է նորամուծական ցիկլի փուլերի փոխկապվածությունը:

Առաջին փուլում անհրաժեշտ է տիրապետել նոր մտքերի և մտահաղացումների այնպիսի ծավալի, որը հնարավորություն կտա դրանց համակարգման և սինթեզման արդյունքում առանձնացնել լավագույնը: Այսպիսի ընտրանքի հնարավորությունն առկա է միայն կրիտիկական զանգվածը գերազանցող թվաքանակի պարագայում: Ընդհանուր առմամբ, տնտեսական զարգացման ներկա պայմաններում կրիտիկական զանգվածը դարձել է ցանցային կամ հետինդուստրիալ տնտեսության հիմնական հասկացություններից: Այն դիտարկվում է որպես ցանցի այնպիսի մեծություն, որի դեպքում դրա արժեքը էապես գերազանցում է ցանցային սուբյեկտ դառնալու հետ կապված

ծախսերին: Այս դեպքում կրիտիկական զանգվածին հասնելուց հետո ցանցն ընդլայնվում է մեծ արագությամբ:

Կրիտիկական զանգված կարելի է ձևավորել միայն կազմակերպության ներսում՝ արդյունավետ միջանձնային կապերի հաստատման միջոցով: Պատճառն այն է, որ մինչ նորարական գաղափարների առևտրայնացումը, կազմակերպության աշխատողների կապերը պետք է կառուցվեն փոխադարձ վստահության վրա: Հակառակ դեպքում նոր մտահաղացումներն ու գաղափարները չեն բարձրաձայնվի՝ կասեցնելով կազմակերպության նորամուծական զարգացումը: Սա հիմք է տալիս պնդելու, որ ներքին միջավայրի փոփոխականների շարքում առաձնահատուկ տեղ են զբաղեցնում միջանձնային կապերն ու բարոյական խթանները: Վերջիններս ուղղված են որոշակի աշխատողի կամ աշխատողների խմբի գործունեության նկատմամբ փոքր և միջին ձեռնարկության մյուս անդամների վերաբերմունքի դրսևորմանը: Հարկ է նշել, որ կախված մարդու բնույթից՝ նշված ուղղությունների կիրառումը կարող է միևնույն ազդեցությունը չունենալ: Այսպես, խիստ նկատողությանը խոլերիկը կարձագանքի բուռն դժգոհություններով, սանգվինիկը աշխատանքի արդյունավետության աճով, մելանխոլիկը թևաթափ կլինի, իսկ ֆլեգմատիկի վրա այն որևէ ազդեցություն չի ունենա:

Այսպիսով, բարոյական մոտիվացիայի համակարգի արդյունավետությունը կախված է այն հանգամանքից, թե կազմակերպության անդամները որքանով են ճանաչում իրենց աշխատակիցներին: Միայն անհատական մոտեցման դեպքում է հնարավոր հասնել ցանկալի արդյունքի:

Պետք է նշել, որ բարոյական խթանների կարևորությամբ հանդերձ, չպետք է նսեմացնել նյութական խթանների դերը: Դրանք միմյանց փոխլրացնող են և հավասարազոր: Պարզապես ամեն ինչ կախված է տեղից, ժամանակից, սուբյեկտից և կիրառման մեխանիզմներից: Նորամուծական զարգացման պայմաններում նախ դրսևորվում են բարոյական խթանները և նյութական խթանների ակնկալիքը, որոնք պայմանավորում են գործունեության հաջողությունը և հիմք հանդիսանում նյութական խթանների համար:

Նորամուծական գործընթանցի հաջորդ՝ մտահաղացումների հարստացման և նորամուծական մոդելի մշակման փուլում առանձնակի կարևորություն է ստանում փոքր և միջին ձեռնարկության կադրային ապահովվածությունը: Առանց համապատասխան

որակի և քանակի մասնագետների առկայության անհնար է ձևավորված մտահղացումների կրիտիկական զանգվածից ընտրել լավագույն: Հատկանշական է այն, որ կադրային ապահովվածության անհրաժեշտ մակարդակը պարտադիր է նաև նորամուծական գործընթացի մյուս երկու փուլերի իրականացման համար:

Ինչպես վերը նշվեց, միայն բարոյական խթանների առկայությունը բավարար չէ աշխատանքային կոլեկտիվի նորամուծական ոգին բարձր պահելու համար: Նյութական խթանների հիմքը նորամուծությունների առևտրայնացումն է, որը հնարավոր է միայն արդյունավետ մարքեթինգային քաղաքականության միջոցով: Դա է նորամուծական գործընթացի հաջորդ՝ զանգվածային կիրառման փուլի իրականացման պահանջը: Սա հիմք է տալիս պնդելու, որ նորամուծական զարգացմանը միտված փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը պայմանավորող առանցքային գործոններից են նորամուծություններն առևտրայնացման բնագավառում կազմակերպության մարքեթինգային տոխնոլոգիաները:

Գաղտնիք չէ, որ նորամուծություններիի առևտրայնացումը բավականին ծախսատար է, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում մարքեթինգին: Դա հիմնականում պայմանավորված է նորամուծությունների յուրահատուկ բնույթով: Որպես կանոն, նորամուծությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի և ստացված արդյունքների առումով գոյություն ունի անորոշություն: Դրա պատճառն այն է, որ որ ինչքան երկու ուսումնասիրվող պարամետրերից մեկը որոշակի է, այնքան մյուսն անորոշ է: Հաճախ ավելի շատ նոր գիտելիքներ ձեռք են բերվում փոքր ծավալի ներդրումներով, ինչը տեղի չէր ունենա մեծածավալ ներդրումների դեպքում: Օրինակ՝ ուղղակի ֆինանսավորման դեպքում որքան հստակ է կատարվող ծախսերի մեծությունը, այնքան հետազոտության արդյունքները դառնում են անորոշ և հակառակը, որքան հստակ է վերջնական նպատակադրումը (օրինակ՝ ՁԻԱՀ-ի դեմ դեղորայքի հայտնագործումը), այնքան անորոշ է կատարվող ծախսերի մեծությունը: Կախված ծախսերի և ստացված արդյունքների հարաբերակցության անորոշության աստիճանից՝ նորամուծությունները բաժանվումեն երկու մեծ խմբի:

1) Ծրագրային, երբ հետազոտությունների համար նախապես հատկացվում է որոշակի գումար և դրանց հետ կապված ծախսերը սահմանափակվում են այդ գումարի շրջանակներում: Այս դեպքում հետազոտության արդյունքները դառնում են անորոշ: Նման

վարքագիծը բնորոշ է գիտական մեծ ներուժ ունեցող կազմակերպություններին, որոնք նպատակ են հետապնդում առևտրայնացնել ոչ թե պատրաստի արդյունքը կամ մտահաղացումը, որը կարող է հաջողված նորամուծության վերածվել, այլ որոշակի բնույթի նորամուծություններ իրականացնելու իրենց կարողությունը:

2) Նպատակային, երբ իրականացվող հետազոտության արդյունքը բավա-կանաչափ հայտնի է, սակայն այդ նպատակին հասնելու համար կատարվելիք ծախսերը հնարավոր չէ կանխատեսել: Այս դեպքում առանձնակաի կարևորություն են ստանում մարքեթինգային տեխնոլոգիաները, որոնք տարբերվում են, կախված նորամուծության նպատակից:

Այսպես, եթե տնտեսավարող սուբյեկտը ձգտում է շահույթ ստանալ նորամուծություն վաճառելու միջոցով, ապա պետք է մարքեթինգն իրականացվի այնպես, որ առավել լիարժեք արտացոլի տվյալ նորամուծության առավելություններն ու մեծացնի սպառման հնարավորությունները: Նման մոտեցումը հնարավորություն կտա սուր մրցակցություն ստեղծել ներդրողների միջև և բարձրացնել նորամուծական ապրանքի գինը՝ շնորհիվ պահանջարկի առավել լիարժեք բացահայտման: Մեկ այլ դեպքում, երբ սուբյեկտը նպատակ է հետապնդում իրականացրած նորամուծության միջոցով ստանալ մրցակցային առավելություն շուկայում, ապա պետք է կիրառի այնպիսի մարքեթինգային տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կտան սպառողների լայն շրջանակին տեղեկացնել կիրառված նորամուծության արդյունքում ձեռք բերված առավելությունների վերաբերյալ:

Նորամուծությունների իրականացման ու առևտրայնացմանն ուղղված քաղաքականությունը բավականաչափ ծախսատար է: Դրանց արդյունավետ գործու-նեության հիմքում ընկած են կազմակերպություն ֆինանսական հնարավորությունները, որոնք կարելի է դիտարկել որպես ներքին միջավայրի առանցքային փոփոխական: Վերջիններիս կարևորությունը հատկապես մեծ է նորամուծական ցիկլի վերջնական փուլում, երբ սպառվում է նախկին նորամուծությունը՝ թելադրելով նորի պահանջ:

Ելնելով վերը նշվածից, կարող ենք նշել, որ նորամուծական զարգացման պայմաններում փոքր և միջին ձեռնարկություններին, որպես կառավարման օբյեկտի և սուբյեկտի, բնորոշ են ներքին և արտաքին յուրատեսակ փոփոխականներ: Ի լրումն ավանդականների, առաջնային նշանակություն են ստանում նորամուծական զարգացման

բնույթը կանխորոշող փոփոխականները: Կատարված հետազոտությունները հնարավորություն են տալիս այդ փոփոխականների համախումբը ներկայացնել հետևյալ գծապատկերների միջոցով (գծապատկերներ 4 և 5):



Գծապատկեր 4. Փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման վրա ազդող ներքին միջավայրի գործոնների համակարգը



Գծապատկեր 5 Փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման վրա ազդող արտաքին միջավայրի գործոնների համակարգը

Մեր կարծիքով, նման տարբերակումը հնարավորություն է տալիս առավել լիարժեք բացահայտել նորամուծական զարգացման գործոնների համակարգը: Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ տնտեսական զարգացման ներկա պայմաններում, երբ կազմակերպության մարդկային ռեսուրսները մրցակցային պայքարում ավելի մեծ կարևորություն են ստանում, կազմակերպության ղեկավարության և աշխատողների միջև ձևավորվում են յուրատեսակ գործընկերային հարաբերություններ: Նորամուծական զարգացման անհրաժեշտությունը պահանջում է թիմային գործելակերպ և մոտիվացվածության բարձր մակարդակ: Եթե յուրաքանչյուր աշխատակից չգիտակցի իր անձի կարևորությունը կազմակերպության զարգացման համատեքստում և շահագրգռված չլինի իր գաղափարները ծառայեցնել ընդհանուր շահերին, ապա նման կազմակերպության գործունեությունը կպահանջի հսկայական ծախսեր: Դա է պատճառը, որ փոքր և միջին ձեռնարկություններ, որոնք հանդես են գալիս որպես առավել մոտիվացված կազմակերպական կառուցվածքներ, կարողանում են նորամուծական զարգացման մրցակցային պայքարում գրավել իրենց կայուն դիրքը շուկայում:

Վերջիններս խոշոր կորպորացիաների հսկայական ֆինանսական ռեսուրսներին հակադրում են աշխատողների մոտիվացման բարձր մակարդակն ու ճկունությունը՝ նորամուծությունների միջոցով պայմաններ ապահովելով գործունեության ընդլայնման համար:

Ներկայումս ենթակառուցվածքների զարգացման և տնտեսավարող սուբյեկտների միջև կապերի ընդլյանման փուլում առավել նշանակալի են արտաքին գործոները: Ինչպես նշում է Գ.Բ. Կլեյները, «էնդոգեն» ուսումնասիրությունից ներկայումս անցում է կատարվում «էկզոգեն», որպես անձնական կամ հասարակական գիտակցությունում ձևավորվող իրականության ընկալմանը[37]: Ընդ որում, փոքր և միջին ձեռնարկությունները, որպես նորամուծական տնտեսության կառավարման օբյեկտ, միաժամանակ հանդիսանում են նաև միկրո և մեզոմակարդակում տնտեսվարող սուբյեկտ, այսինքն իրենց վրա կրում են ազգային և տեղական նորամուծական ծրագրերի ազդեցությունը:

Այսպիսով, փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացումն ունի որոշակի առանձնահատկություններ, ինչը պետք է հաշվի առնել այդ ուղղությամբ համապատասխան ծրագրերի մշակման ու իրականացման ժամանակ: Այդ խնդիրը խիստ արդիական է նաև Հայաստանի Հանրապետության պարագայում, որը տնտեսական զարգացման տարբեր հիմնախնդիրներով պայմանավորված, կարիք ունի նորամուծությունների: Հետևաբար, անհրաժեշտ է օբյեկտիվորեն գնահատել տնտեսության նորամուծական զարգացման ժամանակակից միտումները և դրանց համատեքստում մշակել ծրագրեր հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման ուղղությամբ:

[37] Клейнер Г.Б., Качалов Р.М., Нагрудная Н.Б. Системная парадигма в экономических исследованиях: стратегическое планирование кластеров. Стратегическое планирование и развитие предприятий: Тез. докл. и сообщ. 8- го Всерос. симп. Секция 1.М.:ЦЭМИ РАН, 2007г. стр.56-60.

ԳԼՈՒԽ 2. ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2.1. Մարդկային գործոնի դերը նորամուծական զարգացման մեջ

Մարդկային քաղաքակրթության հետարադյունաբերական փուլը նպաստում է նոր տիպի տնտեսության ձևավորմանը, որը հիմնված է տեխնոլոգիական բազայի և գիտատեխնիկական առաջընթացի վրա: Դա, իր հերթին, ենթադրում է նոր գաղափարների ձևավորում ու տարածում և, այս տեսանկյունից, կարող ենք նշել, որ նորամուծական զարգացմանը նպաստող գործոնների շարքում հատուկ դեր և նշանակություն ունի մարդկային կապիտալը:

21-րդ դարում պետության կայուն և դինամիկ տնտեսական զարգացումը գրեթե անհնար է պատկերացնել առանց նորամուծական մոտեցումների կիրառման՝ ինչպես առանձին կազմակերպությունների, այնպես էլ ազգային տնտեսության մակարդակով: Նորամուծությունների ներդրումը և կիրառումը նպաստում է որակական բարձր հատկանիշներով օժտված նոր արտադրանքի թողարկմանը, ինչը մեծապես կանխորոշում է շուկայում մրցակցային առավելությունների ձևավորումը: Հատկապես մրցակցության խորացման պայմաններում նորամուծական զարգացումը կազմակերպությունների համար ստեղծում է լայն հնարավորություններ շուկայում սեփական դիրքերի ամրապնդման համար: Անշուշտ, նման բարդ և գլոբալ խդիրների լուծման գործում առանձնահատուկ և կարևոր նշանակություն ունի մարդակային գործոնը:

Ընդհանուր առմամբ, մարդկային կապիտալն իրենից ներկայացնում է մարդու տաղանդից, կրթությունից, որակավորումից, բնածին հատկանիշներից կազմված հնարավորությունների տնտեսական գնահատական, որը նրան բերում է եկամուտ: Մարդկային կապիտալում իրականացվող ներրումներն իրենցից ներկայացնում են կրթության ձեռք բերման, հատուկ հմտությունների յուրացման և առողջության պահպանման նպատակով իրականացվող ծախսեր, որոնց հիմնական և վերջնական նպատակն, ըստ էության, մարդկային գործունեության միջոցով ընդհանուր տնտեսական զարգացման արդյունավետության բարձրացումն է:

Համաշխարհային տնտեսական զարգացման ժամանակակից փուլի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ տնտեսության շարժիչ ուժերի կենտրոնում հայտնվել է մարդը: Նման պայմաններում առավել նախընտրելի է դառնում բարձր որակավորում ունեցող աշխատակիցը, որն օժտված է յուրահատուկ ընդունակություններով, ոչ ստանդարտ մտածելակերպով, գործընկերային արդյունավետ հարաբերությունների կառուցման և կոլեկտիվ աշխատանքների իրականացման հատկանիշներով: Այդ կարևորությամբ պայմանավորված, ներկայումս շատ կազմակերպություններ զգալի ծախսեր են իրականացնում կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ, որի հեռահար նպատակը գործունեության արդյունավետության բարձրացումն է:

Հայտնի է, որ տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունի աշխատանքի արտադրողականության աճը, ինչն, իր հերթին, պայմանավոված է արտադրական գորընթացում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմամբ: Դա ուղեկցվում է գիտատար արտադրանքի թողարկման ծավալների ավելացմամբ, ինչը վկայում է պետության տնտեսական զարգացման գործում մտավոր աշխատանքի դերի մեծացման մասին:

Տնտեսավարման գրծընթացների ինտենսիվացումն ուղեկցվում է տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների փոփոխությամբ և արտադրական գործընթացում առաջավոր փորձի ներդրման անհրաժեշտությամբ: Նման պայմաններում հատկապես մեծ հաջողություններ են գրանցում այն կազմակերպությունները, որոնք ընդունակ են օպերատիվ կերպով ադապտացվել տնտեսական կյանքի փոփոխվող պայմաններին, ճիշտ գնահատել հասարակության պահանջմունքները և զարգացման հեռանկարները:

Ժամանակակից պայմաններում կազմակերպությունները կարիք ունեն անհրաժեշտ գիտելիքների, հմտություննեի, նորարարությունների տիրապետող աշխատակիցների, որոնք հնարավորություն կտան հարմարվել և ճիշտ արձագանքել շուկայական կոնյուկտուրայի փոփոխություններին, կիրառել նոր մոտեցումներ տնտեսական խնդիրների լուծման համար: Պետք է նշել, որ աշխատակիցների զարգացման ներուժը հիմնականում բացահայտվում է նորարարությունների իրականացման ժամանակ, որոնք կարող են տարբեր աստիճանով համապատասխանել կազմակերպության

ռազմավարական զարգացման նպատակներին: Աշխատակիցների նորամուծական վարքագիծը զգալիորեն կանխորոշում է իրականացվող նորարարությունների արդյունքները, նորամուծական զարգացման տեմպերն ինչպես պետության՝ այնպես էլ կազմակերպության մակարդակով: Այս առումով, կարող ենք նշել, որ ժամանակակից պայմաններում գիտելիքը, տեղեկատվությունն ու մարդկային կապիտալը դարձել են հիմնական ռազմավարական ռեսուրսները, որոնց տիրապետող յուրաքանչյուր սուբյեկտ անվիճելի մրցակցային առավելություններ է ձեռք բերում շուկայում: Այս իսկ պատճառով, շատ սուբյեկտներ մեծ ուշադրություն են դարձնում անձնակազմի շարունակական ուսուցմանը և որակավորման բարձրացմանը, որը նորամուծական զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է:

Աշխատակիցների ուսուցման նպատակով ֆինանսական ռեսուրսների հատկացումը դիտարկվում է որպես մարդկային կապիտալում կատարվող ներդրում, ինչը ձեռնարկությանն ապագայում հնարավորություն կտա ստանալ շոշափելի տնտեսական արդյունք: Պետք է նշել, որ մարդկային կապիտալում ներդրումները կրում են նորարարական բնույթ այն դեպքում, եթե նպաստում են աշխատակիցների նորամուծական ներուժի զարգացմանը: Վերջիններիս կողմից մասնագիտական հմտությունների ձեռք բերումը և նոր գաղափարների ու գիտելիքների տիրապետումը կազմակերպության նորամուծական զարգացման կարևոր նախապայմաններից են: Միաժամանակ, դրանց կարևորությունն ակնհայտ է նաև ազգային տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից, քանի որ համաշխարհային տնտեսությունում մրցակցության խորացան պայմաններում գիտելիքը և նոր գաղափարները դառնում են ռազմավարական ռեսուրսներ:

Գաղտնիք չէ, որ տնտեսական զարգացման ներկա փուլի առանձնահատկությունները պահանջում են բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրություն, ինչը ենթադրում է գիտության և արտադրության փոխհամագործակցության այնպիսի համակարգի ստեղծում, որը կապահովի տնտեսությունում հիմնարար հետազոտությունների և դրանց արդյունքների ներդրման լայն հնարավորություններ: Անշուշտ, նման գլոբալ խնդրի լուծման գործում առանցքային է մարդակային գործոնի դերը, որի մասնագիտական և կրթական պատրաստվածության մակարդակը նորամուծական զարգացման կարևոր նախադրյալներից է:

Հայտնի է, որ անցումային փուլում գտնվող երկրների համար լուրջ հիմնախնդիր է հանդիսանում տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացումը և արտադրության արդիականացումը: Այս տեսանկյունից, արտադրության հիմնական գործոնների ինտելեկտուալիզացիան և նորամուծական զարգացումը հանդիսանում են հիմնական ուղի տնտեսության տեխնոլոգիական արդիականացման գործում: Ընդ որում, պետք է նշել, որ տվյալ գործընթացում առանցքային դեր ունեն նոր գաղափարների գործնական կիրառմանն ուղղված քայլերը, որոնց նպատակը բիզնես գործընթացների կազմակերպման ու իրականացման ուղղությամբ նոր մոտեցումների կիրառումն է: Այս առումով, մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը, հիմնված գիտելիքի տնտեսության վրա, դառնում է երկրի մրցունակությունը պայմանավորող կարևոր գործոն: Բացի այդ, շուկայական տնտեսության պայմաններում փոխվում են նաև ատադրության գործընթացին ներկայացվող պահանջները, ինչի արդյունքում առաջին պլան է մղվում աշխատուժի որակական մակարդակը՝ օժտված նոր գաղափարներ ձևավորելու և դրանք արտադրության գործընթացում ներդնելու ունակությամբ:

Նորամուծական զարգացմանն անցումը պայմանավորված է նաև արտադրողական ուժերի որակական փոփոխություններով և, այս տեսանկյունից, տվյալ գործընթացի հիմնական տարրը ստեղծագործ մարդն է, իսկ մարդկային կապիտալը՝ նորամուծական արտադրության գլխավոր ռեսուրսը: Նորամուծական զարգացման հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ արտադրական գործընթացում գաղափարները վեր են ածվում նոր արտադրանքի: Այս տեսանկյունից, նորամուծական տնտեսության հիմնարար արդյունքը նոր գաղափարների մտահաղացմամբ գիտատար արտադրանքի թղարկումն է: Նորամուծական արդյունավետ գործունեությունը նշանակում է մարդու ստեղծագործական ընդունակությունների իրացման հնարավորությունների ընդլայնում:

Տնտեսական զարգացման ներկա փուլում տնտեսական աճը, հասարակության բարեկեցության մակարդակը մեծապես կախված են աշխատանքային ռեսուրսների որակից, այլ ոչ թե դրանց քանակական ցուցանիշներից: Այս տեսանկյունից, գոյություն ունեն մի շարք օրինաչափություններ, որոնք, անշուշտ, պետք է հաշվի առնվեն նորամուծությունների կառավարման գործընթացում: Եթե արդյունաբերական դարաշրջանում նորամուծությունները հնարավոր էր կառավարել ավանդական

մեթոդներով, ապա հետադրյունաբերական զարգացման պայմաններում դրանցից յուրաքանչյուրը պահանջում է հատուկ մոտեցում և ունի կենսացիկլի իր առանձնահատկությունները: Հիմնական պատճառն այն է, որ գիտելիքահենք տնտեսությունը «տնտեսական հարթակից» տեղափոխվել է արդյունքների առարկայացման հարթակ՝ դառնալով ժամանակակից զարգացման կարևորագույն գործոն: Գիտելիքահենք տնտեսությունը ներկայումս օբյեկտիվորեն ձեռք է բերել տնտեսական զարգացման առանցքային դեր, ինչով պայմանավորված որոշակի փոփոխություններ են կրել նաև կառավարման մոտեցումները և պատկերացումները: Մասնավորապես, եթե նախկինում նորամուծական հարաբերությունները հիմնականում տարածվում էին առարկայացված գիտելիքների (վերջնական արդյունքի արտադրություն) վրա, ապա ներկայումս դրանք առավելապես կապված են ոչ նյութական ոլորտի հետ: Ընդ որում, առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում տեղեկատվական տեխնոլոգիաների, ծառայությունների, կրթության և հատկապես գիտության ոլորտներում իրականացվող նորամուծությունները: Բացի այդ, եթե նախկինում պետության կողմից մշակվող ու իրականացվող նորամուծական քաղաքականությունն առավելապես ուղղված էր տնտեսական բարեփոխումների առանձին ոլորտներին, ապա ներկայումս այն իր մեջ ընդգրկում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգը: Նորամուծությունների նման համակարգային բնույթն, անշուշտ, որոշակիորեն կանխորոշում է կառավարման տրամաբանությունը: Նորամուծական գործունեության վրա առավել արդյունավետ է ազդել ցանցային ամբողջականության շրջանակներում՝ հաշվի առնելով գործընթացի մասնակիցների հակասական շահերը:

Ներկա փուլում տնտեսության նորամուծական զարգացումը և նորամուծությունների կառավարումը ձեռք է բերում սոցիալ-հումանիտար որակ, որն ամփոփվում է մարդու՝ որպես տնտեսական նորամուծությունների անմիջական ստեղծողի, արտադրողի և սպառողի առաջնայության մեջ: Կարծում ենք, որ ժամանակակից տնտեսական գործունեության ընդհանուր վեկտորով որոշվող նորամուծական զարգացման անհատական-սոցիալական բովանդակությունը, նախ և առաջ, կապվում է գիտագործնական հետևյալ խնդիրների լուծման հետ՝

ա) նորամուծական գործընթացի բոլոր մասնակիցների ստեղծագործական մտածելակերպի ձևավորման ուղիների բացահայտում,

բ) նորամուծությունների սոցիալական կառավարման մեխանիզմների ու մոտեցումների մշակում՝ կապված ստեղծագործ անհատի դերի բարձրացման հետ,

գ) նորամուծական գործունեության մոտիվացման ուղիների բացահայտում՝ կապված մարդու սոցիալական դերի հստակեցման հետ:

Նշվածների շարքում կարևորագույնը, մեր կարծիքով, ստեղծագործ մտածելկերպի ձևավորման ուղիների և եղանակների բացահայտումն է: Այն պետք է ապահովի, մի կողմից տնտեսական նորամուծությունների անընդհատություն և մասշտաբայնություն, իսկ մյուս կողմից՝ բացահայտի սոցիալական ուղղվածությամբ տնտեսական զարգացման նոր հնարավորություններ: Այսպիսով լիարժեք, ստեղծագործական, սոցիալապես հիմնավորված տնտեսական մտածելակերպի ձևավորումը և զարգացումն առանցքային նշանակություն ունի ժամանակակից տնտեսության նորամուծական զարգացման գործընթացում:

Մարդկային կապիտալն, ավանդական «ծախսային» ռեսուրսից դառնալով ներդրումների օբյեկտ, սոցիալական փոխգործունեությանը տալիս է նոր ազդակ: Ժամանակակից տնտեսական հարաբերությունների հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մարդը հանդիսանում է տնտեսական զարգացման առանցքային և որոշիչ գործոն: Դրա կարևորության մասին են վկայում տվյալ հիմնահարցի ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ հետազոտությունները[38]:

Անհատի ներքին ստեղծագործական ներուժի բացահայտումը կառավարման կարևոր խնդիրներից մեկն է ոչ միայն այն պատճառով, որ մարդը ստեղծագործական գործընթացի և հասարակական զարգացման հիմնական նպատակն է, այլ նաև նանոէկոնոմիկայի դարաշրջանում նորագույն գաղափարների մտահաղացման և դրանց տնտեսականացման հիմնական գործոնն է:

Պետք է նշել, որ տվյալ հիմնահարցին վերաբերող գիտական հրապարակումները, իրենց կարևոր նշանակությամբ ու ակնհայտ օգտակարությամբ հանդերձ, լիովին չեն պարզաբանում ժամանակակից պայմաններում սոցիալ-մշակույթային և սոցիալական

[38] Доу Ш. Психология финансовых рынков: Кейнс, Мински и поведенческие финансы. Вопросы экономики. 2010г. № 1; Нравственные основы современного социально-экономического развития: Монография. М.: Издательско-торговая корпорация «Дашков и К^0», 2009г. стр. 95-97. Ольсевич Ю. Психологические аспекты современного экономического кризиса. Вопросы экономики. 2009г. № 3; Яшин А.Н. Сдвиг парадигмы или «перезагрузка» ценностей. Арктика: общество и экономика. 2009г. № 1.

ուղղվածության տնտեսական զարգացման փոխկավածությունը[39]: Արդի պայմաններում տնտեսագիտական գիտելիքների դերի և էության ընկալման նոր մոտեցման հետևանքով տնտեսական անտրոպոցենտրիզմը ձեռք է բերում հիմնարար նշանակություն:

Տնտեսական իրականության սոցիալականացման համար անհրաժեշտ է դուրս գալ տեխնոկրատական մոտեցումների և մտածողության սահմաններից, քանի որ ինչքան այն ձեռք է բերում մարդակենտրոն բնույթ, այդքան համապատասխան արժեքների, տնտեսական գաղափարների ստեղծագործական ներուժի և նրանց համահունչ նոր գիտելիքի գիտակցված «հզորությունը» աճում է: Այսպիսով, նորամուծությունների մարդակենտրոն կառավարումը ներթափանցում է տնտեսական զարգացման խորքերը՝ ի հաշիվ սոցիալ-մշակույթային և մասնագիտական նոր արժեքների, արտադրողական ուժերի, տնտեսական դինամիկ համակարգերի ձևավորման, ինչպես նաև նոր գիտելիքի ընդլայնված վերարտադրության: Հաշվի առնելով վերոնշյալը, կարծում ենք, որ նորամուծական գործունեության մարդակենտրոն կառավարման փուլերը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (տես գծապատկեր 3):

Այս դեպքում գիտելիքը հանդես է գալիս որպես համապատասխան արժեքների և գիտակցական մտածողության ընդհանրացնող միջոց, որը կանխորոշում է սոցիալ-տնտեսական արժեքների ձևավորման և կիրառման, ինչպես նաև «ստեղծագործական տնտեսական վարքագծի ձևավորման պրակտիկան» ընդգրկող ինքնուրույն հետազոտական տիրույթի ձևավորումը: Տնտեսական նորամուծությունների այժմեականացման նշված պայմանների և գործոնների դիտարկումը հնարավորություն է տալիս էապես ընդլայնել ժամանակակից նորամուծական հարաբերությունների սոցիալ-տնտեսական բովանդակության մասին գոյություն ունեցող պատկերացումները, ինչպես նաև հիմնավորել նորամուծական մարդակենտրոն կառավարչական գործառույթների ձևավորման և զարգացման խնդիրների շրջանակը:

---

[39] Анализ рынков в современной экономической социологии. М.: изд.дом ГУВШЭ, 2008г. стр.106, Булгаков С.Н. Философия хозяйства. М. ТЕРРА - Книжный клуб, 2008г. стр. 61. Зарубина Н.Н. Социология хозяйственной жизни: проблемный анализ в глобальной перспективе. М. Университетская книга, Логос, 2006г. стр. 93. Колодко Гжегож В. Мир в движении. пер. с пол. Ю. Чайникова. М.: Магистр, 2009г. стр. 358, Колесниченко Ю.В Личность в евразийстве. Гносеологические основания. М.: Альфа-М, 2008г. стр. 129; Савка А.В. Основы философии хозяйства. М.: ИКЦ «Академкнига», 2010г. стр. 27; Фукуяма Ф. Великий разрыв. М.: АСТ: АСТ МОСКВА, 2008г. стр. 49.



Գծապատկեր 6 Նորամուծությունների մարդակենտրոն կառավարման փուլերը

Ամփոփելով, պետք է նշել, որ նորամուծական զարգացման գործում մարդկային գործոնի դերը չափազանց մեծ է, որը կանխորոշում է այդ ուղղությամբ տեղի ունեցող գործընթացների հաջողությունը: Միաժամանակ, նորամուծությունների զարգացումը պայմանավորված է որոշակի պայմանների առկայության անհրաժեշտությամբ, որի դեպքում մարդու ստեղծագործական ընդունակությունների իրացման արդյունքում կծնվեն նոր գաղափարներ և իրենց առարկայական արտացոլումը կստանան նոր տիպի և որակի արտադրանքի թողարկման գործընացում: Նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

2.2 Նորամուծությունների զարգացման սոցիալական ասպեկտները

Նորամուծությունը յուրաքանչյուր երկրի գիտատեխնիկական զարգացման արդյունքն է և ելակետային նախադրյալը, որն օգտագործվում է արտադրության վերակառուցման և տեխնիկական արդիականացման համար: Այն բնութագրվում է որոշակի

չափորոշիչներով, որոնք արտացոլում են որակապես նոր արտադրանքի տեխնիկական մակարդակը, մրցունակության աստիճանը, իրացման ծավալը և արտադրության ու սպառման արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ, նորամուծության գնահատման համար, նախ և առաջ, պետք է ելնել արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացման մեջ դրանց հնարավոր մասնակցությունից, գիտական և պրակտիկ նշանակությունից, գիտական նորույթների, հայտնագործությունների և գյուտերի կիրառման հնարավորությունից և միջազգային մակարդակով դրա ունեցած նշանակությունից: Այս տեսանկյունից, նորամուծությունն իրենից ներկայացնում է գիտատեխնիկական նվաճումների ամբողջություն, որոնք ուղղված են տնտեսական գործունեության զարգացմանն ու կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը[40]:

Հարկ է նշել, որ նորամուծության կառուցվածքը բնութագրվում է.

- նոր արտադրանքի գիտատեխնիկական մակարդակով,
- գիտատեխնիկական նվաճումների յուրացման ու գործնական կիրառման արագությամբ, տեխնիկայի ու արտադրանքի նորացման մակարդակներով,
- ճյուղային, միջճյուղային ու միջպետական տնտեսական ինտեգրացիայի աստիճանով,
- նորամուծության ցիկլի և դրա առանձին փուլերի տևողությամբ:

Մարդու տնտեսական վարքագծի հետ կապված արժեքային կողմնորոշիչների, հոգևոր հիմքերի և բարոյական նորմերի առաջատար դերի մասին հարցերը միշտ էլ գտնվել են մասնագետների ուշադրության կենտրոնում, ինչի մասին են նաև վկայում դրա վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական և տնտեսագիտա-սոցիոլոգիական բազմաթիվ մեկնաբանությունները: Խոշոր հաշվով, դրանց էությունը հանգում է հետևյալին: Տնտեսական գործունեությունը պետք է դառնա մարդկանց սոցիալական ընդհանուր պրակտիկայի մաս, ինչը ենթադրում է տնտեսության զարգացում սոցիալական նորմերի շրջանակում, այլ ոչ թե հակառակը: Հայտնի է, որ մարդու սոցիլականացումից հետո ձևավորվել է նրա համագիտակցությունը, իսկ արդյունավետ որոշումների գիտակցական

[40] Гранатуров В.М. Экономический риск, сущность, методы измерения. М.: Дело и сервис, 2010г. стр. 48

ընտրությունը մշտապես նախորդել է տնտեսական գործունեությանը: Ի դեպ, եկամուտն ու օգտակարությունն առավելագույնի հասցնելու նպատակն օբյեկտիվորեն արմատավորվել է սոցիալական (համայնքային, խմբային, ազգային) տարատեսակ նորմերում և կանոներում, ինչը նպաստել է տնտեսական փոխգործունեության զարգացմանն ու մարդու՝ որպես սոցիալական էակի կայացմանը: Հաշվի առնելով տնտեսական հոգեբանության նկատմամբ նյութական հարաբերությունների գերակայության մասին պնդումը, կարել է ասել, որ մարդը գործում է կենդանական բնազդների, այլ ոչ թե բանական և մտածող էակի մակարդակով: Այս առումով, ուշագրավ է նորամուծությունների սոցիալական ասպեկտների ուսումնասիրությունը, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել մի քանի խմբերի:

Առաջին, արդյունավետ կառավարման տեսանկյունից չափազանց կարևորվում է մենեջերի մոտ նորամուծական մտածելակերպի ձևավորումը: Վերջինիս իմաստը կայանում է նրանում, որ հաջող տնտեսական գործունեության համար անհրաժեշտ նախապայման է ոչ այնքան թողարկված արտադրանքի քանակը և ստացվող շահույթի ծավալը, այլ տնտեսական վարքագծի ուղղվածությունը: Նորամուծական տնտեսական մտածելակերպը ենթադրում է սուբյեկտի «էության մեջ թափանցելու» և սոցիալ-տնտեսական իրականությունը հասկանալու ընդունակությունների առկայություն: Որոշ հեղինակներ նման մտածելակերպն անվանվում են նաև «լիարժեք», որը հնարավորություն է տալիս «…ցուցադրել սովորական գործընթացների պատճառահետևանքային շղթան, որոնցից հետևում է որոշակի հասկացության գոյությունը, կամ երևույթների սովորական պատկերացումների հիման վրա թվարկել դրա հատկությունները, կամ պայմանական էտալոնի օգնությամբ ցույց տալ չափման մեթոդը: … Երևույթի ընկալման գործընթացը այնքանով ավելի լիարժեք կլինի, որքանով երևույթի պատճառները ավելի փակ և առարկայական են, դրանց կապը և փոխադարձ հիմնավորվածությունը դառնում է գիտելիքի առարկա[41]»:

Երկրորդ, տնտեսական նորամուծությունների սոցիալական ասպեկտներից է մարդկային կապիտալի, ինչպես նաև սոցիզմի ընդլայնված վերարտադրությունը: Մի կողմից, այդ դատողության ակնհայտությունը, ինչ-որ իմաստով, ազատում է մարդկային

[41] Белянин А. Даниел Канеман и Верной Смит: экономический анализ человеческого поведения. Вопросы экономики. 2003г. № 1.

կապիտալի զարգացման խնդրի մանրակրկիտ դիտարկումից, մյուս կողմից, ակնհայտ է, որ մարդկային կապիտալի սոցիոլոգիան մնում է քիչ ուսումնասիրված, չնայած դրա արդիականությանը: Դժվար է պատկերացնել քիչ թե շատ գործուն և համակարգային սոցիալ-տնտեսական ինստիտուտներ, ինչպես սոցետալ, այնպես էլ ընկերակցության մակարդակում, որոնք նպատակասլաց կօժանդակեին նորամուծական պահանջվող որակի մարդկային կապիտալի զարգացմանը:

Ակնհայտ է, որ կառավարման նորամուծական ասպեկտները պետք է, նախ և առաջ, դիտարկվեն որպես կապիտալի անհատական և հասարակական վերարտադրության համակարգային գործոն՝ մարդու և նրա ստեղծագործ գիտելիքի ու ընդունակությունների ընկալմամբ: Տվյալ դրույթի էությունն այն է, որ տնտեսական ոչ մի գործոն, ոչ մի պայման չի ստեղծվի և, հետևաբար, չի ընդունի գործնական ձև, եթե դրան չկցվի մարդկային ստեղծագործական էներգիան[42]: Մարդկային կապիտալի ընկալման համակարգայնությունը օգնում է ազատվել նրա «ավտոնոմ» ընկալումից, ըստ նշանակության ձևերի կապիտալի ուրիշ՝ «հավասար» կամ նույնիսկ «վատ» տեսակների զուգահեռ գոյություն ունենալուց:

Երրորդ, ժամանակակից տնտեսական նորամուծությունների վերարտադրության կարևոր ասպեկտ է հանդիսանում ստեղծագործության և աշխատանքի, որպես մարդկային բարեկեցության և զարգացման արդարացի աղբյուրների հիմնարար դերը: Ըստ էության, դրա մեջ է կայանում տնտեսական հոգևոր բարոյականության էությունը: Տնտեսագիտական ընկալմամբ հոգևոր և բարոյական համարվում է այն, ինչը անմիջականորեն կապվում է մարդու ստեղծագործ գործունեության հետ: Այդ դրույթը բացառիկ արդիական է ժամանակակից տնտեսական գործունեության համար, որտեղ կայուն ձևավորվում և վերարտադրվում են ոչ թե արտադրողական, այլ բաշխողական գործընթացները: Ակնհայտ է, որ եթե աշխատանքի կենսական կարևորությունը և նշանակությունը նսեմացված է, ապա այն աստիճանաբար դուրս է մղվում տնտեսական արժեքների ոլորտից՝ իր տեղը զիջելով նյութական հարաբերություններին:

Կառավարման այս ասպեկտը անմիջականորեն կապված է երկու փոխկապակցված պայմանների հետ՝ ժամանակակից մենեջերների տնտեսական մտածելակերպի վերաուղղորդում արտադրության, ստեղծագործական

[42] Цаплин В.С. Разумное, но не мыслящее. М.: Крафт, 2009г. стр. 53.

հարաբերությունների առաջնահերթությանը և նորագույն գաղափարների և գիտելիքի անընդհատ վերարտադրության ձգտման մոտիվացիայի ապահովում:

Պետք է նշել, որ նորամուծությունների և ներդրումների ժամանակակից մենեջմենթի առանցքային խնդիրներից է անձնակազմի ստեղծագործական նպատակների և պլանների կառավարումը և ցանկալի սցենարներով աշխատողների ստեղծագործական ներուժի և համապատասխան ակտիվության ուղղորդումը: Ըստ էության, դա առաջ է բերում կառավարման նոր մշակույթի ձևավորման անհրաժեշտություն, որը հիմնված կլինի վճռականության և ստեղծագործական ներուժի առավելագույնս օգտագործմն վրա:

Չորրորդը, ստեղծարար ներուժը կարող է լիարժեք ձևավորվել և արդյունավետ կերպով իրացվել շուկայական ազնիվ մրցակցության և համագործակցության պայմաններում[43]: Վերջիններս իրենցից ներկայացնում են տնտեսական գործընկերների միջև այնպիսի մրցակցություն, երբ բոլոր «խաղացողները» սահմանափակ ռեսուրսների նկատմամբ ունեն հավասար հնարավորություններ և համաձայն իրենց գիտակցության, գիտելիքների և ընդունակությունների իրականացնում են տնտեսական արդյունավետ ընտրություն: Ընդ որում, նման պայմաններում բացակայում է ինստիտուցիոնալ պայմանների ու գործոնների մոնոպոլ թելադրանքը և, համապատասխանաբար շուկայում չի ձևավորվում մենաշնորհային իշխանություն: Ազնիվ շուկայական մրցակցությունը բնութագրվում է փոխանակման համարժեք գործարքներով, հարմարվողական սպասումների փոխարեն արդյունավետ սպասումների առաջահերթությամբ, տնտեսական կանխատեսման հնարավորությամբ, ռիսկերի անորոշության հաղթահարմամբ և կառավարմամբ, տնտեսական գործակալների փոխադարձ վստահությամբ, տնտեսական որոշումների և փոխգործունեության կանխատեսելիությամբ և, վերջին հաշվով, սոցիալ-տնտեսական կայունությամբ:

Անշուշտ, շուկայական մրցակցությունը ենթադրում է յուրաքանչյուրի սուբյեկտի կողմից սեփական ռազմավարության և մարտավարության մշակում: Որպես կանոն, հաջողությունն ուղեկցում է այն կազմակերպություններին, որոնք կարողանում են «հակառակորդներին» դարձնել «դաշնակիցներ»: Այլ խոսքով, մրցակցային

[43] Андриссен Д., Тиссен Р. Невесомое богатство. Определите стоимость вашей компании в экономике нематериальных активов. М.: ЗАО «Олимп-Бизнес», 2004г. стр.34

առավելությունները և անհաջողությունները պետք է ձեռք բերվեն սոցիալ-տնտեսական, ինտելեկտուալ, մտածողական հարաբերությունների շրջանակներում: Ընդ որում, տնտեսական համագործակցությունն այս դեպքում չպետք է դիտարկել որպես մրցակցության հակապատկեր: Պարզապես այս դեպքում նման համագործակցությունը հանդես է գալիս որպես զարգացման դրսևորում, ժամանակակից տնտեսության հատուկ պայման և տնտեսական «հումանիզմի» օրինակ: Միևնույն ժամանակ, այն յուրատեսակ մրցակցություն է, որտեղ հաջողություն են ապահովում ձեռներեցության այնպիսի արժեքներ, ինչպիսիք են բարի համբավը և արժանապատվությունը: Ընդ որում, երբեմն դրանք ունեն առավել որոշիչ նշանակություն, քան շահութաբերությունն ու եկամտաբերությունը:

Կառավարչական նորամուծական հարաբերությունների շրջանակներում պետք է կարևորել նաև «համագործակցության տնտեսական մշակույթի» ձևավորումը, որի հիմք պետք է հանդիսանա գիտելիքի տնտեսության զարգացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումը: Դրա պայմաններում հաջողությունն ուղեկցում է այն սուբյեկտներին, ովքեր կարողանում են ապահովել սեփական նորամուծությունների «անհասանելիությունը մրցակիցների համար: Միաժամանակ, նորագույն գաղափարների և գիտելիքների ընդլայնված վերարտադրությունը պետք է դառնա յուրաքանչյոր կազմակերպության գործունեության ուղենիշը: Պետք է նշել, որ տնտեսական մշակույթը չի ընդունում «առևտրային և արտադրական գաղտնիքներ» փիլիսոփայությունն ու հոգեբանությունը, քանի որ դրանք ակնհայտորեն արգելակում են նորամուծությունների անընդհատության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Տնտեսական համագործակցության պայմաններում բիզնեսի հիմնական բնութագրիչներից մեկը պետք է լինի «մտքի արագությունը», ինչը ենթադրում է ինտելեկտուալ ողջ էներգիայի օգտագործում արտադրության գործոնների շարունակական թարմացման և ակնկալվող արդյունքների ստացման վրա:

Համագործակցային տնտեսական մշակույթի պայմաններում տնտեսական միտքը նույնպես ձեռք է բերում նոր ուրվագծեր: Եթե ավանդական մրցակցության համար ավելի հաճախ առանցքային նշանակություն է ունենում «ծախսերի նվազեցումը», ապա տնտեսական համագործակցության համար հիմնականը առավելագույն արդյունքի ստացումն է: Իհարկե, դրանից չի բխում, որ տնտեսական մրցակցային մշակույթը չի

աջակցում բարձր արդյունքների հասնելու նպատակին: Պարզապես խնդիրն այն է, որ մրցունակության աճին հաճախ հասնում են մարդկային կապիտալի վրա կատարվող ծախսումների կրճատման հաշվին (աշխատավարձի կրճատում կամ «սառեցում», աշխատակիցների աշխատանքից ազատում կամ փոխադրում ոչ լրիվ աշխատանքային օրվա և այլ), ինչը հանգեցնում է, նախ, կորպորատիվ աշխատանքային տեղի և կարգավիճակի համար ներքին մրցակցության, երկրորդ, ստեղծվում են սոցիալական լարվածության համար նպաստավոր պայմաններ: Արդյունքում, տնտեսական փոխգործունեության կորպորատիվ մակարդակում «տնտեսումը» հասարակական շրջանակներում վեր է ածվում մեծ ծախսերի, քանի որ պահանջվում է լոկալացնել հարկադիր գործազրկության հետևանքները և դրա հետ կապված տարբեր սոցիալ-հոգեբանական և այլ բացասական հետևանքները: Այլ խոսքով, արտադրության ծախքերի կրճատումը այստեղ զգացվում է ոչ թե կորպորատիվ բյուջեի ծախսային հոդվածների մեխանիկական կրճատման, այլ նոր որակի մարդկային կապիտալում ծախսումների և ներդրումների դիվերսիֆիկացիայի միջոցով: Կարելի է ասել, որ կառավարչական նորամուծությունների հիմնական բովանդակությունը կայանում է հետևյալ դրույթներում՝

1. արդիական է ոչ այնքան արտադրության ծախքերի կրճատման ուղիների որոնումը, որքան ստեղծագործական գաղափարի և գիտելիքի աճ ապահովող ներֆիրմային և միջֆիրմային փոխգործունեության ձևերի և եղանակների զարգացումը,
2. տեղեկատվական և գիտելիքի միջավայր մուտք գործելու կազմակերպումն արդիականացնում է կորպորատիվ և միջկորպորատիվ գիտելիքի, ինչպես նաև դրա համապատասխան բազայի կառավարման անհրաժեշտությունը,
3. մրցակցային տնտեսական մշակույթից համագործակցության տնտեսական մշակույթի փոխակերպման գործընթացի գիտականորեն հիմնավորված կազմակերպումը և այդ նպատակով սոցիալ-տնտեսական բարեփոխումների անհրաժեշտ ինստիտուտների ստեղծումը,
4. ստեղծագործ կորպորացիաների և սոցիալական ցանցերի ստեղծան, ինչպես նաև անհատական և կորպորատիվ սոցիալական կապիտալի զարգացման ունակություններին տիրապետող մենեջերների պատրաստման և վերապատ-րաստման նոր ձևերի և եղանակների մշակում:

Այսպիսով, նորամուծական զարգացման սոցիալական ասպեկտների դիտարկումը հնարավորություն է տալիս պարզել շուկայական միջավայրում փոխհամագործակցության և գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները, ինչպես նա այն հիմնարար պայմանները, որոնք պետք է հաշվի առնվեն նորամուծական ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ:

2.3. Կլաստերի դերը փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման գործում

Նորամուծական գործունեության իրականացման կարևոր ուղղություններից մեկն է կլաստերների ձևավորումը, որը տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ժամանակակից միտումների պայմաններում որոշակի հիմքեր է ապահովում նոր գաղափարների առևտրայնացման գործուն մեխանիզմների ստեղծման համար: Կլաստերների տնտեսական հետաքրքրություններում, առաջին հերթին, արտացոլված է նորամուծական գործընթացում տվյալ մասնակցի ունեցած դերը:

Կարելի է նշել, որ կլաստերների ձևավորումը ժամանակի օբյեկտիվ պահանջն է, ինչը հնարավորություն է տալիս փոքր և միջին ձեռնարկություններին միավորվել միասնական տնտեսական հետաքրքրությունների առանցքի շուրջ: Նման ինստիտուցիոնալ միավորները, ռեսուրսների՝ այդ թվում գաղափարների միավորման շնորհիվ մասնակիցներին հնարավորություն են տալիս լիարժեք ինտեգրվել նորամուծական զարգացման համակարգին: Ընդհանրական բնորոշմամբ, կլաստերներն առանձին տարրերի միասնական հետաքրքրությունների շուրջ ձևավորված կառուցվածքային առանձին միավորներ են[44]:

Կլաստերներն ապահովում են նորամուծական գործընթացի մասնակիցների տնտեսական հետաքրքրությունների համաձայնեցումը, միմյանց հետ զուգակցումը և միասնական ուղղվածության ապահովումը, ինչն, ըստ էության, խթանման արդյունավետ մեխանիզմ են են հանդիսանում:

Տնտեսության կլաստերացման պայմաններում նորամուծական գործընթացի մասնակից հանդիսացող փոքր և միջին ձեռնարկություններիի տնտեսական

[44] http://ru.wikipedia.org/wiki/Кластер

հետաքրքրությունների իրացման խնդիրը սերտորեն կապված է կլաստերի առաքելության, նպատակների, գործառույթների և կառուցվածքի հետ: Յուրաքանչյուր՝ այդ թվում նաև նշված խնդրի լուծման և արդյունքների ընկալման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է հստակեցնել կլաստերի մասնակիցների նպատակներն ու խնդիրները և դիտարկել դրանց լուծման եղանակներն ու միջոցները: Այս առումով, նորամուծական գործընթացի մասնակիցների տնտեսական հետաքրքրությունների իրացման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 7. Կլաստերների պայմաններում նորամուծական գործընթացի մասնակիցների տնտեսական հետաքրքրությունների իրացման մեխանիզմը

Գծապատկեր 7-ում ներկայացված է կլաստերի շրջանակներում նորամուծական գործընթացի մասնակիցների տնտեսական հետաքրքրությունների իրացման մեխանիզմը, որը մեկ միասնական համակարգում փոխկապակցում է նորամուծական ներուժը, տնտեսական հետաքրքրությունները, նորամուծական ակտիվության խթանման համակարգը և տնտեսավարող սուբյեկտների նորամուծական վարքագիծը՝ որոշելով յուրաքանչյուր տարրի ազդեցության տրամաբանական հաջորդականությունը: Նշված մեխանիզմի գործունեությունն ապահովվում է կառավարման արդյունավետ համակարգի միջոցով, որն իր մեջ ընդգրկում է տեղեկատվական, ֆինանսական, ենթակառուցված-քային, կազմակերպչական, գիտատեխնիկական և այլ բաղադրիչների համախմբով ներկայացված ռեսուրսային և ֆունկցիոնալ-կազմակերպչական տարրերը:

Ընդհանուր առմամբ, կառավարման համակարգը կոչված է կլաստերի յուրաքանչյուր մասնակցի ներուժի արդյունավետ օգտագործման և ստեղծված նորամուծական արդյունքի նկատմամբ պահանջարկի խթանման միջոցով նպաստել շարունակական զարգացման ապահովմանը: Հաշվի առնելով փոխազդեցության ցանցային սկզբունքի վրա հիմնված կլաստերային կառուցվածքի՝ որպես բարդ և բազմամակարդակ համակարգի առանձնահատկությունները, կարելի է մշակել նորամուծական զարգացման կառավարման համակարգի արդյունավետ գործունեության ապահովման հետևյալ հիմնական պահանջները.

- արտաքին և ներքին միջավայրի բարդ և շարժունակ գործոնների նկատմամբ կառավարման համակարգի համապատասխանություն և համարժեքություն,
- նորամուծական զարգացման քաղաքականության հետ կլաստերի սուբյեկտների՝ այդ թվում նաև փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության զուգակցում,
- ներկլաստերային կոմպենտենտության ու պատասխանատվության մեխանիզմի կիրառում՝ հաշվի առնելով նորամուծական գործընթացի յուրաքանչյուր մասնակցը մասնագիտացումն և գործունեության ուղղվածությունը,
- կլաստերի մասնակցի նորամուծական ակտիվության խթանման ճկուն մեթոդների և կենսունակ գործիքների կիրառում:

Կլաստերի մեջ մտնող փոքր և միջին ձեռնարկությունների շահերի և նպատակների տարատեսակությունն, անշուշտ, պահանջում է նորամուծական զարգացման

կառավարման ճկուն համակարգերի և նոր ոճի կիրառում: Ճկունության ապահովման կարևորագույն պայման է հանդիսանում նորամամուծական զարգացման ընդհանուր նպատակների և խնդիրների համակարգի ձևավորումը՝ մենեջմենթի հարթ և վենչուրային մոդելների շրջանակներում, ինչպես նաև կլաստերի մասնակիցներին անկախության բարձր աստիճանի տրամադրումը[45]: Կառավարման նման մոդելների գլխավոր առավելությունը ճկունության բարձր մակարդակն է, չնայած որ դրանք իրենց մեջ պարունակում են նաև կենտրոնախույս ուժերի վտանգ, ինչը կարող է հանգեցնել կլաստերի մասնակիցների աշխատանքի նկատմամբ կենտրոնի հսկողության թուլացմանը, զարգացման հիմնարար նպատակների մասնատմանը և միասնական մոտիվացիոն մեխանիզմի արդյունավետության անկմանը: Նշված բացասական հետևանքների կանխարգելման և հաղթահարման համար հաճախ ձևավորվում են կառավարման մատրիցային կառուցվածքներ, մշակվում և իրականացվում է միասնական կլաստերային ռազմավարության, որը ենթադրում է պլանային ողջ աշխատանքի համախմբում և ամբողջականացում, կազմակերպության նորամուծական ակտիվության մոտիվացիայի և խթանման համակարգի օգտագործում: Միաժամանակ, այն կապակցում է խրախուսման ձևերն ու եղանակները կլաստերի յուրաքանչյուր մասնակցի նորամուծական գործունեության արդյունքների և ամբողջ ցանցային կառուցվածքի հետ:

Կլաստերը դիտարկելով որպես ժամանակի և տարածության մեջ նպատակասլաց փոխազդող և ելակետային բաղադրիչները (ռեսուրսները) վերջնական արդյունքների վերածող ամբողջական համակարգ, պետք է նշել, որ պլանավորված նպատակների ձեռք բերումը կախված է բոլոր տարրերի և ենթահամակարգերի հստակ կենսագործունեությունն ապահովելու կարողությունից: Այդ խնդիրը լուծվում է հատուկ մարմնի՝ կլաստերային զարգացման մասնագիտացված կենտրոնի միջոցով, որը պետք է համակցի նորամուծական կլաստերի գործելու պայմաններում փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական ակտիվության համախմբման և խթանման գործառույթները (համանման կառույցներ հաջողությամբ գործում են արտսահմանյան

[45] Мищенко Л.Я., Арутюнов Э.Ю. Формирование механизма управления развитием промышленной корпорации: Монография. Краснодар, изд-во Кубанский госуниверситет, 2002г. стр. 23

երկրներում, որպես հստակ որոշված գործառույթներով և իրավասությամբ կառավարող ընկերություններ):

Կլաստերի պայմաններում փոխվում է նաև տարածքային զարգացման քաղաքականության էությունը և կառավարման մարմինների գործողություններն հիմնականում ուղղվում են ոչ թե առանձին կազակերպություններին աջակցությանը, այլ տնտեսավարող սուբյեկտների և պետական ինստիտուտների միջև փոխադարձ հարաբերությունների զարգացմանը: Առանձնահատուկ կարևորություն է ստանում նորամուծական կլաստերի մասնակիցների արտաքին հաղորդակցությունների կառավարումը, որն իր մեջ ընդգրկում է՝

- նորամուծական կլաստերի մրցակցային առավելությունների վերլուծություն և նրա իմիջի ձևավորում, ելնելով հետապնդվող ռազմավարական նպատակներից,
- նպատակների հստակեցում, փոխազդեցության օբյեկտների ընտրություն և գիտատեխնիկական արտադրանքի շուկայում շահագրգիռ կողմերի հաղորդակցության պլանավորում,
- գիտատեխնիկական արտադրանքի շուկայում շահագրգիռ կողմերի հետ կլաստերի մասնակից փոքր և միջին ձեռնարկությունների կարգավորված և համակարգվող փոխազդեցություն՝ ուղղված բիզնես-խնդիրների լուծմանը, իմիջի ձևավորմանը, մրցակցային առավելությունների զարգացմանը և այլն:

Նորամուծական զարգացման կառավարման ռազմավարական նպատակը կլաստերի մասնակիցների միջև երկարատև փոխգործունեության վրա հիմնված գործընկերային հարբերությունների ցանցի ստեղծումն է ոչ միայն կլաստերի ներսում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Այդ նպատակի իրականացումը առաջ է բերում որոշակի խումբ խնդիրների լուծման անհրաժեշտություն, որոնցից հիմնականները հետևյալներն են:

1. Կլաստերի մասնակից փոքր և միջին ձեռնարկությունների արդյունավետ փոխգործակցության ապահովում, որն առավել արդյունավետ կարող է իրականացվել հետևյալ պայմաններում.
    - գիտահետազոտական ծրագրերում փոքր և միջին ձեռնարկությունների ընդգրկման ինտիտուտների ձևավորում և զարգացում,
    - նորամուծական զարգացմանը միտված փոքր և միջին ձեռնարկություններին անհրաժեշտ որակավորմամաբ կադրերով համալրելու նպատակային

ծրագերի մշակում և իրականացում, ինչպես նաև աշխատողների վերապատրաստում,

- փոքր և միջին ձեռնարկություններ - ԲՈՒՀ կապի սերտացում՝ նպատակային մասնագիտացման ծրագրերի և դասընթացների կամակերպման միջոցով,
- մարքեթինգային հետազոտությունների իրականացում՝ ուղղված նորամուծությունների նկատմամաբ պահանաջարկի ու փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական ներուժի բացահայտմանը:

2. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ փոխգործակցության ձևավորում և զարգացում, որի իրականացումը ենթադրում է.
    - փոքր և միջին ձեռնարկություններին խորհրդատվական ծառայություններ մատուցող ինստիտուտների ձևավորում,
    - պետական և տեղական նշանակության նորամուծական ծրագրերի իրականացման ընթացքում համապատասխան շահագրգիռ կառույցների ներգրավում,
    - ներդրումային ֆոնդերի, վենչուրային հիմնադրամների և դրամաշնորհներ տրամադրող կառույցների հետ կլաստերների համագործակցության ապահովում:
3. Միջազգային համագործակցության և արտաքին շուկայում նորամուծությունների իրացման համար անհրաժեշտ ինտիտուտների ձևավորում և զարգացում, որը ենթադրում է.
    - կլաստերների կողմից առաջարկվող գաղափարների առարկայացման և առևտրայնացման համար անհարժեշտ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծում,
    - օտարերկրյա ներդրողների տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում,
    - ազգային նորամուծական բրենդի կայացմանն ուղղված համապետական միջոցառումների մշակում և իրականացում,
    - միջազգային համագործակցության շրջանակներում ազգային նորամուծական արդյունքների արտահանման պայմանների ստեղծում:

Այսպիսով, նորամուծական զարգացմանը նպաստող կլաստերի մասնակից փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր պայման է հանդիսանում նաև պետական կառավարման համակարգից անկախ տեղեկատվական հաղորդակցության անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը: Նման ինստիտուտների հիմնական խնդիրն է կլաստերում ընդգրկված կազմակերպություններին շուկայի ընտրության, գործընկերներ գտնելու, մարքեթինգային գնահատման և հետազոտությունների իրականացման, արտահանման համալիր ռազմավարության կազմակերպման, արտաքին շուկաներում խոչնդոտների և ռիսկերի բացահայտման նպատակով տեղեկատվական և վերլուծական համակողմանի օժանդակության ցուցաբերումը, արտաքին տնտեսական գործունեության ոլորտում իրավական և ֆինանսական խորհրդատվության մատուցումը և այլն: Տեղեկատվական ծառայություն-ների այդպիսի համակարգը հնարավորություն կտա ապահովել կլաստերի նորամուծական կազմակերպությունների հաղորդակցության փոխգործունեության միասնական ամբողջական ցանց, ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկայում:

Ամփոփելով, պետք է նշել, որ ազգային տնտեսության նորամուծական զարգացմանն անցումը հնարավոր է իրականացնել բիզնեսի որակի և արտադրողականության բարձր ցուցանիշների ապահովման, կառավարման արդյունավետության նոր մակարդակի ձեռք բերման դեպքում, ինչին կարող են մեծապես նպաստել կլաստերները:

ԳԼՈՒԽ 3. ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

3.1 Նորամուծական գործունեության ներկա վիճակը և զարգացման նախադրյալները

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում կարևոր նշանակություն է ձեռք բերել նորամուծական գործունեությունը, որին միտված սուբյեկտներն ակնհայտ առավելություններ են ձեռք բերում շուկայական ցանկալի դիրքերի ձեռքբերման և դրված խնդիրների լուծան ժամանակ:

Ընդհանուր առմամբ, նորամուծական գործունեության արդյունավետությունն, առաջին հերթին, պայմանավորված է գիտատեխնիկական աշխատանքների ակտիվացմամբ: 2008-2012 թվականների կտրվածքով դրանց վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 1-ում, որից պարզ է դառնում, որ նշված ժամանակահատվածում գիտատեխնիկական և գիտահետազոտական աշխատանքների ծավալը համապատասխանաբար ավելացել է 23,9%-ով և 37,0%-ով: Ընդ որում, առաջինների ինքնարժեքը բարձրացել է 4,4%-ով, իսկ երկրորդներինը՝ 12,6%-ով: Նույն ժամանակա-հատվածում գիտատեխնիկական ծառայությունների ծավալը նվազել է 51,8%-ով, իսկ ինքնարժեքը՝ 67,3%-ով: Արտադրանքի փորձնական օրինակների տեսակարար կշիռը գիտատեխնիկական աշխատանքների ծավալում շատ փոքր է. 2008 թվականին այն կազմել է 3,9%, իսկ 2012 թվականին՝ 2,4%:

Դիտարկվող ժամանակաշրջանում, կարելի է ասել, որ նորամուծությունների խթանման նպատակով պետական հատկացումները գրեթե վերացել են, իսկ կազմակերպությունների սեփական միջոցների բաժինը՝ ավելացել: Սակայն վերջիններիս բացարձակ ծավալը չի ապահովել նորամուծությունների մշակման, յուրացման և արտադրական ծախսերի փոխհատուցում: ՀՀ-ում նորամուծությունների համար բնութագրական է դրանց նկատմամբ ցածր վճարունակությունը:

Աղյուսակ 1[46]

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը ՀՀ-ում 2008-2012 թվականներին (մլն դրամ)

Ցուցանիշներ	Ըստ աշխատանքների արժեքի					Ըստ ինքնարժեքի				
	2008	2009	2010	2011	2012	2008	2009	2010	2011	2012
Ավարտված և պատվի-ռատուի կողմից ընդունված աշխատանքների փաստացի ծավալը	7 640.9	8439.2	9393.1	9 584.5	11740.2	6505.0	7035.6	8255.5	7308.1	10396.9
Տարեսկզբից կատարված աշխատանքների ծավալը	8 310.7	9807.1	8976.5	9 571.1	10077.6	8103.2	8381.5	7897.0	7271.9	8100.1
այդ թվում՝ գիտատեխնի կական աշխատանքների ծավալը (արտադրանքը)	7 855.5	9422.1	8711.7	9 245.6	9 731.9	7665.4	8078.2	7 679.5	7133.7	8000.5
դրանից՝										
գիտա հետազոտական աշխատանքներ	5 480.6	6361.4	6 903.2	6 872.7	7 510.0	5424.9	5 725.4	6 061.1	5 047.2	6 111.4
այդ թվում՝ հիմնարար	962.1	1987.5	2 150.9	1 336.2	1 308.8	975.6	1 629.5	2 100.3	1 108.4	1 100.6
նախագծա կոնստրուկ-տորական և տեխնոլո-գիական աշխատանքներ	1304.5	1940.2	1 052.6	1 693.5	1 575.6	1270.5	1 282.4	985.3	1 562.4	1 455.4
արտադրանքի փորձնա-կան օրինակների (խմբա-քանակի) պատրաստում	308.6	293.7	232.1	237.5	234.7	274.7	260.9	191.3	183.0	190.9
նախագծային աշխատանքներ շինարարության համար	92.4	24.3	21.5	94.6	89.2	41.3	22.9	21.5	62.1	29.2
գիտատեխնիկական ծառայություններ	669.4	802.5	502.3	347.3	322.4	654.0	786.6	420.3	279.0	213.6

Նորամուծությունից ստացվող զուտ դրամական հոսքերի կրճատման արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ կազմակերպությունների սեփական միջոցների

[46] ՓՄՁ-ներին վերաբերող տեղեկատվության հիմք են ծառայել.
- «Ամերիա» ՓԲԸ 2013: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում. Ներկա իրավիճակը, զարգացման միտումները և օգտագործվող գործիքները: Ամբողջական հետազոտության կարճ ներկայացում: www.ameria.am SME_Research_Ameria_MAS,
- Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ: Երևան 2013: SMEs_in_figures_Statistics_2010-2012_am

ավելացումը տեղի է ունենում դանդաղ տեմպերով, ինչի հետևանքով ներդրումների ներգրավումը կատարվում է ֆինանսական լարվածության պայմաններում և նորամուծական կազմակերպությունները զրկվում են վարկային միջոցները ժամանակին վերադարձնելու հնարավորությունից:

Կազմակերպությունների մեծ մասում ընթացիկ իրացվելիության գործակիցը ցածր է նորմատիվից (2.0), որի պատճառով նվազում են ընթացիկ ակտիվներով նորամուծությունների գծով կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների մարման կազմակերպությունների հնարավորությունները: Արդյունաբերական կազմակերպությունների ընթացիկ իրացվելիության գործակիցը, որն արտահայտում է կուտակված պարտավորությունների գերազանցումը շրջանառու ակտիվների նկատմամբ, հիմնականում 0.7-ից ցածր է: Նորամուծական գործունեության վրա իր բացասական անդրադարձն է ունենում նաև բավարար չափով շրջանառու միջոցների բացակայությունը, ինչն, իր հերթին, հանգեցնում է տեխնոլոգիական թերբեռնվածություն:

Արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական գործունեության արդյունավետության բարձրացման հետ կապված խնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է սարքավորումների նորացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացմամբ: Ներկայումս կազմակերպությունների հաստոցային համալիրի մաշվածությունը հասնում է մինչև 50-55%-ի, որը հանգեցնում է մեքենաների տեխնոլոգիական հատկությունների կորստի՝ միաժամանակ մեծացնելով դրանց շահագործման ռիսկը: Նման պայմաններում հիմնական ֆոնդերի ներդրման գործակիցը տատանվում է 0.04-0.07-ի միջակայքում, իսկ շահութաբերությունը փոխարինվում է վնասաբերությամբ:

Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, նորամուծական զարգացման առումով հատկապես զգալի ներուժ ունեն փոքր և միջին ձեռնարկությունները, ինչը ենթադրում է այդ ուղղությամբ համապատասխան նախադրյալների և գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: 2011 թվականին «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով սահմանվեցին տվյալ ոլորտի սուբյեկտ հանդիսանալու համար նոր չափորոշիչներ (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2[47]

Փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման չափորոշիչները ՀՀ-ում

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակը	Հասույթը (նախորդ տարի)	Ակտիվների հաշվեկշռային արժեքը (տարվա վերջի դրությամբ)
Գերփոքր	մինչև 10	100 մլն	100 մլն
Փոքր	մինչև 50	500 մլն	500 մլն
Միջին	մինչև 250	1500 մլն	1000 մլն

Համաձայն նշված օրենքի՝ փոքր և միջին ձեռնարկություններ չեն կարող համարվել «…վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, ներդրումային ֆոնդերը, ներդրումային ֆոնդի կառավարիչները, գրավատները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատները և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունները»:[48]

Փոքր և միջին ձեռնարկությունների բաշխումն ըստ չափերի 2012 թվականին ունեցել է հետևյալ պատկերը՝ գերփոքր 74,4, փոքր 20,2 և միջին 5,1 տոկոս: Ընդհանուր առմամբ, 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում գործել է 73925[49] փոքր և միջին ձեռնարկություն, ինչը կազմում է ակտիվ գործունեություն իրականացնող տնտեսվարողների ընդհանուր թվաքանակի 98%-ը: Ընդ որում, 2010-2012 թվականներին փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակը շարունակաբար աճել է՝ 2012 թվականին 2010 թվականի համեմատությամբ ավելանալով 25 %-ով (տե՛ս գծապատկերներ 8 և 9):

[47] «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք
[48] «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք
[49] Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ: Երևան 2013: SMEs_in_figures_Statistics_2010-2012_am



Գծապատկեր 8 Փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակը 2010-2012թթ



A- Գերփոքր, B-Փոքր, C-Միջին

Գծապատկեր 9 Փոքր և միջին ձեռնարկությունների բաշխումն ըստ չափի 2010-2012թթ

Փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտի տնտեսական վիճակի փոփոխության ինդեքսը (փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ) ունի հետևյալ պատկերը[50]:

1. գերփոք - 0,26 %,
2. փոքր - 0,36 %,
3. միջին -0,75 %,
4. Ընդամենը -0,63 %:

[50] Ինդեքսի հաշվարկն իրականացվել է հարցման արդյունքներով, որտեղ. (+2) արժեքը ներկայացնում է զգալի աճը, (+1)-ը՝ չափավոր աճը, (0)-ը՝ չփոփոխվելը, (-1)-ը՝ չափավոր անկումը և (-2)-ը՝ զգալի անկումը:

0-ից ցածր ցուցանիշը վկայում է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի տնտեսական վիճակի անկման մասին: Այս տվյալներն անուղղակիորեն հաստատվում են նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներով: Մասնավորապես, մշակող արդյունաբերությունում մինչև 5 աշխատող ունեցող տնտեսվարողների մոտ 2013 թվականի առաջին կեսում գրանցվել է 40.8%-ով անկում, իսկ 6-50 աշխատող ունեցողների մոտ այն կազմել է 1.3%[51] :

Վերջին տարիներին զգալիորեն ցածր է եղել նաև մասնագիտական ծառայություններից օգտված փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ: Մասնավորապես, շուկայի հետազոտությունների իրականացման և բիզնես պլանի մշակման գծով մատուցված ծառայությունների դեպքում այն համապատասխանաբար կազմել է 6% և 5%:

Համեմատական վերլուծության արդյունքում պարզվում է, որ այլ երկրների համեմատությամբ Հայաստանում քիչ են գերփոքր ձեռնարկություններ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակում 2011թվականին[52]

Երկրներ	Ընդամենը	Գերփոքր	Փոքր	Միջին
Ալբանիա	99,8	95,6	3,5	0,7
Բուլղարիա	99,8	90,3	8,0	1.5
Ռումինիա	99,0	90,7	6,9	1,3
Մոլդովա	97,7	75,0	19,0	3,0
Թուրքիա	99,8	95,6	3,8	0,5
Վրաստան	91,5	…	81,5	10,0
Ուկրաինա	99,5	89,0	10,0	0,5
Հայաստան[53]	98,0	73	20,0	4-5

[51] Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակարական ծառայություն: Երևան 2013 (http://armstat.am/file/article/ashx_06_13.pdf)

[52] Emerging Entrepreneurship and SME Policy Development in the BSEC After Economic Crises,Konrad-Adenauer-Stiftung, Istanbul 2011

Պետք է նշել, որ գոյություն ունեն նաև որոշակի առանձնահատկությունների փոքր և միջին ձեռնարկությունների «տարիքի» հետ կապված, ինչը հիմնականում պայմանավորված է անցումային տնտեսությամբ: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում նման ձեռնարկությունների 35,7 տոկոսը հիմնվել են 1990-1999 թվականներին: Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում հիմնվել են դրանց ընդամենը 25,8 տոկոսը, այսինքն Հայաստանում փոքր և միջին ձեռնարկություններն ավելի երիտասարդ են: Միաժամանակ, ՌԴ-ում փոքր և միջին ձեռնարկությունների ճյուղային բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը. առևտուր՝ 45.9%, ծառայություններ՝ 25.2%, արդյունաբերություն՝ 15.4%:[54]

2012 թվականին ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գերակշիռ մասը (58,7%) գործել է մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտում, որոնց 98%-ը կազմել են գերփոքր ձեռնարկությունները: Մշակող արդյունաբերության մեջ դրանց թիվը 2012 թվականին կազմել է 6,061 կամ ընդհանուր քանակի 8,2%-ը: Ընդ որում, մշակող արդյունաբերության ոլորտում ընդգրկված սուբյեկտների 40%-ը ներգրավված է եղել պարենային, իսկ 60%-ը ոչ պարենային արտադրության մեջ (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4[55]

Փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակն ըստ տնտեսության ճյուղերի

	2010				2011				2012			
	Գ	Փ	Մ	**ՓՄՁ**	Գ	Փ	Մ	**ՓՄՁ**	Գ	Փ	Մ	**ՓՄՁ**
Գյուղատնտեսություն,անտառտնտեսություն և ձկնորսություն	357	55	23	**435**	443	56	26	**525**	467	60	24	**551**
Հանքագործական արդյունաբերություն և բացիանքերի շահագործում	240	40	10	**290**	275	43	12	**330**	300	44	12	**356**

[53] Առանց գյուղատնտեսական գործունեություն ծավալող գյուղատնտեսական տնտեսությունների. «Ամերիա» ՓԲԸ 2013: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում. Ներկա իրավիճակը, զարգացման միտումները և օգտագործվող գործիքները: Ամբողջական հետազոտության կարճ ներկայացում: www.ameria.am SME_Research_Ameria_MAS,

[54] Emerging Entrepreneurship and SME Policy Development in the BSEC After Economic Crises,Konrad-Adenauer-Stiftung, Istanbul 2011

[55] Ճյուղերի դասակարգումը կատարված է ըստ NACE 2 դասակարգիչի:
Գ-գերփոքր սուբյեկտ, Փ- փոքր սուբյեկտ, Մ-միջին սուբյեկտ, ՓՄՁ- ընդամենը ՓՄՁ:

Մշակող արդյունաբերություն	4384	521	128	**5033**	5123	526	146	**5795**	5390	527	144	**6061**
ոչ պարենային	**2659**	**199**	**82**	**3066**	**3086**	**332**	**90**	**3508**	**3274**	**336**	**91**	**3701**
պարենային	**1767**	**322**	**47**	**2013**	**2089**	**196**	**57**	**2342**	**2168**	**195**	**54**	**1420**
Շինարարություն	825	322	96	**1243**	887	361	102	**1350**	960	364	96	**1420**
Մեծախախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	34984	676	90	**35750**	40293	716	105	**41114**	42506	761	109	**43376**
Փոխադրումներ նև պահեստային տնտեսություն	1619	251	38	**1908**	2179	253	40	**2472**	3474	257	41	**3772**
Կացության և հանրային սննդի կազմակերպում	1974	212	26	**2212**	2400	249	31	**2680**	2528	262	33	**1360**
Տեղեկատվություն և կապ	898	146	31	**1075**	1065	164	34	**1263**	1145	184	31	**1360**
Կրթություն	183	112	26	**321**	226	115	26	**367**	267	107	26	**400**
Առողջապահություն և բնակչության սոցիոլական սպասարկում	751	276	149	**1176**	826	291	153	**1270**	898	299	148	**1345**
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	121	40	469	**401**	131	48	580	**429**	137	46	612	
Այլ	8296	871	188	**9355**	9835	919	182	**10936**	10732	926	191	**11849**

Պետք է նշել, որ միջին հաշվով, գերփոքր, փոքր և միջին ձեռնարկություններում աշխատողների թվաքանակը կազմել է համապատասխանաբար 1,4, 20 և 104 մարդ: Գծապատկերներ 10-ը և 11-ը ցույց են տալիս, որ հանրապետությունում 2010-2012 թվականներին զբաղվածների ընդհանուր թվաքանակիի կրճատման պայմաններում փոքր և միջին ձեռնարկություններում դրանց տեսակարար կշիռը աճել է՝ 2010 թվականի 21,8 %-ից 2012 թվականին հասնելով 24,8%: Զբաղվածների տեսակարար կշռով առաջատար են շինարարության, հանրային սննդի կազմակերպման, զվարճանքների, առևտրի և մշակող արդյունաբերության ոլորտները:



Գծապատկեր 10. Փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների համադրումը զբաղվածների ընդհանուր թվին 2010-2012թթ[56]



Գծապատկեր 11. Փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվում 2010-2012թթ[57]

Չնայած 2010-2012 թվականներին փոքր և միջին ձեռնարկությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի անվանական աճին՝ դրանց տեսակարար կշիռն ընդհանուր հարկային եկամուտներում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է և

[56] «Ամերիա» ՓԲԸ 2013: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում. Ներկա իրավիճակը, զարգացման միտումները և օգտագործվող գործիքները: Ամբողջական հետազոտության կարճ ներկայացում: www.ameria.am SME_Research_Ameria_MAS,

[57] «Ամերիա» ՓԲԸ 2013: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում. Ներկա իրավիճակը, զարգացման միտումները և օգտագործվող գործիքները: Ամբողջական հետազոտության կարճ ներկայացում: www.ameria.am SME_Research_Ameria_MAS,

2012 թվականին կազմել 26,6 տոկոս: Այս բնագավառում առաջատարներն են առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում գործող փոքր և միջին ձեռնարկությունները: 2012 թվականի ընթացքում դրանց ընդհանուր շրջանառությունը կազմել է 1.554,679 մլն դրամ՝ գերազանցելով 2010 թվականի նույն ցուցանիշը 237,471 մլն դրամով կամ 18%-ով: Ընդ որում, շրջանառության գրեթե կեսը (47%.) 2012 թվականի տվյալներով բաժին է ընկել առևտրի ոլորտին: Միջին հաշվով 1 գերփոքր, փոքր և միջին ձեռնարկության շրջանառությունը կազմել է համապատասխանաբար 5,9 մլն, 124 մլն և 696 մլն դրամ:[58]

ՀՀ փոքր և միջի ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ՁԱԿ) 2010-2012 թվականների հաշվետվության շրջանակներում գնահատվել է ոլորտի սուբյեկտների և դրանց առանձին խմբերի մասնակցությանը ՀՆԱ-ի ձևավորմանը[59]: Վերջինիս մեջ ոլորտի կշռի գնահատման համար, նախ և առաջ, ուսումնասիրվել են տնտեսության առանձին շրջանառության ծավալների և համապատասխան ճյուղերի համախառն ավելացված արժեքի հարաբերությունների կայունությունը: Այնուհետև ուսումնասիրվել են ոլորտի սուբյեկտների շրջանառության ծավալների կշիռները (գործակիցները) տվյալ ճյուղի բոլոր կազմակերպությունների շրջանառության ծավալների մեջ: Կիրառելով նշված գործակիցները՝ գնահատվել են տնտեսության ճյուղերում ոլորտի սուբյեկտների կողմից ստեղծված ավելացված արժեքները, որոնց համախառն գումարի (ըստ տնտեսության ճյուղերի) հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է ՀՆԱ մեջ ոլորտի կշիռը (տե՛ս աղյուսակ 5):

[58] Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ: Երևան 2013: SMEs_in_figures_Statistics_2010-2012_am

[59]Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ: Երևան 2013: SMEs_in_figures_Statistics_2010-2012_am

Աղյուսակ 5

Փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցությունը ՀՆԱ-ի ձևավորմանը 2010-2012 թվականներին (ըստ կազմակերպության չափերի)

Տարիներ / Կազմակերպություն	2010	2011	2012
ՓՄՁ, այդ թվում՝	27,2	25,9	27,1
գերփոքր	4,7	5,4	5,1
փոքր	9,5	9,1	9,4
միջին	13	11,4	12,3

Տնտեսական զարգացման ներկա փուլում Հայաստանի Հանրապետությունում լուրջ հիմնախնդիրներ գոյություն ունեն փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի հետ կապած, որում ընդգրկված սուբյեկտների զգալի մասը, չունենալով ֆինանսական և վարկային միջոցներից օգտվելու հնարավորություններ, զրկված են նորամուծությունների իրականացման հնարավորությունից: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, փոքր և միջին ձեռնարկություններն ունեն ներուժային մեծ հնարավորությունների նորամուծական զարգացման համար: Միաժամանակ, առկա դժվարություններով հանդերձ, ոլորտում գործունեություն իրականացնող որոշ տնտեսավարող սուբյեկտներ կարողանում են հաջողությամբ կիրառել նորամուծություններ, որոնց արդյունքներն ակնառու են:

Պետք է նշել, որ հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում քիչ չեն ընտանի կենդանիների, ձկան և թռչունների անասնաբուժությամբ, անասնաբուծությանբ, այդ կենդանիների խնամքի և դրանց կերի, հիգենիայի պարագաների ներմուծման և իրացման հարցերով զբաղվող սուբյեկտները: Դրանցում նորամուծությունների զարգացումը կխթանի ինչպես բուն արտադրության, այնպես էլ սպասարկման ու առևտրի ոլոտներին: Հանրապետության փոքր և միջին

ձեռնարկատիրության ոլորտում նորամուծական գործունեության վերաբերյալ առավել որոշակի պատկերացում կազմեու համար դիտարկենք մի քանի ձեռնարկությունների գործունեության ուղղվածությունը և դրանց նորամուծական զարգացման հնարավորությունները:

«Դոմզոո» ՍՊԸ-ն ներդրել է ռենտգենասկոպիկ և սոնոսկոպիկ սարքավորումներ՝ 10 և 20 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ, ինչպես նաև վիրաբուժական հարմարավետ և հագեցված սեղաններ, վիրաբուժական լամպեր (2000 ԱՄՆ դոլար և 1000 ԱՄՆ դոլար): Կատարված նորամուծությունները կազմակերպությանն ապահովել են տարեկան լրացուցիչ 5 մլն դրամ եկամուտ: «Հաֆոներ» ՍՊԸ-ն կիրառում է ախտորոշիչ էքսպրես տեթեր, որոնց օգտագործման ինքնարժեքն է 4000 դրամ, իսկ հասույթը՝ 7000 դրամ: «Վետլայն» ՍՊԸ-ն ներդրել է էքսպրես լաբորատորիա 7500 ԱՄՆ դոլար արժողությամբ, որը նրան ապահովում է 12000 դրամ հասույթ յուրաքանչյուն հետազոտվողից:[60]

«Լյումինե» ՍՊԸ-ն ունի չորս աշխատող և զբաղվում է արևային էներգիայի ուղիղ փոխակերպման սարքերի արտադրությամբ: Այդ նպատակով ներդրել է ֆոտովոլտային թիթեղներ և մետաղական անկյունակներ, հիմնել արտադրատեսակի արտադրություն և թողարկում է էլեկտրական էներգիայի ստացման «Photo Voltic panels» արևային մարտկոցներ: Միավոր արտադրանքի ինքնարժեքը կազմում է 32000 դրամ, իրացման գինն է 50000 դրամ: Տարեկան իրացման ծավալը կազմում է 5 մլն դրամ՝ ապահովելով 18 տոկոս շահութաբերություն:

«Բեյզ Մեթըլզ» ՓԲԸ-ն լեռնահանքայինյին ոլորտի ձեռնարկություն է, որը զբաղվում է հանքաքարի վերամշակմամբ: Ընկերությունը թողարկում է ոսկու և արծաթի պարունակությամբ պղնձի խտանյութ, իսկ արտադրական կարողությունը կազմում է տարեկան 600000 տ: Ներկայումս իրականացվում են նոր հանքահարստացուցիչ գործարանի կառուցման աշխատանքներ, ինչը հնարավորություն կտա վերամշակել տարեկան մոտ 2 մլն տոննա հանքաքար: Բացի վերամշակման համար նախատեսված հիմնական միջոցներից, ընկերությունը ձեռք է բերել նաև գերժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներ և տեխնիկական միջոցներ: Մասնավորապես, հանքաքարի հարստացման ֆաբրիկայում նախատեսվում է օգտագործել FLS

[60] Այս և մյուս կազմակերպությունների տնտեսական գործունեության վերաբերյալ ցուցանիշները վերցված են համապատասխան կազմակերպություններից

ընկերության, իսկ դրա արդյունահանման համար արդեն իսկ կիրառվում են Caterpillar ընկերության մեքենա-սարքավորումները: Բացահանքում հորատման աշխատանքներն իրականացվում են Atlas Copco ընկերության արագագործ հորատման հաստոցներով, որոնց կիրառումն ընկերությանը հնարավորություն է տալիս հանքաքարի արդյունահանման փուլում 1 տոննա լեռնային զանգվածի մշակման մասով ինքնարժեքն իջեցնել (բացահանքի պայմաններում) 3.5 ԱՄՆ ոլարից մինչև 1.2 ԱՄՆ դոլար: Իսկ հանքաքարի վերամշակման փուլում ակնկալվում է 1տ հանքաքարի ինքնարժեքը 12 ԱՄՆ դոլարից հասցնել 4 ԱՄՆ դոլարի: Նոր տեխնոլոգիաների նման նորամուծությունը ընկերությանը հնարավորություն է տվել իրականացնել ավելի փոքր պարունակություն ունեցող հանքաքարի տեսակների վերամշակում, ինչն, իր հերթին, նպաստել է ընկերության մրցունակության բարձրացմանը՝ ապահովելով ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների ընդլայնում: Ցածր ինքնարժեքը նպաստում է կայուն շահութաբերության ապահովմանը և, հետևաբար, նաև ներգրավված վարկային միջոց-ների վերադարձելիությանը:

Նոր տեխնոլոգիաների կիրառումը լեռնահանքային արտադրության ոլորտում, բացի նշված ձեռքբերումներից, լուրջ ազդեցություն է ունենում նաև աշխատակիցների մասնա-գիտական ունակությունների բարձրացման վրա: Մասնավորապես, ընկերության անձնա-կազմը համեմատաբար կարճ ժամկետներում հատուկ ուսումնառության պայմաններում կարողանում է տիրապետել գերժամանակակից տեխնոլոգիաների կառավարման գոր-ծին, ինչն, իր հերթին, ապահովում է աշխատուժի շուկայական արժևորում: Ներկայումս ընկերությունում ընդգրկված են 1300 աշխատակիցներ, ընկերությունն աշխատում է շուրջօրյա ռեժիմով, իսկ տարեկան միջին աշխատաժամանակը կազմում է 345 օր: Առ այսօր ընկերության ավելի քան տասամյա գործունեության ընթացքում իրականացվել են 100 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ, իսկ 2014-15 թվականներին դրանք կկազմեն 130 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, ներդրումներն իրականացվում են ինչպես ընկերության սեփական միջոցների, այնպես էլ վարկային ռեսուրսների հաշվին:

«Վան» ՍՊԸ-ում տեսախցիկների տեղադրման արդյունքում կրճատվել են աշխա-տանքի վարձատրության վրա կատարվող ծախսերը (վերացել է գիշերային երեք պահակ ունենալու անպրաժեշտությունը), նվազել են կորուստներն ու կատարվող գողությունները, բարելավվել են աշխատանքային հարաբերությունները: Լազերային սարքի կիրառումը

քչացրել է մակնիշավորման վրա կատարվող տպագրական ծախսումները և խոտանի քանակը: Նշված նորարարությունները «Վան» ՍՊԸ-ում հանգեցրել են աշխատանքի արտադրողականության աճի, աշխատանքի կազմակերպման բարելավման և թողարկվող աչտադրանքի որակի բարձրացման:

Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների փորձը, նորարարական գործունեությամբ զբաղվող ընկերությունների տնտեսական գործունեության արդյունքներն ավելի բարձր են մյուսների համեմատ: Նույն միտումն առկա է նաև փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում, ինչի մասին են վկայում նաև վերը բերված տվյալները:

Համաձայն որոշ միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունների, Հայաստանում նորարարական գործունեության մակարդակը բարձր է այլ երկրների համեմատությամբ: Ընկերությունների մոտ 67%-ն նորարար արտադրանք է թողարկել շուկայի համար (վերջին 3 տարում), իսկ մոտ 40%-ը կիրառում է լիզենզավորված տեխնոլոգիա օտարերկրյա կազմակերպությունից: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համար նման առանձնահատկություն, մեղմ ասած, չի նկատվում: Շուկայի համար յուրահատուկ արտադրանքի ներդրման մասին (վերջին 1 տարում) նշել են միայն տվյալ ոլորտին պատկանող սուբյեկտների 6%-ը, իսկ արտադրական նորարարության մասին՝ 14%-ը: Հարցման համաձայն Հայաստանում բնակչության միայն 2%-ն է նշել բիզնես ունենալու մասին, Վրաստանում՝ 4%, Եվրոպայի և միջին Ասիայի (ECA) տարածաշրջանում՝ 15%[61]:

Այսպիսով, կարող ենք նշել, որ հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական գործունեության առումով գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրների, որոնց ազդեցության արդյունքում ստեղծված իրավիճակը հեռու է ցանկալի մակարդակից: Դրանց լուծման գործում կարևոր նշանակություն ունի վարվող պետական քաղաքականությունը, որը համապատասխան խթանների ձևավորման միջոցով պետք է նպաստի փոքր և միջին ձեռնարկութոյունների նորամուծական զարգացմանը: Նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինը:

[61] ՀԲ «Ձեռնարկատիրության խթանումը Հայաստանում» զեկույց (2013)

3.2. Փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական գործունեության պետական խթանման խնդիրները

Տնտեսապես զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությունն ընդգրկում է նաև բարձր տեխնոլոգիաներ օգտագործող և գիտատար արտադրանք թողարկող արտադրությունները: Նշված սուբյեկտները զբաղվում են նաև նորամուծական գործունեությամբ, իրականացնում են գիտատեխնիկական մշակումներ, նոր տեխնիկայի ստեղծման նախագծեր և կատարում են հետազոտական աշխատանքներ:

Անշուշտ, տնտեսական զարգացման ներկա փուլում խորացող մրցակցությունը ստիպում է տվյալ ոլորտի սուբյեկտներին ձեռնարկել համապատասխան միջոցներ նորամուծական զարգացման նոր չափանիշներին և պահանջներին բավարարելու համար: Վերջիններս, շնորհիվ իրենց առավելությունների, հնարավորություն ունեն համեմատաբար արագ և քիչ ծախսերով յուրացնել նոր տեխնոլոգիաներն ու նորարարությունները, ճկուն կերպով հարմարվել շուկայի պահանջներին՝ զբաղվելով նոր ապրանքատեսակների արտադրությամբ և կիրառելով սպասարկման ժամանակակից ձևեր:

Ընդհանուր առմամբ, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում տեղի ունեցող նորամուծական գործընթացներին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- նոր արտադրանքների և տեխնոլոգիաների մշակման և իրացման լայն հնարավորությունները,
- մրցակցային նոր արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների արտադրությունը և մատուցումը,
- նորամուծության արտադրության և տեխնոլոգիաների մեծ ազդեցությունը սեփական ակտիվների շրջանառության և շահույթի վրա:

Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեն փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում նորամուծությունների իրականացման համար մի շարք տարբերակներ, որոնցից ամենահեռանկարայինը և մրցակցայինը համարվում է համակարգային ձևը: Դրա հիմնական բնութագրիչ գծերն են նախագծի հիմնավոր մշակումը, ռիսկի հավանականության օբյեկտիվ գնահատումը, գործունեության կազ-

մակերպման մանրամասն ուսումնասիրությունը, ֆինանսական աղբյուրների և դրամական միջոցների երաշխավորվածությունը:

Նորամուծության և նոր տեխնոլոգիաների ներդրման բնագավառում փոքր և միջին ձեռնարկատիրության հարաբերական առավելությունը դրսևորվում է, հատկապես, արդյունաբերության այն ճյուղերում, որոնք գտնվում են արտադրական ցիկլի սկզբնական փուլերում: Ոլորտի սուբյեկտները հաճախ ենթակապալային պատվերների շրջանակներում գործընկերային փոխհարաբերությունների մեջ են գտնվում խոշոր կազմակերպությունների հետ՝ ապահովելով արտադրական ցիկլի անընդհատությունը: Այլ կերպ ասած, նրանք հանդես են գալիս խոշոր ձեռնարկություններին յուրահատուկ սպասարկողի դերում՝ ապահովելով արտադրական շղթայի բնականոն գործունեությունը: Փոքր և միջին ձեռնարկությունները սեփական նորամուծական ներուժի շնորհիվ դառնում են խոշոր ձեռնարկությունների տեխնոլոգիական արդիականացման գործընթացի յուրահատուկ մասնակիցներից:

Գաղտնիք չէ նաև այն, որ խոշոր կազմակերպությունների համեմատությամբ փոքր և միջին ձեռնարկությունների ակնհայտ առավելություններից է նոր տեխնոլոգիաների ներդրմանն ավելի արագ արձագանքելու ընդունակությունը: Սակայն վերջիններս լուրջ դժվարություններ ունեն դրանց ներդրման ու տեղեկատվական ապահովվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ սահմանափակ ֆինանսական միջոցների պատճառով: Անշուշտ, այս խնդրի լուծման գործում խիստ կարևորվում է պետության մասնակցությունը, որի կողմից ցուցաբերվող աջակցությունը պետք է ուղղված լինի հայրենական ապրանքների արտադրության խթանմանը, ինչպես նաև ներքին և արտաքին շուկաներում տեղական արտադրանքի մրցակցային ներուժի բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ, նորամուծական ցանկացած նախագծի ֆինանսավորմանը պետք է նախորդի երկու փոխկապակցված քայլերի իրականացում՝ ըստ իրականացման հնարավոր տարբերակների նախագծի ֆինանսական գնահատում և դրանցից լավագույնի ընտրություն: Այդ խնդիրների լուծումը թույլ է կտա.

- հիմնավորել նորամուծության իրականացումը և որոշել ֆինանսական միջոցների պահանջարկը,
- կանխատեսել նորամուծության շուկայական իրացման հավանականությունը և որոշել ներդրումների ֆինանսավորման աղբյուրները,

- Կանխատեսել ներդրումները ետգնման ժամկետը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը ֆինանսական բավարար ռեսուրսների բացակայությունն է, ինչը երկարաժամկետ փոխառու միջոցների դժվարամատրչելիության ու վարկերի բարձր տոկոսադրույքների հետևանք է հանդիսանում: Նման իրավիճակն, ի թիվս սուբյեկտիվ պատճառների, ունի նաև իր օբյեկտիվ բացատրությունը՝ հատկապես պայմանավորված ֆինանսական ներդրումների տեսանկյունից ոլորտի բավականաչափ ռիսկային լինելու հանգամանքի հետ: Նման իրավիճակում, անշուշտ, նորամուծական նախագծերի ֆինանսավորման խնդիրը ձեռք է բերում կարևոր նշանակություն: Այս առումով, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում խիստ արդիական է փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների վարկային և ներդրումային պահանջները բավարարող ֆինանսական կառույցների և ինստիտուտների, ինչպես նաև այդ նպատակով կիրառվող տեխնոլոգիաների զարգացումը: Ֆինանսական միջոցների հասանելիության ապահովումն, ակնհայտորեն, հնարավորություն կստեղծի ոչ միայն աջակցել գործող սուբյեկտներին, այլ նաև կխթանի նորերի ստեղծմանը: Նշված խնդիրների լուծման նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է կիրառվել հետևյալ մեխանիզմները:

1. Վարկային երաշխիքների ծրագրերի մշակում և իրականացում՝ հիմնված պետական և մասնավոր կապիտալի միջև ներդրումային ռիսկի բաշխման վրա: Երաշխիքային մեխանիզմների նման համակարգն ընդունակ կլինի ապահովել ձեռնարկատիրական նախագծերի և ծրագրերի արտոնյալ և հեռանկարային ֆինանսավորում, իսկ դրանց անհաջող ընթացքի դեպքում՝ փոխհատուցել անխուսափելի կորուստները: Վարկային երաշխիքների ծրագրերի ֆինանսավորման աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային միջոցները,
2. Լիզինգի զարգացումը: Փոքր և միջին ձեռնարկությունների համար լիզինգային գործառնությունները երբեմն հանդիսանում են արտադրության վերազինման և արդիականացման միակ միջոցը: Նշված սուբյեկտների համար լիզինգային ֆինանսավորման հնարավորություններն ավելի մեծ են, քան բանկային փոխառությունների ներգրավման շանսերը: Դա հետևանք է երաշխիքների մասին

պարզ պայմանավորվածությունների, հաճախորդի ֆինանսական կենսագրության հանդեպ մեղմ պահանջների և կիրառվող պարզ ընթացակարգերի: Հաշվի առնելով փոքր և միջին ձեռնարկությունների համար գոյություն ունեցող ավելի բարձր ֆոնդահատույցը՝ լիզինգը թույլ է տալիս նվազեցնել ներդրումային նախագծի ետգնման ժամկետները և բարձրացնել միջոցների օգտագործման արդյունա-վետությունը:

ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում նորամուծությունների ֆինանսավորման հիմնախնդիրները հիմնականում կապված են արտադրության ծավալների անկման, ինչպես նաև սեփական կապիտալի և ներդրումների ոչ բավարար ծավալների հետ: Համաձայն փորձագիտական գնահատականների, նման իրավիճակի պատճառներ են.

- նորամուծության կազմակերպությունների գործունեության դադարեցումը և համապատասխան մասնագետների արտահոսքը,
- արտադրական կարողությունների հիմնական զանգվածի երկարատև սառե-ցումը, տեխնիկայի մաշվածության բարձր աստիճանը, միջազգային չափորոշիչներին տեխնոլոգիաների անհամապատասխանությունը,
- թողարկվող արտադրանքի տեխնիկական ցածր մակարդակը և արտահանման ծավալների անկումը,
- անհրաժեշտ հումքանյութային ռեսուրսների անբավարար ծավալը,
- կադրերի վերապատրաստման համակարգի բացակայությունը,
- թողարկվող արտադրանքի նորացման պայմանների բացակայությունը,
- տեղական բնական ռեսուրսների սահմանափակ օգտագործումը:

Միաժամանակ ՀՀ–ում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում նորամուծական գործունեության վրա բացասաբար են ազդում այնպիսի գործոններ, ինչպիսիք են.

- տնտեսության անկայունությունը և օրենսդրական դաշտի անկատարությունը,
- երկարաժամկետ ներդրումների պետական աջակցության գործուն մեխանիզմների բացակայությունը,
- սեփականատերերի և մենեջերների կառավարչական ունակությունների բացակայությունը,

- շուկայական ենթակառուցվածքի թերզարգացածությունը,
- կոռուպցիայի բարձր մակարդակը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում նորամուծական գործունեությունը կապված է բարձր ռիսկերի հետ[62]: Ընդ որում, այն ձեռնարկության չափերի աճին զուգընթաց նվազում է՝ պայմանավորված գործունեության ծավալների ավելացմամբ:

Նորամուծական նախագծերի ֆինանսավորումը գնահատվում ու հիմնավորվում է ցուցանիշների համակարգով, որը հիմնականում արտացոլում է ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը և թույլ է տալիս բացահայտել, թե նորամուծության որ տեսակն է նախագծի կատարման փուլերից ավելի շատ կախված[63]: Մասնավորապես, առաջին փուլում կատարվում է նորարարության յուրացում, որն իրացվում է սեփական արտադրությունում: Այդ փուլում տեղի է ունենում արտադրության վերակառուցում և գործող կազմակերպությունների ինտեգրացում: Երկրորդ փուլում արձանագրվում են տեխնիկական նվաճումների արդյունքները և բարձրանում է նոր տեխնիկայի արտադրության տեսակարար կշիռը: Երրորդ փուլում ավարտվում է արտադրության վերակառուցումը և աստիճանաբար կրճատվում է նոր տեխնիկայի ներդրման պահանջարկը: Չորրորդ փուլում կրճատվում են տեխնիկայի նորացման տեմպերը և գնալով սահմանափակվում է նորամուծության արտադրանքի կիրառումը: Այդ միտումը շարունակվում է մինչև նոր սերնդի մեքենաների արտադրությունը, որը փոխում է նորամուծության ուղղվածությունը:

Ներդրումները սկսվում են առաջին փուլից և առավելագույն չափի են հասնում չորրորդ փուլում, երբ շարունակվում է նորույթի աճը: Այնուհետև այն դանդաղում է և նվազում են վաճառքի ծավալները՝ պայմանավորված նորույթի շուկայական մրցունակության աստիճանաբար անկմամբ: Գործնականում, ներդրումները սկսում են նվազել չորրորդ փուլի կեսից, որի հետ համընկնում է նաև շահույթի կրճատումը: Ներդրումներն ու շահույթը սկսում են աճել երրորդ փուլից, առավելագույն չափի են հասնում չորրորդ փուլի կեսին, նվազում են չորրորդ փուլի վերջին ու նվազագույն չափի

[62] Богатин Ю.В. Оценка эффективности бизнесаи и инвестиций. М. Юнити-Дана, 2001г. стр. стр. 46

[63] Мелкумов Л.С. Экономическая оценка эффективности инвестиций и финансирование инвестиционных проектов. М.: ИКЦ «ДИС», 2005г. стр. . 76

են հասնում նորույթի աճի տեմպերի և վաճառքի ծավալների անկման պատճառով: Ներդրումների ետգնման համար, որպես հիմնական չափանիշ, կիրառվում է ներդրումներ/շահույթ հարաբերակցության գործակիցը, քանի որ ներդրումներն ու շահույթը ձևավորվում են միևնույն դաշտում, փոխպայմանավորում են միմյանց և համընկնում են իրենց աճի և նվազման բնույթով:

Ինչպես արդեն նշվեց, նորամուծությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ունի պետական խթանման համակարգը, որի արդյունավետ գոևրծունեությամբ է պայմանավորված գիտատեխնիկական գործընթացների ակտիվացումը և նորամուծության նպատակների ձեռքբերումը: Նորամուծական գործունեությունը պետք է նպաստի.

- կազմակերպության կամ ճյուղի գիտատեխնիկական, ֆինանսական և արտադրական ներուժի զարգացմանը,
- արտադրության ծրագրային զարգացման խնդիրների և ուղղվածության իրականացմանը,
- արտադրանքի գիտատեխնիկական մշակման, յուրացման և թողարկման աշխատանքների կազմակերպմանը,
- նյութական և ֆինանսական ռեսուրսների ապահովման աղբյուրների լիարժեք օգտագործմանը,
- նորամուծության իրականացման ինտենսիվ ընթացակարգերի կիրառմանը, միջազգային գիտատեխնիկական համագործակցության ակտիվացմանը,
- ներդրումային միջոցների ներգրավմանը:

Փոքր և միջին ձեռնարկություններում նորամուծական գործունեության զարգացման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պայմանները:

1. Ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայությունը: Փոքր և միջին ձեռնարկատիրության շատ սուբյեկտներ դրանց հետ կապված ունեն լուրջ դժվարություններ և արտադրանքի իրացման սահմանափակ շուկա:
2. Նորամուծությունների փոխկապակցվածության բացակայությունը, որն առանձին ձեռնարկությունների համար կորուստների և լրացուցիչ ծախսերի պատճառ է հանդիսանում: Բացի այդ, նորամուծական որոշ գործընթացներ չեն կարող իրականացվել առևտրական հիմքերի վրա:

3. Նորամուծական նախագծերի համար մի շարք դեպքերում բնութագրական են ակնկալվող արդյունքների և ժամանակային լագի անորոշությունը: Իրականացնելով ներդրումներ, ձեռնարկությունները դիմում են նորամուծական ռիսկի, որը կախված է տարբեր գործոններից, տնտեսական գործունեության արյունավետությունից, արտաքին միջավայրի փոփոխություններից և այլն:

Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, ինչպես տնտեսության, այնպես էլ թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացման, արտադրական ռեսուրսների լիարժեք օգտագործման և արտահանման հիմնական նախադրյալներից մեկը նորամուծության տնտեսական քաղաքականության իրականացումն է: Վերջին տարիներին հանրապետությունում դրա իրականացման իրավական հիմքերի ձևավորման նպատակով ընդունվեց «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը, մի շարք պատճառներով պայմանավորված, չապահովեց նորարարական գործունեության զարգացումը, ինստիտուցիոնալ կառույցների կայացումը, վենչուրային ֆոնդերի ստեղծումը և գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ծավալների ընդլայնումը: Այդ ուղղությամբ իրականացվող ներդրումների շարունակական կրճատման և բյուջետային համեստ հատկացումների պայմաններում հանրապետությունում նորամուծական գործունեության վիճակը դեռևս հեռու է ցանկալի մակարդակից:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկությունների վնասաբերությունն անվճարունակության հիմնական պատճառներից է, իսկ վճարունակության ապահովումն ուղղակիորեն կապված է փոխառու միջոցների ներգրավման և դրանց սպասարկման հնարավորությունների առկայության, ինչպես նաև նորամուծական գործունեության տարբեր ռիսկերի կառավարման հետ[64]: Մասնավորապես, տեխնոլոգիական ռիսկը կախված է նորամուծության տեխնիկական նախագծի բնույթից, տնտեսական ռիսկը՝ նորամուծության համար անհրաժեշտ ռեսուրսների և տնտեսավարող սուբյեկտի տրամադրության ներքո եղած միջոցների հարաբերակցությունից, իսկ շուկայական ռիսկը՝ նորամուծության շուկայում տիրող իրավիճակի անորոշությունից[65]: Բովանդակային

---

[64] Балабанов И.Т. Риск-менеджмент. М. Финансы и статистика,1996г. стр. 156

[65] Гранатуров В.М. Экономический риск, сушность, методы измерения. М.: Дело и сервис, 2010г. стр. 112.

առումով ռիսկերի տարբերություններով հանդերձ, բոլոր դեպքերում պահանջվում են հստակ երաշխիքներ՝ դրանց կորուստների փոխհատուցման համար:

Նորամուծությունների հետ կապված ռիսկերիի կառավարման համար հատկապես կարևորվում է.

1. պետական խթանումը, որը պետք է ուղղված լինի մրցակցության խրախուսմանը և ֆինանսական տարբեր օժանդակություններին,
2. նորամուծական գործընթացների համար իրավական հիմքերի և օրենսդրության կիրառման համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծումը,
3. նորամուծությունների իրականացման համար կադրային ապահովումը, ինչը ենթադրում է պետական ուսումնական ծրագրերում մասնագետների կողմից նորամուծությունների ընկալմանը և նրանց ստեղծագործական զարգացմանը նպաստող դրույթների ամրագրում,
4. նորամուծական տեղեկատվության ձևավորումը,
5. նորամուծության գործընթացների ինստիտուցիոնալ կարգավորումը և այդ նպատակով տնտեսության տարբեր ճյուղերում նորամուծություններ իրականացնող կամ դրանք խթանող համապատասխան պետական կառույցների ստեղծումը,
6. հասարակական և բնապահպանական ուղղվածություն ունեցող նորամուծությունների խթանումը, ինչը նշանակում է պետության կողմից գիտատեխնիկական զարգացում և բնապահպանության հավասարակշռություն ապահովող նորամուծություններին հատուկ աջակցության ցուցաբերումը և, միաժամանակ, բացասական հետևանքներ ունեցող գիտատեխնիկական փորձարկումների արգելումը,
7. նորամուծության գործունեության արժևորումը, ինչը կարող է տեղի ունենալ պետության կողմից գիտատեխնիկական նվաճումների և նորամուծությունների քարոզչության, նման գործունեությամբ զբաղվողների բարոյական խրախուսման և այլ եղանակներով,
8. նորամուծական գործընթացների պետական կարգավորումը, ինչը ենթադրում է պետության կողմից ցանկալի ուղղություններով դրանց տարածքային տեղաբաշխման խթանում,
9. պետության կողմից միջազգային գիտատեխնիկական ինտեգրացիայի խթանումը և հայրենական կազմակերպություններին այդ գործընթացներին ակտիվ ներգրավումը:

Նորամուծության գործընթացի պետական կարգավորումը ենթադրում է նաև գիտություն–արտադրություն սերտ կապի ապահովում, որի պայմաններում գիտության նվաճումները իրենց առարկայական արտացոլումը կստանան արտադրության ոլորտում: Միևնույն ժամանակ, այս դեպքում արտադրությունը հանդես կգա յուրահատուկ պատվիրատուի դերում, որի կողմից ներկայացվող պահանջները կդառնան գիտության ոլորտի գործունեության կարևոր ուղենիշ:

Ընդհանուր առմամբ, նորամուծության գործընթացը սկսվում է գիտական հետազոտություններից, որոնց առարկա են հանդիսանում այն երևույթները, որոնք կամ քիչ ուսումնասիրված են, կամ ընդհանրապես ուսումնասիրված չեն[66]: Նման հետազոտությունների արդյունքում բացահայտվում են նորարարության նոր ձևերի իրականացման ուղղությունները, խնդիրները և կարողությունները, որոնք նյութական, ֆինանսական, մտավոր, գիտատեխնիկական և այլ անհրաժեշտ միջոցների ամբողջություն են: Նորամուծության կարողությունը երկրի տեխնիկա-տնտեսական ամբողջության մի մասն է, որը բնորոշում է տնտեսական զարգացման ռազմավարության նպատակները, խնդիրները և իրացման մեխանիզմները[67]: Ներկա պայմաններում նորամուծության կարողությունների ստեղծման գործում կարևոր դեր է վերապահված պետական քաղաքականությանը, որի հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան նորամուծական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացումը և նման ընկերությունների աջակցության մարքեթինգային, խորհրդատվական, ներդրումային և տեխնոլոգիական միասնական համակարգի ստեղծումը: Նորամուծության կարողությունների զարգացումը, միևնույն ժամանակ, ենթադրում է իրավական դաշտի առկայություն, որը, ի թիվս այլ խնդիրների, կնպաստի նորամուծական գործունեությամբ զբաղվողների իրավունքների պաշտպանությանը, գիտատեխնիկական և նորամուծական քաղաքականության իրավական հիմքերի ստեղծմանը և այլն[68]:

Նորամուծությունների զարգացման պետական խթանման համակարգի

---

[66] Санто Б. Инновация как средство экономического развития. М.: Прогресс. 1990г. стр. 59

[67] Шайбаков Л.Ф. Инновационный процесс в регионе. М.: 1995, стр. 62

[68] Гопоненко Н. Инвестиции и инновацинная политика на этапе переходу к новому технологическому порядку. Вопросы экономики, 1997г. N 6, Завлин П.Н., Ипатов А.А., Кулагин А.С. Инновационная деятельность в условиях рынка, СПб, «Наука» 1994г. стр. 26

գործունեության կարևոր ուղղություններից է հարկային արտոնությունների տրամադրումը: Որպես կանոն, միջազգային պրակտիկայում առավել տարածված են հարկային արտոնությունների հետևյալ տեսակները.

- նորամուծությամբ պայմանավորված ծախսերի աճի դեպքում հարկերի նվազեցում,
- նորամուծական նախագծերի իրականացումից ստացած շահույթից գանձվող հարկերի նվազեցում,
- իրականացվող նորամուծական նախագծերի առաջնայնությամբ պայմանավորված արտոնությունների տրամադրում,
- պատենտներից, լիցենզիաներից, նոու-հաուից և այլ ակտիվներից ստացվող և մտավոր սեփականություն հանդիսացող շահույթի արտոնյալ պայմաններով հարկում և այլն:

Պետք է նշել, որ նորամուծությունների խթանման նշված գործիքները պետք է ընդգրկված լինեն պետական կարգավորման ընդհանուր համակարգի մեջ և կիրառվեն աջակցության մյուս ուղղությունների հետ փոխհամաձայնեցված կերպով: Նորամուծության զարգացման մեխանիզմների կիրառումը և դրա գիտատեխնիկական արդյունքների օգտագործումը ձևավորում են նորամուծության ազգային մոդելի ձևավորման հիմքերը:

Ընդհանուր առմամբ, միջազգային պրակտիկայում գոյություն ունեն նորամուծության զարգացման երեք հիմնական մոդելներ, ըստ որոնց կիրառման կարելի է առանձնացնել երկրների երեք խումբ[69]:

1. գիտության մեջ առաջատար, նորամուծության գիտաարտադրական ցիկլի բոլոր փուլերն ընդգրկող բազմաձավալ նպատակային նախագծեր իրականացնող երկրներ (Ամերիկա, Անգլիա, Ֆրանսիա),

2. նորամուծությունների տարածմանը և դրանց համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը կողմնորոշված երկրներ (Գերմանիա, Շվեդիա, Շվեյցարիա),

3. նորամուծությունների և նորամուծական ենթակառուցվածքների զարգացմանն աջակցող և գիտատեխնիկական նվաճումների տարածումն ապահովող երկրներ

[69] Ивонов М. Инновационная сфера: состояние и перспективы. Экономист. 1993г. №10. Кирина Л.В., Кузнецова С.А. Управление нововведениями. ИЭОПП СО РАН. Новосибирск, 1994г. стр. 12

(Ճապոնիա, Կորեա):

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ նորամուծության ցանկացած մոդելի ձևավորումը և կիրառումն իրենից ներկայանցում է բարդ և պատասխանատու խնդիր, որի ճիշտ կազմակերպումից է կախված ցանկալի արդյունքների ձեռք բերումը: Այն, ըստ էության, պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1. համապատասխանի տնտեսության զարգացման նպատակներին և ներգրավված լինի տնտեսական համակարգում,
2. կողմնորոշված լինի դեպի գիտության ու տեխնիկայի զարգացման առաջավոր ուղղությունները և նորարարության շուկայական պահանջարկը,
3. հարմարվի տնտեսական զարգացման նոր իրողություններին և փոփոխություններին,
4. պայմաններ ապահովի առաջավոր տեխնոլոգիաների կիրառման համար,
5. սահմանափակի ավելորդ ծախսերի հանգեցնող աշխատանքների կրկնությունը և զուգահեռությունը,
6. նպաստի նորամուծական բիզնեսի զարգացմանը, հատկապես փոքր և միջին ձեռնարկություններում:

Մեր կարծիքով, փոքր և միջին ձեռնարկությունների նորամուծական զարգացման համար հատկապես պետք է կարևորել հետևյալ քայլերը.

- տեղական հումքա-նյութային ռեսուրսների ներգրավումը նորամուծության արտադրության գործընթացներում,
- արտադրության տեխնիկա-տեխնոլոգիական մակարդակի բարձրացումը,
- ձեռնարկությունների կոոպերացումն ու ինտեգրացումը,
- գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կենտրոնացումը,
- ներդրումային նորամուծության միասնական նախագծերի և ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Նորամուծական նախագծերի իրականացման նկատմամբ ներկայացվող պահանջները բխում են ոչ միայն դրանց առանձնահատկություններից, այլև կազմակերպությունների նորարարության ներուժի ձևավորման և ֆինանսավորման հնարավորություններից: Ընդ որում՝ փոքր, միջին և խոշոր ձեռնարկություններում ունեն

տարբեր հնարավորություններ, ինչով պայմանավորված տարբեր են նաև նորամուծությունների նախագծերի ձևավորման և իրականացման նկատմամբ ներկայացվող պահանջները: Փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում հակված են նոր տեխնոլոգիական լուծումների մշակմանը, իսկ խոշորները՝ ժամանակակից մեքենասարքավորումների թողարկմանն ու կիրառմանը: Ընդ որում, առաջինները երկրորդների համեմատությամբ ի վիճակի են համեմատաբար փոքր ներդրումներով ավելի արագ վերակառուցվել:

Արտադրության նորամուծության և ներդրումների համալիր նախագծերի ընտրությունը և գնահատումը նպատակահարմար է իրականացնել որոշակի չափանիշների միջոցով: Դրանք դասակարգելիս պետք է նկատի ունենալ.

1. Կազմակերպության նորամուծության նպատակը և ռազմավարությունը.
   - նորամուծության նախագիծը համատեղելի է արդյո՞ք կազմակերպության ռազմավարության հետ,
   - նախագիծը կարո՞ղ է արդյոք ապահովել ռազմավարության փոփոխություն,
   - նախագիծը համապատասխանում է արդյո՞ք կազմակերպության ֆինանսական հնարավորությունների և հնարավոր ռիսկերի կառավարման պահանջներին:

2. Կազմակերպության նորամուծության շուկայական չափանիշները, որոնք ենթադրում են.
   - շուկայի տարողությունը,
   - արտադրանքի թողարկման փուլերը,
   - վաճառքի հնարավոր ծավալը,
   - շուկայական գնագոյացումը,
   - մրցակցության պայքարում դիրքը:

3. Նորամուծության գիտատեխնիկական չափանիշները, որոնք անհրաժեշտ են կազմակերպության գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ռազմավարության և անհրաժեշտ ռեսուրսների գնահատման համար:

4. Ֆինանսական չափանիշները, որոնք արտացոլում են.
   - գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների արժեքը,
   - արտադրական ներդրումները,

- առկա ֆինանսական միջոցները,
- շահույթի տարեկան ծավալը,
- շահութաբերությունը:

Այսպիսով, նորամուծական նախագծերի իրականացումը կարևոր նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման գործում: Հայտնի է, որ ՀՀ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալների աճի հետ հետ կապված խնդիրների լուծումն առավելապես պայմանավորված է արտադրական կարողությունների վերականգնմամբ ու լրիվ գործարկմամբ: Այս տեսանկյունից, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներն արտադրության վերապրոֆիլավորման դեպքում հնարավորություն են ստանում զգալիորեն կրճատել նորամուծական նախագծերի իրականացման տևողությունը և դրանց վրա կատարվող ծախսերը: Բացի այդ, այդ ոլորտում նորամուծությունների զարգացումը խոշոր կազմակերպությունների տեխնոլոգիական արդիականացման նախադրյալներ է ստեղծում: Առկա խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն կարող է ունենալ արտադրության տեխնոլոգիական կազմակերպման բազմաֆունկցիոնալ մոդելների կիրառումը և նորամուծական նախագծերի իրականացման ժամանակ դրանց օգտագործումը[70]: Ավելին, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում արտադրության տեխնոլոգիական մոդելավորումը, որպես նորամուծության կառավարման մեխանիզմ, հնարավորություն է ընձեռում բացահայտել այն ներքին ռեզերվները, որոնք կարող են օգտագործվել նորամուծության թողարկման ցիկլերի կրճատման, սարքավորումների ռացիոնալ շահագործման և արտադրության տեխնոլոգիական կառուցվածքի փոփոխության ժամանակ:

Անշուշտ, նորամուծական նախագծերի ֆինանսավորումը կապված է համապատասխան սուբյեկտների տեխնիկա-տեխնոլոգիական և ներդրումային միջոցների առկայության հետ: Այս տեսանկյունից, հատկապես պետք է կարևորել ռեսուրսային ռազմավարությունը, որը կիրառելի է տնտեսության զարգացման բոլոր մակարդակներում: Նորամուծությունների կառավարման համակարգում գործնական նշանակություն ունի նաև ներդրումների ներգրավման ուղիների բացահայտումը, ինչը կապված է նորամուծական նախագծերի գնահատման, ընտրության և ներդրումային

[70] Гранатуров В.М. Экономический риск, сущность, методы измерения. М.: Дело и сервис, 2010г. стр. 68

աղբյուրների իրացվելիության հիմնավորման հետ[71]:

Ամփոփելով, պետք է նշել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի նորամուծական զարգացումը կարող է տեղի ունենալ միայն պետական համակողմանի աջակության դեպքում, ինչը որոշակի նախադրյալներ կստեղծի նոր արտադրանքի թողարկման և ինտեգրացիոն համագործակցության խորացման համար: Միաժամանակ, անհրաժեշտ է մշակել և իրականացնել պետական գիտատեխնիկական այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի նորամուծությունների պետական ֆինանսավորման և մտավոր կապիտալի պետական հովանավորության հետ կապված խնդիրների լուծմանը: Պետությունը պետք է միաժամանակ կենտրոնացված կարգով իրականացնի նորամուծության ամենակարևոր տեսակների պատվերները և ֆինանսավորման խնդիրները, ինչը յուրատեսակ ազդակ կհանդիսանա տնտեսության նորամուծական զարգացման համար: Միայն նման մոտեցման պարագայում հնարավոր կլինի ակնկալել ցանկալի արդյունքներ նորամուծական զարգացման ուղղությամբ:

3.3 Նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական արդյունավետությունը տնտեսության կլաստերացման պայմաններում

Նորամուծական կլաստերի կազմում կազմակերպությունների մասնակցությունը ենթադրում է դրանցից յուրաքանչյուրի համար կառավարման հատուկ մեխանիզմի ձևավորում, որը հիմնված կլինի ընդհանուր արդյունքի ձեռքբերման համար նրա նորամուծական ակտիվության խթանման վրա: Այս տեսանկյունից, անհրաժեշտ է մշակել նորամուծական կլաստերի ձևավորման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման հայեցակարգ և կառավարման մեխանիզմ (գծապատկեր 12):



Գծապատկեր 12 Արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման հայեցակարգը

Մեր կարծիքով, առաջարկվող տարբերակը կապահովի պետական և բիզնես ոլորտի ռեսուրսների կենտրոնացումը նորամուծական զարգացման ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով տնտեսական աճի արագացմանը և ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Պետական նորամուծական քաղաքականությունը պետք է ուղղված լինի.

- ✓ նորամուծական տնտեսության ինստիտուցիոնալ կառույցների ստեղծմանը,
- ✓ արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական նախագծերի ֆինանսավորման և արտոնյալ վարկավորման մեխանիզմի մշակմանը,
- ✓ նորամուծական կազմակերպությունների աջակցության ենթակառուցվածքների ստեղծմանը,
- ✓ արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական գործունեության հարկային խթանման մեխանիզմների ձևավորմանը,
- ✓ կրթական համակարգի կատարելագործմանը և նորամուծական կողմնորոշմամբ կադրերի պատրաստմանը,
- ✓ տնտեսության պետական սեկտորում նորամուծական զարգացման խթանմանը:

Տարածքային նորամուծական համակարգի ձևավորման շրջանակներում նորամուծական կլաստերների ստեղծումն արտահայտվում է՝

- ➢ ուղղահայաց-համախմբված մասնավոր-պետական և կորպորատիվ կառույցների ձևավորմամբ,
- ➢ արդյունաբերական կազմակերպությունների շրջանակներում նորամուծական գործընթացի մասնակիցների միջև որոշակի հարաբերությունների համակարգի և փոխգործունեության արդյունավետ ձևերի զարգացմամբ,
- ➢ ձեռներեցության աջակցության տարածքային նորամուծական ենթակառուցվածքների ձևավորմամբ:

Արդյունաբերական կազմակերպությունների կողմից նորամուծական նախագծերի մշակման հիմքում պետք է դրվեն գիտատեխնիկական մշակումների իրականացման, մարքեթինգային ժամանակակից գործիքների օգտագործման ու նորամուծությունների արդյունավետ ներդրման բաղադրիչները:

Մակրոմակարդակում պետության կողմից նորամուծական զարգացման կառավարումը պետք է ուղղված լինի.

- արտադրության տեխնոլոգիական մակարդակի և մրցունակության բարձրացման հիման վրա նորամուծական արտադրանքի թողարկման միջոցով տնտեսական կայուն աճի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,
- համակարգաստեղծ, գիտական և նախագծային կազմակերպություններին հասցեական աջակցության ցուցաբերմանը,
- նորամուծական գործունեության մասնակիցների խթանման համակարգի ներդրմանը, ֆինանսական աջակցության տարբեր գործիքների կիրառմանը և հարկային արտոնությունների տրամադրմանը:

Նոամուծական զարգացման տարածաշրջանային կառավարումը պետք է իրականացվի նորամուծական կլաստերների ձևավորման արդյունքում ստեղծված տարածքային նորամուծական համակարգի միջոցով և ուղղված լինի.

- կլաստերների հիման վրա տարածքի նորամուծական զարգացման ռազմավարության ձևավորման համար տնտեսական նպատակների և առաջնահերթությունների որոշմանը,
- կլաստերի մասնակիցների տեղեկատվական փոխգործունեության մշակմանը և նրանց միջև որոշակի հարաբերությունների համակարգի կազմակերպմանը, տեղեկատվական ցանցի ձևավորմանը,
- համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման միջոցով գիտելիքատար աշխատանքների խթանմանը և կլաստերի ներսում նորամուծության առևտրայնացմանը,
- փոքր ու միջին բիզնեսի նորամուծական ակտիվության զարգացմանը և խոշոր բիզնեսի բազայի վրա համալիր նորամուծական համակարգերի ձևավորմանը՝ նորամուծական կլաստերի պայմաններում բաց նորամուծությունների մոդելի օգտագործման միջոցով,

- կլաստերի մասնակիցների միջև արդյունավետ փոխգործունեության ապահովմանը և նորամուծական կազմակերպությունների դրական վարկանիշ ձևավորող և մասնակիցների նորամուծական գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող կլաստերային դեպարտամենտի ստեղծմանը:

Միկրոմակարդակում նորամուծական կլաստերի ձևավորման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման կառավարումը պետք է իրականացվի պետական և տարածքային մարմինների կողմից կլաստերացման գործընթացի նկատմամբ վերահսկողության միջոցով:

Կառավարման ընդհանուր գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Նորամուծական կլաստերի ձևավորման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման ռազմավարական կառավարում.
   - նորամուծական զարգացման քաղաքականությանը համապատասխան կազմակերպության նորամուծական զարգացման առաքելության և նպատակների ձևավորում,
   - նորամուծական զարգացման հնարավորությունների բացահայտման համար արտաքին միջավայրի վերլուծություն կլաստերի պայմաններում և դրա սահմաններից դուրս,
   - նորամուծական զարգացման ռեզերվների բացահայտման նպատակով կազմակերպության ներքին միջավայրի վերլուծություն,
   - նորամուծական կլաստերի այլ մասնակիցների հետ փոխհարաբերությունների կառուցման պայմաններում նորամուծությունների զարգացման այլընտրանքային տարբերակի մշակում և ընտրություն,
   - նորամուծական զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով նշված գերակայություններն ու դրված խնդիրները,
   - նորամուծական կլաստերի այլ մասնակիցների հետ փոխգործունեության պայմաններում նորամուծական զարգացման ռազմավարության իրականացում,

- կազմակերպության նորամուծական զարգացման նպատակների արդյունավետ իրականացման համար հսկողական միջոցառումների իրականացում և վերահսկողության համակարգի ստեղծում:

2. Արդյունաբերական կազմակերպության նորամուծական զարգացման օպերատիվ կառավարում.
   - նորամուծական տեխնոլոգիայի յուրացման, շուկայի ուսումնասիրության և արտադրության արդիականացման նպատակով նորամուծական ներուժի ձևավորում և զարգացում,
   - տեղական տեխնոլոգիական միջավայրի պահանջներին համապատասխանեցում և սեփական նորամուծական ապրանքանշանի ստեղծում,
   - նորամուծական կլաստերի այլ մասնակիցների և արտաքին միջավայրի հետ հարաբերությունների զարգացման հիման վրա արդյունքի կիրառելիության աստիճանի բարձրացում,
   - նորամուծական թիմերի ձևավորում, կադրերի որակավորման բարձրացում, նորամուծական կլաստերի մասնակիցների միջև փորձի փոխանակում,
   - կազմակերպության նորամուծական զարգացման կառավարման գծով մաքե-թինգային միջոցառումների իրականացում,
   - նորամուծական գործընթացի ակտիվացման համար ֆինանսական հոսքերի ապահովում:

3. Արդյունաբերական կազմակերպության նորամուծական զարգացման ծրագրային կառավարում.
   - կլաստերի կազմակերպություն-նախաձեռնողի կողմից բոլոր մասնակիցների համար նորամուծական նախագծի հայեցակարգի նախագծի մշակում,
   - նորամուծական նախագծի (մասնակիցների պատավորությունների և իրա-վունքների բաշխմամբ) պլանի և փաստաթղթերի նախապատրաստում,
   - տվյալ կազմակերպության և մասնակիցների համար նորամուծական նախագծի առևտրային արդյունավետության վերլուծություն, ինչպես նաև դրա սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատում,

- նորամուծական նախագծի իրագործելիության վերլուծություն՝ ֆինանսավորման տարբեր ծրագրերի կիրառմամբ,
- կլաստերային զարգացման և կազմակերպման բաժնի աջակցությամբ նորամուծական նախագծի մասնակիցների հետ պայմանագրերի կնքում,
- նորամուծական նախագծի իրականացման վերահսկողություն:

Տնտեսության կլաստերացման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման գործուն համակարգի ձևավորման համար դիտարկենք կազմակերպության նորամուծական գործունեության հիմնական ցուցանիշների և խթանման վրա կատարվող ծախսերի փոխադարձ կապը: Ընդհանուր առմամբ, խթանման նպատակահարմարությունը կապված է անհրաժեշտ մի շարք պայմանների առկայության կամ բացակայության հետ: Վերջինիս դեպքում խթանումը կարող է հանգեցնել ոչ միայն ակնկալվող արդյունքի չստացմանը, այլ նաև արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվության էական նվազմանը: Արդյունաբերական կազմակերպությունների արժեքային կողմնորոշիչների հետազոտությունը ցույց է տալիս, որ կիրառվող բոլոր խթաններից առավել գործուն են՝

- կազմակերպության նորամուծական արտադրանքի նկատմամբ պետական պատվերի տրամադրումը, դրա արտահանմանն օժանդակությունը, նորամուծական կազմակերպությունների համար հարկային և վարկային արտոնյալ պայմանների սահմանումը, նորամուծական ենթակառուցվածքերի տարրերի միջև արդյունավետ կապերի ձևավորումը,
- նորամուծական կողմնորոշմամբ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստումը, մարքեթինգային տեխնոլոգիաների (ֆորումներին, ցուցահանդեսներին, ինչպես նաև նորամուծական ակտիվության վարկանիշը և հեղինակությունը ձևավորող այլ միջոցառումներին կազմակերպությունների արտոնյալ մասնակցությունը) կիրառման պետական աջակցությունը, տարածքային նորամուծական կլաստերների ձևավորման ռազմավարության մշակումն ու իրագործումը:

Արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական գործունեության հիմնական ցուցանիշների կիրառման և ակտիվության խթանման նապատակահարմարությունը որոշվում է մի շարք պայմաններով՝

- ցուցանիշի արժեքը պետք է կախված լինի արդյունաբերական կազմակերպության նորամուծական գործունեության արդյունքներից, այլ ոչ թե կողմնակի տարբեր գործոնների ազդեցությունից,
- ցուցանիշները պետք է լինեն չափելի, իսկ գործընթացը չպետք է լինի բարդ և աշխատատար,
- ցուցանիշները պետք է արդյունաբերական կազմակերպություններին կողմնորոշեն նորամուծական գործունեության իրականում անհրաժեշտ (կազմակերպության նպատակների իրականացման տեսակետից) արդյունքների ձեռք բերմանը:

Արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական գործունեության խթանումը կարող է հիմնավորված լինել այն դեպքում, երբ անհրաժեշտ է պատճառա-հետևանքային և տրամաբանական հետևյալ շղթայի գոյությունը՝

- ✓ կազմակերպության նորամուծական ակտիվության մակարդակի և խթանման միջև կախվածության սահմանումը բարձրացնում է կլաստերի պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման մակարդակը,
- ✓ արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվությունը, զուգակցված արտադրական գործընթացի և գիտական կազմակերպությունների ու պետական կառույցների համագործակցության արդյունավետ մակարդակի հետ, նորամուծական կլաստերի կազմում ապահովում է նորամուծական զարգացման կառավարման բարձր որակ, որն ապահովում է դրա արդյունավետ և որակյալ աշխատանքը և նպաստում է պլանավորված արդյունքների (մշակված ռազմավա-ությանը և ծրագրին համապատասխան) ձեռքբերմանը,
- ✓ կլաստերի նորամուծական գործունեության արդյունավետությունն իր համարժեք արտացոլումն է ստանում համապատասխան ցուցանիշներում:

Վերը նշված պայմանների առկայության դեպքում կարելի է եզրակացնել, որ նորամուծական ակտիվության խթանման մակարդակի և արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական գործունեության ցուցանիշների միջև կախվածության սահմանումը կլաստերի ձևավորման պայմաններում պետք է ապահովի տնտեսավարող սուբյեկտների նորամուծական զարգացման կառավարման մեխանիզմի բարձր արդյունավետություն:

Կլաստերների կողմից սահմանված նպատակների ձեռք բերումը կախված է մասնակիցների գործունեության արդյունավետությունից, ինչը ենթադրում է կլաստերային զարգացման կենտրոնի կողմից նորամուծական պլանչափ զարգացման, համակարգված և համաձայնեցված կարգով որոշումների ընդունման և վերահսկողության իրականացման ուղղություններով համապատասխան քայլերի իրականացում: Այդ պատճառով, տնտեսավարող սուբյեկտների նորամուծական ակտիվության և խթանման ցուցանիշները և պայմանները պետք է կառուցված լինեն այնպես, որպեսզի դրանցում արտացոլվի արդյունքների ձեռքբերման գործում կլաստերի յուրաքանչյուր մասնակցի ներդրումը: Այս տեսանկյունից, կլաստերի նորամուծական գործունեության արդյունքը ֆունկցիա է տնտեսավարող սուբյեկտների գործունեությունից, որն, իր հերթին, ֆունկցիա է այդ ուղղությամբ անմիջական գործունեություն իրականացնող կազմակերպության համապատասխան ստորաբաժանման աշխատանքից:

Նորամուծական գործունեության խթանման նպատակով կատարվող ծախսերի տնտեսական արդյունավետությունը որոշելու համար անհրաժեշտ է դիտարկել դրանց հարաբերակցությունը կազմակերպության նորամուծական գործունեության արդյունքների հետ երկու տարբերակով՝ հաշվի առնելով և չառնելով խթանման միջոցները: Ընդ որում, տնտեսական տեսանկյունից սուբյեկտների ապագա համախառն ծախսերը խթանման պայմաններում պետք է փոքր լինեն առանց խթանման նախորդ ժամանակահատվածի համախառն ծախսերից: Այդ դեպքում, կլաստերի պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման տնտեսական նպատակահարմարությունը կարող է գնահատվել հետևյալ կերպ.

$$\frac{C_0}{V_1} > \frac{C_0 + C_n}{V_2} \qquad (3.1)$$

որտեղ՝ C_0 - նորամուծական գործունեության իրականացման ծախսերն են,

C_n - արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման վրա կատարվող ծախսերն են,

V_1 և V_2 – համապատասխանաբար առաջին (առանց խթանման) և երկրորդ (խթանմամբ) տարբերակով կատարված նորամուծական գործունեության ծավալները:

Վերջին երկու ցուցանիշների դերում կարող է օգտագործվել արդյունաբերական կազմակերպությունների կողմից որոշակի ժամանակահատվածում թողարկված նորամուծական արտադրանքի ծավալը:

Տեսակարար ծախսերի հավասարակշռությունը կարտահայտվի հետևյալ կերպ.

$$\frac{C_0}{V_1} - \frac{C_0+C_n}{V_2} = 0 \qquad (3.2)$$

Որոշ փոխակերպումներից հետո կստանանք հետևյալ արտահայտությունը.

$$C_0 x V_2 = C_0 V_1 + C_n V_1 \quad , \qquad (3.3)$$

որտեղից կստանանք

$$C_n = C_0 \langle \frac{V_2}{V_1} - 1 \rangle: \qquad (3.4)$$

Այժմ որոշենք կլաստերի արդյունաբերական կազմակերպության նորամուծական ակտիվության խթանման նպատակով կատարվող ծախսերի մեծությունը: Ենթադրենք, որ նորամուծական գործունեության իրականացման ծախսերը կազմում են C_0=13 000 հազար դրամ, նորամուծությունների ծավալն առաջին տարբերակում առանց խթանման կազմել է V_1= 650 000 հազար դրամ, նորամուծությունների ծավալը երկրորդ տարբերակում՝ խթանմամբ, կազմել է V_2= 975 000 հազար դրամ: Այդ դեպքում, թվային արժեքները տեղադրելով (3.4) բանաձևում, կստանանք

$$C_n = 13\,000(\frac{975\,000}{650\,000} - 1)$$=6 500 հազար դրամ:

Խթանման C_n ծախսերի ստացված արժեքի դեպքում արտադրական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման տնտեսական արդյունքը պետք է լինի զրոյին հավասար, քանի որ տվյալ դեպքում ծախսերի տնտեսում չի լինում: Այս դրույթի ստուգման համար ցուցանիշների թվային արժեքները տեղադրենք (3.2) արտահայտության մեջ:

$$\frac{13\,000}{650\,000} - \frac{13\,000 + 6\,500}{975\,000} = 0{,}2 - 0{,}2 = 0$$

Արտադրական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման տնտեսական արդյունքը կլաստերի պայմաններում կարելի է որոշել, օգտագործելով (3.1) անհավասարությունը.

$$Э = (\frac{C_0}{V_1} - \frac{C_0 + C_n}{V_2}) x V_2 \qquad (3.5)$$

Այժմ տնտեսական արդյունքը հաշվարկենք համաձայն նախորդ պայմանների, հաշվի առնելով, որ C_n = 4 550 հազար դրամ: Ցուցանիշների թվային արժեքները տեղադրելով (3.5) –ում կունենանք.

$$Э = \left(\frac{13\,000}{650\,000} - \frac{13\,000 - 4550}{975\,000}\right) x 975\,000 = 1\,950 \text{ հազար դրամ:}$$

Դիտարկենք մեկ այլ տարբերակ, երբ խթանման ծախսերն ավելի (մոտ 50%-ով) բարձր են, քան նախորդ երկու տարբերակում:

Այս դեպքում կստանանք.

$$Э = \left(\frac{13\,000}{650\,000} - \frac{13\,000 + 7\,800}{975\,000}\right) x 975\,000 = [0{,}02 - 0{,}0213(3)] x 975\,000 = -100 \text{ հազար դրամ}$$

Բացասական նշանով տնտեսական արդյունքը վկայում է այն մասին, որ խթանման նպատակով կատարված ծախսերը հանգեցրել են 100 հազար դրամի չափով վնասի: Տվյալ դեպքում երկրորդ տարբերակով տեսակարար ծախսերը գերազանցել են առաջին տարբերակով տեսակարար ծախսերին, ինչը խախտում է խթանման տնտեսական նպատակահարմարության սկզբունքը և առաջանում է վնաս:

(3.4) բանաձևից երևում է, որ արդյունաբերական կազմակերպության նորամուծական ակտիվության խթանումից դրական տնտեսական արդյունք ստանալու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ անհավասարությունը՝

$$C_n \leq C_0(\frac{V_2}{V_1} - 1) \qquad (3.6)$$

Նորամուծական գործունեության ծավալների աճի գործակիցը նշանակենք ΔK-ով (նորամուծական կլաստերի ձևավորման դեպքում ΔK -ն կլինի տարածաշրջանի նորամուծական զարգացման պլանային ցուցանիշների աճի գործակիցը): Այդ դեպքում.

$$\Delta K = \frac{V_2}{V_1} - 1 \qquad (3.7)$$

ΔK տեղադրելով 3.6 բանաձևում կստանանք հետևյալ անհավասարությունը.

$$C_n \leq C_0 x \Delta K \qquad (3.8)$$

Որոշ փոխակերպումներից հետո կստանանք հետևյալ տեսքի անհավասարություն.

$$\frac{C_n}{C_0} \leq \Delta K \qquad (3.9)$$

Այսպիսով, արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման ծախսերի հարաբերությունը նորամուծական գործունեության իրականացման ծախսերին չպետք է գերազանցի այդ գործունեության ծավալների հավելաճի տեմպերին: Միայն այդ դեպքում են արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական ակտիվության խթանման ծախսերը դառնում տնտեսապես արդյունավետ:

Կլաստերացման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացումը կարելի գնահատել մի շարք բնութագրիչների միջոցով: Կառավարման մեխանիզմի մոդելավորման ժամանակ դրանցից անհրաժեշ է օգտագործել միայն այնպիսիները, որոնք հիմնական են, չափելի են և հնարավորություն են տալիս իրականացնել կլաստերի մասնակիցների նորամուծական զարգացման այլընտրանքային տարբերակների քանակական և որակական գնահատում: Տնտեսության կլաստերացման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման մոդելավորումը պետք է ուղղված լինի համապատասխան ծրագրերի և դրանց գնահատման մոդելների մշակմանը: Ընդ որում, հիմնականում պետք է կարևորել տնտեսավարող սուբյեկտների մեկնարկային ռեսուրսների և դրանց նորամուծական ներուժի ու օգտագործման ինտենսիվության գնահատումը, ինչպես նաև որպես նորամուծական զարգացման ծրագրերի բաղադրիչներ հանդես եկող ենթածրագրերի վերլուծությունը:

Քանի որ ներկայումս կլաստերացման պայմաններում կազմակերպությունների նորամուծական զարգացման արդյունքների մասին հստակ տվյալներ ստանալ հնարավոր

չէ, այդ իսկ պատճառով ներկայացնենք արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական գնահատման հիպոտեթիկ մոդել: Այսպես, կլաստերում ներգրավվելու մասին որոշման կայացման վրա ազդում են երկու գործոն՝ նորամուծական ներուժի միացյալ օգտագործման և ծախսերի տնտեսման հնարավորությունները: Դրա հետ կապված, կարելի է առաջարկել կազմակերպությունների կլաստերային միավորման հետևյալ մոդելը, հիմնված սուբյեկտների կողմից սիներգետիկ արդյունքի հաշվին սեփական առավելություններն առավելագույնի հասցնելու ձգտման վրա: Օգտագործելով Մ. Շերեշևայի[72] ցանցի հիմնավորման առաջարկած մեթոդիկան, կարելի է ենթադրել, որ կլաստերը կձևավորվի և կպահպանվի հետևյալ պայմանների առկայության դեպքում:

$$(\mathrm{C}_{\square\square} - \mathrm{C}_{\square\square} + T_{\square\square}) > (T_{\square\square} + 3_{\square\square-\square\square}) \qquad (3.10)$$

որտեղ՝ $\mathrm{C}_{\square\square} - \mathrm{C}_{\square\square}$ -ն ստացվող ավելացված արժեքի տարբերությունն է կազմակեր-պության կլաստերի կազմում և ինքնուրույն գործելու պայմաններում,

$T_{\square\square}\square\, T_{\square\square}$-ն տրանսակցիոն ծախսերն կազմակերպության կլաստերի կազմում և իրնքնուրույն գործելու պայմաններում,

$3_{\square\square-\square\square}$ -ն կազմակերպության կլաստերում և ինքնուրույն աշխատելու իրավիճակների միջև արտադրական ծախսերի տարբերությունն է:

(3.10) բանաձևից հետևում է, որ ինչպես ինքնուրույն, այնպես էլ կլաստերի կազմում գործող արդյունաբերական կազմակերպությունների կողմից ստացված ավելացված արժեքների հավասարության դեպքում տնտեսական տեսանկյունից ավելի ձեռնտու է աշխատել կլաստերի կազմում, քանի որ գործարքային ծախսերը փոքր են,

$$(\sum_{i=1}^{n} T_{\square\square} + \sum_{i=1}^{n} 3_{\square\square-\square\square}) > T_{\square\square} \qquad (3.11)$$

Պետք է նշել, որ նորամուծական կլաստերն իրենից ներկայացնում է ոչ միայն բիզնեսի ներկայացուցիչների, այլ նաև գիտական կազմակերպությունների, կրթական

[72] Шерешева М. Ю. Межфирменные сети. М.: Экономический факультет МГУ, ТЕИС, 2006г. стр. 168-169

հաստատությունների, կառավարման մարմինների, սպառողների ռեսուրսները և հիմնական կարողությունները միավորող ռազմավարական միջկազմակերպական ցանց: Համաձայն Մ. Շերեշևայի[73], Վ. Տրետյակի[74] և Ա. Աուզանի[75] կարծիքի, կլաստերները պետք է դասել ինտեգրացված կառույցների շարքին, քանի որ դրանցում առկա են կարգավորման տարրեր: Ասվածից հետևում է, որ տնտեսության կլաստերացման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման կառավարման արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր գործոնները:

1. Նորամուծական կլաստերի ներուժը: Այն որոշվում է որոշ փոփոխականներով, որոնք ներառում են հստակ (ներդրումներ) և ոչ հստակ (կլաստերի կազմակերպությունների նորամուծական արտադրանքի նկատմամբ պահանջարկը և որակը) ցուցանիշներ: Այս դեպքում անհրաժեշտ է գտնել նորամուծական կլաստերի ներուժը որոշող փոփոխական մեծությունների քանակական արժեքը, որոնց դեպքում նպատակային ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը՝

$$P_{\square\square} = \sum_{\substack{j\in y \\ i\in v}} X_y^k \to \max \qquad (3.12)$$

որտեղ՝ $P_{\square\square}$ -ն նորամուծական կլաստերի ներուժն է:

Նորամուծական կլաստերի ներուժի գնահատման համար կլաստերացման այս կամ այն ցուցանիշի վերլուծությունը բավարար չէ: Դա պայմանավորված է նրանով, որ այն իրենից ներկայացնում է մեծաքանակ և փոխկապակցված կազմակերպությունների գործունեության ամփոփ արդյունք, որոնցից յուրաքանչյուրի կարողությունները միմյանց հետ համադրելի չեն: Հետևաբար, կարելի է ասել, որ նորամուծական կլաստերի ներուժն իրենից ներկայացնում է մասնակիցների կողմից առկա ռեսուրսների օգտագործման

[73] Шерешева М. Ю. Межфирменные сети. М.: Экономический факультет МГУ,ТЕИС, 2006. стр. 170. Шерешева М. Ю. Инновационные кластеры. Региональные аспекты формирования национальной инновационной системы. М.: Статут, 2007г. Стр. 145.

[74] Третьяк В.П. Квазиинтеграция: природа, формы проявления. Современные проблемы экономической теории. М. МГУ. 2004г. стр. 41, Третьяк В.П. Кластеры фирм как новая форма организации бизнеса. Экономический рост и вектор развития современной России М., ТЭИС. 2004г. стр. 54

[75] Институциональная экономика: Новая институциональная экономическая теория: Учебник. Коллектив авторов. Под ред. А.А.Аузана. - 2-е изд. - М.: ИНФРА-М, 2011г. стр. 139

միջոցով ձեռք բերված արդյունք: Ինչպես նշում է Վ. Տրետյակը[76], «նույն օբյեկտի կլաստերացումը մաթեմատիկական տարբեր ալգորիթմների օգնությանբ, որպես կանոն, հագեցնում է տարբեր արդյունքների»: Դրա պատճառներ են հանդիսանում ինչպես տվյալների անճշտությունը, այնպես էլ մասնակիցների կազմի ճկունության և փոփոխականության պատճառով գնահատման անհնարիությունը: Հետևաբար, անհրաժեշտ է հիմք ընդունել կլաստերի հիմնական միջուկի նորամուծական ներուժի հաշվարկը:

2. Կլաստերի մասնակիցների կողմից իրականացվող նորամուծական նախագծերի տնտեսական հիմնավորման համար անհրաժեշտ է իրականացնել եկամտաբերության և ետգնման հիմնական ցուցանիշների հաշվարկ, հաշվի առնելով այդ նախագծերի հնարավոր ռիսկերը: Շատ մասնագետներ ներդրումային և նորամուծական նախագծերը նույնականացնում են այն պատճառով, որ ներդրումային նախագծերը պարունակում են նորամուծական բաղադրիչ, իսկ նորամուծական նախագծերն, իրենց հերթին, ենթադրում են ներդրումների ներգրավում[77]: Սակայն նորամուծությունների ստեղծման և իրացման գծով աշխատանքների ծավալի աճը հնարավորություն է տալիս սահմանազատել նախագծի այդ երկու ձևը: Աղյուսակ 6-ում մեր կողմից ներկայացված է ներդրումային և նորամուծական նախագծերի համեմատական բնութագրերը: Այսպես, ներդրումների համար ավելի գրավիչ են նորամուծական պատրաստի արտադրանքի թողարկման հետ կապված նորամուծական նախագծերը, իսկ ռիսկային են նոր տեխնոլոգիաների իրացմանը միտված նախագծերը:

Աղյուսակ 6

Ներդրումային և նորամուծական նախագծերի համեմատական բնութագրերը

Համեմատման չափանիշները	Ներդրումային նախագծեր	Նորամուծական նախագծեր

[76] Третьяк В.П. Квазиинтеграция: природа, формы проявления. Современные проблемы экономической теории. М. МГУ. 2004г. стр. 17

[77] Базилевич А.И. Инновационный менеджмент предприятия. Под ред. В. Я. Горфинкеля. М.: ЮНИТИ-ДАНА, 2009г. стр. 82, Бовин А.А., Чередникова Л.Е., Якимович В.А. Управление инновациями в организациях. М. Издательство «Омега-Л», 2009г. стр. 93, Фатхутдинов Р.А. Инновационный менеджмент: Учебник для вузов. 5-е изд. СПб.: Питер, 2008г. стр. 103

Նախագծի նպատակը	Շահույթ ստանալու նպատակով ներդրումների իրականացում	Տնտեսական խնդիրների լուծման նպատակով նորամուծությունների ստեղծում և իրացում
Նախագծի նշանակու թյունը	Ձեռներեցությամբ զբաղվելու նպատա-կահարմարության և հնարավորու-թյունների հիմնավորում	Նորամուծական գործունեության իրականացում
Նախագծի կյանքի ցիկլը	Կազմված է առնվազն նախաներ-դրումային, ներդրումային և շահա-գործման փուլերից	Կազմված է նորամուծական գաղափարի ձևավորման, նախագծի մշակման, իրացման և ավարտ փուլերից
Ապահովվածութ յունը կադրերով	Մասնակիցների կազմն ու կառուցվածքը պայմանավորված է դրված խնդիրներով	Պահանջվում են բարձրորակ մասնագետներ և ստեղծագործական խմբեր
Ապահովվածութ յունը նյութական և ֆինանսական ռեսուրսներով	Ենթադրվում է ներդրումային միջոցների ներգրավում	Ենթադրվում է նյութական հատուկ ռեսուրսների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավում
Նախագծին ներկայացվող պահանջներ	Ստացվող եկամուտների հաշվին ներդրված միջոցների հետ վերադարձ և զուտ շահույթի ապահովում	Նորամուծական գաղափարների հաջող իրականացում և արտադրանքի առավելագույն իրացում
Նախագծի իրականացման բնույթը	Նախագծի արդյունքային ցուցանիշը սահմանվում է պլանավորման փուլում և շտկվում կախված ազդող գործոններից	Նախագծի արդյունքային ցուցանիշի անորոշության բարձր աստիճանը պահանջում է կատարել հանգամանալից ընտրություն
Նախագծի նախնական գնահատման հուսալիությունը	Նախագծի արդյունավետության գնա-հատման գործող կարգը հնարավո-ր ություն է տալիս անել մեծ ճշտութ-յամբ կանխատեսում	Նախագծի արդյունքային ցուցանիշի անորոշության բարձր աստիճանը փոքրացնում է նախնական գնահատման հուսալիությունը
Արդյունքները	Կազմակերպության կամ դրա ստորա-բաժանման սեփական կապիտալի ավելացման հնարավորություն	Հեղինակության բարձրացում, դիրքի ամրապնդում և ֆինան-սական դրության բարելավում

Ընդհանուր առմամբ, նորամուծական նախագծերի ռիսկերի կառավարման նպատակը դրանց հնարավոր բացասական հետևանքների մեղմումը կամ վերացումն է: Դրանք իրենց բնութագրիչներով յուրահատուկ են, հետևաբար յուրաքանչյուր առանձին դեպքում ռիսկը պետք է դիտարկվի գոյություն ունեցող առանձնահատկություններից ելնելով: Ըստ էության, ներդրողների տեսանկյունից էական նշանակություն ունեն այն ռիսկերը, որոնք հանգեցնում են պլանավորված շահույթի կորստի կամ կրճատման: Այս

առումով, կազմակերպությունները նախագծերի մշակման փուլում պետք է հատկապես մեծ ուշադրություն դարձնեն նորամուծական գործունեության իրականացման պայմանների և հնարավորությունների վրա: Ակնհայտ է, որ ռիսկերի գնահատումը և արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա կրճատել նորամուծական կազմակերպության սեփականության իրավունքի պաշտպանության, արտաքին միջավայրի անորոշության աստիճանի իջեցման, վարկատուների, ներդրողների, բաժնետերերի փոխգործունեության, ինչպես նաև տեղեկատվության հաղորդման, պահպանման և պաշտպանության հետ կապված ծախսերը:

3. Նորամուծական կլաստերի մասնակիցների սիներգիզմի հատկությունն օժանդակում է կառույցի կարգավորվածության աստիճանի մեծացմանն ու էնտրոպիայի փոքրացմանը և արտահայտվում է սուբյեկտների համաձայնեցված վարքագծի արդյունքում: Նորամուծական կլաստերը՝ որպես սիներգետիկական համակարգ, ընդունակ է համակցել փոխլրացնող տարրերի և միավորվող սուբյեկտների ռեսուրսները և ապահովել տնտեսական արդյունքների աճ: Այդ իսկ պատճառով, պետք է հաշվի առնել կլաստերի նորամուծական զարգացման սիներգետիկական արդյունքը, որն իրենից ներկայացնում է հետևյալ արդյունքների գումարը՝

- «դասական տարբերակով»՝ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական արդյունքներ,
- մենեջմենթի տեսակետից՝ գիտելիքի ներհոսքի, նորամուծական ենթակառուցվածքների համատեղ օգտագործման, գործարքային ծախսերի տնտեսման, դրամական հոսքերի աճի, տեղեկատվական ապահովման և ներդրումային սիներգետիկ արդյունքներ,
- կազմակերպչական տեսակետից՝ մեքենասարքավորումների համատեղ օգտագործման, հեղինակային միջոցառումներին համատեղ մասնակցության, մարքեթինգային ընդհանուր հաղորդակցություններից օգտվելու արդյունքներ,
- նորամուծական կապիտալի ձևավորման տեսակետից՝ նյութական (ներառյալ ֆինանսական), մտավոր (ներառյալ կազմակերպական, գործընկերային և մարդկային) և սոցիալական կապիտալի ձևավորման արդյունքներ:

Կլաստերի ձևավորման գործընթացում դրա մասնակիցների փոխգործունեությունից ստացվում է տնտեսական արդյունք, որը գերազանցում է առանձին վերցրած

կազմակերպությունների ինքնուրույն գործելու արդյունքին և որոշվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$S_{□□} = \sum_{i=1}^{n} S_i = Э_{□□} - \sum_{i=1}^{n} Э_i \qquad (3.13)$$

որտեղ՝

S_i -ն կլաստերի յուրաքանչյուր i-րդ մասնակցի համար միավորումից արդյունքն է,

$Э_{□□}$–ն կլաստերի n մասնակիցների համատեղ նորամուծական գործունեության արդյունքն է,

$Э_i$–ն i-րդ կազմակերպության ինքնուրույն գործելու արդյունքն է:

Կլաստերի յուրաքանչյուր i-րդ մասնակցի համար միավորումից (S_i) արդյունքը կարող է ներկայացվել 3.10 անհավասարության փոխակերպման հիման վրա ստացված բանաձևի տեսքով.

$$S_i = (C_{□□} - C_{□□}) - (T_{□□} - T_{□□} + З_{□□-□□}) = D_i - R_i \qquad (3.14)$$

որտեղ՝ $D_i = C_{□□} - C_{□□}$ -ն կլաստերի i-րդ մասնակցի լրացուցիչ եկամուտն է, որպես համախմբման պայմաններում ստացված ավելացված արժեք և կլաստերացման արդյունքում ծախսերի տնտեսում:

Հարկ է նշել, որ կլաստերում կազմակերպության գործելու պայմաններում նրա գործարքային ծախսերի գումարը կարող է լինել հավասար զրոյի: Այդ դեպքում կարելի է որոշել կլաստերացման առավելության $\boldsymbol{K}_{□□}$ գործակիցը, որն, ըստ էության, արտացոլում է սուբյեկտների կլաստերային փոխգործունեության շահութաբերությունը հետևյալ տեսքով՝

$$K_{□□} = \frac{C_{□□} - C_{□□}}{T_{□□} - З_{□□-□□}} = \frac{D_i}{R_i} \qquad (3.15)$$

Համաձայն կլաստերի պայմաններում նորամուծական կապիտալի ձևավորման հայեցակարգի, այն տեղի է ունենում նորամուծական գործունեության իրականացման ժամանակ տնտեսավարող սուբյեկտների սիներգետիկական փոխգործունեության ընթացքում՝ նորամուծական ներուժը կապիտալի վերածման արդյունքում: Համաձայն առաջարկված հայեցակարգի, նորամուծական $K_{□□}$ կապիտալի բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$K_{□□} = P_{□□} x S_{□□} x K_{□□} \qquad (3.16)$$

Քանի որ նորամուծակսան ներուժը ($P_{□□}$) և կապիտալը ($K_{□□}$) հանդիսանում են կլաստերի մասնակիցների նորամուծական զարգացման դինամիկայի բնութագրիչներ, անհրաժեշտություն է առաջանում (3.16) բանաձևում ներմուծել նորամուծական զարգացման արագության (V) ցուցանիշը: Նորամուծական ակտիվությունը բնութագրվում է նորարարությունների քանակով, որն, ըստ էության, հանդիսանում է կազմակերպության նորամուծական ներուժի բնութագրիչը: Այդ պատճառով, անհրաժեշտություն է առաջանում որոշել նորամուծական զարգացման արագության ցուցանիշը՝ որպես որոշակի ժամանակամիջոցում ստեղծված և իրացված նորամուծությունների քանակ կամ այլ կերպ ասած, նորամուծության հավելաճ:

Նորամուծական կապիտալի որոշման բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$K_{□□} = P_{□□} x S_{□□} x K_{□□} x \mathrm{V} \qquad (3.17)$$

Արդյունաբերական կազմակերպությունների և կլաստերի մասնակիցների նորամուծական զարգացման արագությունը աճում է նորամուծական ակտիվության խթանման արդյունավետ համակարգի կիրառման դեպքում: Հատկապես պետք է կարևորել այն, արդյունաբերական կազմակերպությունը գիտակցի նորամուծական զարգացման իրական առավելությունները: Դա ձևավորում է նորամուծական գործունեության շարժառիթները և խրախուսում է կազմակերպություններին կլաստերի զարգացման նպատակների իրականացման միջոցով սեփական խնդիրների լուծման համար: Կլաստերի սիներգետիկ արդյունքի և նորամուծական կապիտալի որոշման առաջարկված մեթոդիկան թույլ կտա իրականացնել նորամուծական կլաստերի մասնակիցների գործունեության համալիր վերլուծություն: Կլաստերացման առավելությունների գործակցի որոշման առաջարկված մեթոդիկան կնպաստի արդյունաբերական կազմակերպությունների կողմից գիտականորեն հիմնավորված կառավարչական որոշումների ընդունմանը: Բացի այդ, անհրաժեշտ է նաև նորամուծական կլաստերի մասնակիցների գործունեությունում մտցնել որոշակի սահմանափակումներ, որոնց շարքին պետք է դասվեն տնտեսական ստանդարտները, սուբյեկտների վարվելակարգի նորմերը, հակամենաշնորհային օրենսդրության նորմերի պահպանումը և այլն:

Կլաստերի պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման կառավարման տնտեսական մեթոդների կիրառումը

նպաստում է սուբյեկտների գործունեության սոցիալական արդյունավետության բարձրացմանը: Վերջինիս և տնտեսական արդյունավետության տարանջատումը նպատակահարմար է այն դեպքում, եթե այն թույլ կտա հիմնավորված դիֆերենցել մեթոդական մոտեցումները, ցուցանիշների տեսակները և ստացված գնահատականների կիրառման ոլորտները:

Տնտեսական արդյունքն արտահայտվում է սոցիալական արդյունքի հասնելու ռեսուրսային հիմքի ապահովման մեջ: Նորամուծական կլաստերի դեպքում դա կարող է տեղի ունենալ տնտեսավարող սուբյեկտների նորամուծական գործունեության բարձր արդյունքների պայմաններում գործարքային ծախսների տնտեսման ժամանակ: Բացի այդ, դա իր արտահայտությունն է գտնում առկա միջոցների արդյունավետ օգտագործման միջոցով նորամուծական գործունեությունից ստացվող լրացուցիչ արդյունքների մեջ:

Սոցիալական արդյունքների վրա հիմնված արդյունավետության ցուցանիշներն անհրաժեշտ են, նախ և առաջ, ռազմավարական պլանների մշակման համար: Մի կողմից, այդ ցուցանիշները երկարաժամկետ կտրվածքով ցույց են տալիս սոցիալական զարգացման ուղղվածությունը և ինտենսիվությունը: Մյուս կողմից, սոցիալական խնդիրների լուծման երկարաժամկետ ծրագրերի մշակման ժամանակ, այս կամ այն կազմակերպությունում իրականացվող ծախսերից վերջնական արդյունքների կախվածության բազմագործոնային մաթեմատիկա-վիճակագրական վերլուծությունը թույլ է տալիս գտնել դրված նպատակներին հասնելու հիմնական պայմանները: Այսպիսով, սոցիալական արդյունավետության անմիջական վերլուծության միջոցով ստացվում է ռազմավարական որոշումների կայացման համար արժեքավոր տեղեկատվություն, եթե գնահատվում է սոցիալական վերջնական արդյունքներին հասնելու տարատեսակ գործոնների փոխազդեցությունը:

Տնտեսական և սոցիալական արդյունավետությունը կազմում են կլաստերի ձևավորման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման երկու փոխկապակցված կողմերը, որոնցից մեկն արտահայտում է արդյունավետության նպատակային տեսանկյունը, իսկ մյուսը՝ սոցիալական նպատակները: Գործնականում նրանք միասնական են հանդես գալիս:

Կազմակերպության նորամուծական զարգացման կառավարման մեխանիզմի տնտեսական արդյունավետությունը որոշվում է ծախսերի և արդյունքների արժեքային

ցուցանիշների օգտագործմամբ: Սակայն արժեքային գնահատումը մշտապես իր վրա կրում է սոցիալական գերակայությունների ազդեցությունը: Ծախսերի և արդյունքների արժեքային գնահատման միջոցով արդյունաբերասկան կազամակերպության նորամուծական զարգացման կառավարման մեխանիզմի տնտեսական արդյունավետության վերլուծության ժամանակ առավել վառ արտացոլվում է տնտեսական մոտեցման առանձնահատկությունները: Սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ այդ գործընթացը սոցիալական է, և այլ հավասար պայմաններում յուրաքանչյուր ռեսուրսի գնահատումը կապված է որոշակի սպառողների պահանջմունքների բավարարման հետ:

Կազմակերպությունների կառավարման մեխանիզմը կոչված է ապահովել, մի կողմից, կայուն տնտեսական զարգացումը և նորամուծական արտադրանքի նկատմամբ պետական պատվերի արդյունավետ կատարումը, իսկ մյուս կողմից՝ անհատական և հասարակակասն պահանջմունքների բավարարումը: Արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման կառավարման սոցիալական արդյունավետությունը գնահատվում է հետևյալ ուղղություններով՝

- սոցիալական կապիտալի ձևավորման ուղղությամբ միջոցառումների իրականացման համար մարքեթինգային մոտեցման կիրառմամբ,
- ռազմավարական մոտեցումների օգտագործմամբ կլաստերի բոլոր սուբյեկտների մարզի խոշոր նախագծերի իրականացմանը մասնակցության նախատեսմամբ,
- մարդկային կապիտալի նոր կերպարի ձևավորման հարցում նորամուծական զարգացման գնահատմամբ:

Նորամուծական զարգացման կառավարումն իրենից պետք է ներկայացնի սոցիալական միջավայրի վրա համալիր ներազդման կազմակերպչական մեխանիզմ: Միաժամանակ, սոցիալական միջավայրը պետք է դրականորեն ազդի կազմակերպության նորամուծական գործունեության վրա, ձևավորելով դրա հեռանկարային նպատակներն ու խնդիրները և հաշվի առնելով շուկայում տեղի ունեցող փոփոխությունների սոցիալական կողմերը: Կլաստերի պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացումը հնարավորություն կտա ոչ միայն կառուցել սուբյեկտների միջև փոխհամագործակցության համակարգ, այլ նաև պայմաններ կստեղծի նորամուծական կազմակերպությունների թվաքանակի աճի, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության իրական դրամական եկամուտների ավելացման, կատարվող

հարկային վճարների մակարդակի բարձրացման համար, որի միջոցները կարող են մեծամասամբ ուղղվել սոցիալական խնդիրների լուծմանը: Տվյալ ցուցանիշները կարելի է երաշխավորել որպես կլաստերի տնտեսական սուբյեկտների նորամուծական զարգացման սոցիալական արդյունավետության ցուցիչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքները ամփոփված են հետևյալ եզրակացություններում:

1. Նորամուծությունների խթանումը պետության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, քանի որ ժամանակակից պայմաններում գիտատեխնիկական զարգացման արդյունքների և տեխնոլոգիական նվաճումների կիրառումը կարևոր պայման է հանդիսանում խորացող մրցակցությանը դիմագրավելու համար: Նորամուծական զարգացումն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր բնագավառները, որոնք գտնվում են միմյանց հետ սերտ փոխկապակցվածության պայմաններում: Ընդ որում, առանձին ոլորտներում ձախողումները կարող են բացասաբար անդրադառնալ ընդհանուր տնտեսական համակարգի գործունեության վրա՝ հանգեցնելով վերջինիս արդյունավետության անկմանը: Միևնույն ժամանակ, նորմուծությունների զարգացումը ենթադրում է համապատասխան սոցիալական պայմանների ստեղծում, որը տնտեսական բաղադրիչի հետ միասին հանդես է գալիս որպես կարևոր գործոն:
2. Տնտեսության նորամուծական զարգացման տեսանկյունից, ակնհայտորեն, կարևորվում են հատկապես փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք առանցքային դերակատարում ունեն շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովման հարցում: Տնտեսության գիտատար զարգացումը պահանջում է թողարկվող ապրանքների ու ծառայությունների որակական հատկանիշների շարունակական կատարելագործում և տնտեսական գործունեության ճկունության ապահովում, ինչը փոքր և միջին ձեռնարկությունների հիմնական մրցակցային առավելություններից է: Հետևաբար, նորամուծական

գործունեությունը հատկապես կարևորվում է տվյալ ոլորտում, քանի որ, մի կողմից, դրա զարգացման համար առկա են բավարար նախադրյալներ և, մյուս կողմից, այն հատկապես անհրաժեշտ է դրանում գործող սուբյեկտների համար՝ շուկայական կանյուկտուրայի փոփոխությունների և նոր տնտեսական հարաբերությունների պահանջներին հարմարվելու և բավարարելու համար:

3. Գիտելիքի կուտակումը և տնտեսության մեջ դրա կիրառման շրջանակների շարունակական ընդլայնումն, անշուշտ, նորամուծական զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է հանդիսանում: Դրա նշանակությունը հատկապես մեծանում է տեխնոլոգիական առաջընթացի ներկա փուլում, երբ արտադրության ոլորտում գիտատեխնիկական զարգացման արդյունքների ներդրումն առաջանցիկ զարգացման հնարավորություն է ապահովում: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տնտեսության կառավարման համակարգի արդիականացումը ազգային տնտեսության նորամուծական զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն է: Միկրոմակարդակում այն ուղղակիորեն անդրադառնում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության վրա՝ նպաստելով նրա մրցակցային առավելությունների բարձրացմանը: Դա հատկապես ցայտուն կերպով է դրսևորվում փոքր և միջին ձեռնարկություններներում՝ պայմանավորված արտաքին գործոնների նկատմամբ դրանց զգայունության բարձր աստիճանով:

4. Տեղեկատվայնացման և տնտեսության կլաստերացման գործընթացներն առավել էական ազդեցություն են ունենում փոքր և միջին ձեռնարկությունների վրա: Վերջիններս, հանդիսանալով տնտեսական հարաբերությունների կարևոր սուբյեկտներից, պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն նորամուծական գործունեության արդյունավետության ապահովման համար: Միայն նման մոտեցման դեպքում է հնարավոր արտաքին և ներքին շուկաներում ապահովել մրցունակություն և զբաղեցնել նպաստավոր դիրքեր: Փոքր և միջին ձեռնարկությունները, որպես նորամուծական գործընթացների հիմնական մասնակիցներ, տնտեսության զարգացման գործում հանդես են գալիս, մի կողմից, որպես կառավարման օբյեկտ, իսկ, մյուս կողմից՝ որպես կառավարման սուբյեկտ: Առաջինը ենթադրում է նորամուծական գործընթացների ակտիվացմանն ուղղված պետական կարգավորման մեթոդների և գործիքների մշակում, իսկ երկրորդը՝ ազգային

տնտեսության նորամուծական զարգացման ծրագրից բխող և նորամուծական ներուժի ձևավորմանն ու ընդլայնմանն ուղղված ռազմավարության մշակում:

5. Անցումային փուլում գտնվող երկրների համար լուրջ հիմնախնդիր է հանդիսանում տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացումը և արտադրության արդիականացումը: Այս տեսանկյունից, արտադրության հիմնական գործոնների ինտելեկտուալիզացիան և նորամուծական զարգացումը հանդիսանում են հիմնական ուղի տնտեսության տեխնոլոգիական արդիականացման գործում: Ընդ որում, պետք է նշել, որ տվյալ գործընթացում առանցքային դեր ունեն նոր գաղափարների գործնական կիրառմանն ուղղված քայլերը, որոնց նպատակը բիզնես գործընթացների կազմակերպման ու իրականացման ուղղությամբ նոր մոտեցումների կիրառումն է: Այս առումով, մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը, հիմնված գիտելիքի տնտեսության վրա, դառնում է երկրի մրցունակությունը պայմանավորող կարևոր գործոն: Բացի այդ, շուկայական տնտեսության պայմաններում փոխվում են նաև արտադրության գործընթացին ներկայացվող պահանջները, ինչի արդյունքում առաջին պլան է մղվում աշխատուժի որակական մակարդակը՝ օժտված նոր գաղափարներ ձևավորելու և դրանք արտադրության գործընթացում ներդնելու ունակությամբ:

6. Նորամուծական գործունեության իրականացման կարևոր ուղղություններից մեկն է կլաստերների ձևավորումը, որը տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ժամանակակից միտումների պայմաններում որոշակի հիմքեր է ապահովում նոր գաղափարների առևտրայնացման գործուն մեխանիզմների ստեղծման համար: Կլաստերների տնտեսական հետաքրքրություններում, առաջին հերթին, արտացոլված է նորամուծական գործընթացում տվյալ մասնակցի ունեցած դերը: Կարելի է նշել, որ կլաստերների ձևավորումը ժամանակի օբյեկտիվ պահանջն է, ինչը հնարավորություն է տալիս փոքր և միջին ձեռնարկություններին միավորվել միասնական տնտեսական հետաքրքրությունների առանցքի շուրջ: Նման ինստիտուցիոնալ միավորները, ռեսուրսների՝ այդ թվում գաղափարների միավորման շնորհիվ մասնակիցներին հնարավորություն են տալիս լիարժեք ինտեգրվել նորամուծական զարգացման համակարգին: Ընդհանրական բնորոշմամբ, կլաստերներն առանձին տարրերի միասնական հետաքրքրությունների

շուրջ ձևավորված կառուցվածքային առանձին միավորներ են, որոնք ապահովում են նորամուծական գործընթացի մասնակիցների տնտեսական հետաքրքրությունների համաձայնեցումը, միմյանց հետ զուգակցումը և միասնական ուղղվածության ապահովումը, ինչն, ըստ էության, խթանման արդյունավետ մեխանիզմ են են հանդիսանում:

7. Նորամուծական զարգացման կառավարման ռազմավարական նպատակը կլաստերի մասնակիցների միջև երկարատև փոխգործունեության վրա հիմնված գործընկերային հարբերությունների ցանցի ստեղծումն է ոչ միայն կլաստերի ներսում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Այդ նպատակի իրականացումը առաջ է բերում որոշակի խումբ խնդիրների լուծման անհրաժեշտություն, որոնցից հատկապես կարևորվում են կլաստերի մասնակից փոքր և միջին ձեռնարկությունների արդյունավետ փոխգործակցության ապահովումը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ փոխգործակցության զարգացումը, միջազգային համագործակցության և արտաքին շուկայում նորամուծությունների իրացման համար անհրաժեշտ ինտիտուտների ձևավորումը:

8. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը ֆինանսական բավարար ռեսուրսների բացակայությունն է, ինչը երկարաժամկետ փոխառու միջոցների դժվարամատրչելիության ու վարկերի բարձր տոկոսադրույքների հետևանք է հանդիսանում: Նման իրավիճակն, ի թիվս սուբյեկտիվ պատճառների, ունի նաև իր օբյեկտիվ բացատրությունը՝ հատկապես պայմանավորված ֆինանսական ներդրումների տեսանկյունից ոլորտի բավականաչափ ռիսկային լինելու հանգամանքի հետ: Այս առումով, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում խիստ արդիական է փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների վարկային և ներդրումային պահանջները բավարարող ֆինանսական կառույցների և ինստիտուտների, ինչպես նաև այդ նպատակով կիրառվող տեխնոլոգիաների զարգացումը: Ֆինանսական միջոցների հասանելիության ապահովումն, ակնհայտորեն, հնարավորություն կստեղծի ոչ միայն աջակցել գործող

սուբյեկտներին, այլ նաև կխթանի նորերի ստեղծմանը: Նշված խնդիրների լուծման նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է կիրառվել հետևյալ մեխանիզմները:

- Վարկային երաշխիքների ծրագրերի մշակում և իրականացում՝ հիմնված պետական և մասնավոր կապիտալի միջև ներդրումային ռիսկի բաշխման վրա: Երաշխիքային մեխանիզմների նման համակարգն ընդունակ կլինի ապահովել ձեռնարկատիրական նախագծերի և ծրագրերի արտոնյալ և հեռանկարային ֆինանսավորում, իսկ դրանց անհաջող ընթացքի դեպքում՝ փոխհատուցել անխուսափելի կորուստները: Վարկային երաշխիքների ծրագրերի ֆինանսավորման աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային միջոցները,
- Լիզինգի զարգացումը: Փոքր և միջին ձեռնարկությունների համար լիզինգային գործառնությունները երբեմն հանդիսանում են արտադրության վերազինման և արդիականացման միակ միջոցը: Նշված սուբյեկտների համար լիզինգային ֆինանսավորման հնարավորություններն ավելի մեծ են, քան բանկային փոխառությունների ներգրավման շանսերը: Դա հետևանք է երաշխիքների մասին պարզ պայմանավորվածությունների, հաճախորդի ֆինանսական կենսագրության հանդեպ մեղմ պահանջների և կիրառվող պարզ ընթացակարգերի: Հաշվի առնելով փոքր և միջին ձեռնարկությունների համար գոյություն ունեցող ավելի բարձր ֆոնդահատույցը՝ լիզինգը թույլ է տալիս նվազեցնել ներդրումային նախագծի ետգնման ժամկետները և բարձրացնել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

9. ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում նորամուծությունների ֆինանսավորման հիմնախնդիրները հիմնականում կապված են արտադրության ծավալների անկման, ինչպես նաև սեփական կապիտալի և ներդրումների ոչ բավարար ծավալների հետ: Նման իրավիճակի պատճառներ են.

- նորամուծության կազմակերպությունների գործունեության դադարեցումը և համապատասխան մասնագետների արտահոսքը,
- արտադրական կարողությունների հիմնական զանգվածի երկարատև սառեցումը, տեխնիկայի մաշվածության բարձր աստիճանը, միջազգային չափորոշիչներին տեխնոլոգիաների անհամապատասխանությունը,

- թողարկվող արտադրանքի տեխնիկական ցածր մակարդակը և արտահանման ծավալների անկումը,
- անհրաժեշտ հումքանյութային ռեսուրսների անբավարար ծավալը,
- կադրերի վերապատրաստման համակարգի բացակայությունը,
- թողարկվող արտադրանքի նորացման պայմանների բացակայությունը,
- տեղական բնական ռեսուրսների սահմանափակ օգտագործումը:

10. Նորամուծությունների հետ կապված ռիսկերի կառավարման համար հատկապես կարևորվում է.

- պետական խթանումը, որը պետք է ուղղված լինի մրցակցության խրախուսմանը և ֆինանսական տարբեր օժանդակություններին,
- նորամուծական գործընթացների համար իրավական հիմքերի և օրենսդրության կիրառման համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծումը,
- նորամուծությունների իրականացման համար կադրային ապահովումը, ինչը ենթադրում է պետական ուսումնական ծրագրերում մասնագետների կողմից նորամուծությունների ընկալմանը և նրանց ստեղծագործական զարգացմանը նպաստող դրույթների ամրագրում,
- նորամուծական տեղեկատվության ձևավորումը,
- նորամուծության գործընթացների ինստիտուցիոնալ կարգավորումը և այդ նպատակով տնտեսության տարբեր ճյուղերում նորամուծություններ իրականացնող կամ դրանք խթանող համապատասխան պետական կառույցների ստեղծումը,
- հասարակական և բնապահպանական ուղղվածություն ունեցող նորամուծությունների խթանումը, ինչը նշանակում է պետության կողմից գիտատեխնիկական զարգացում և բնապահպանության հավասարակշռություն ապահովող նորամուծություններին հատուկ աջակցության ցուցաբերումը և, միաժամանակ, բացասական հետևանքներ ունեցող գիտատեխնիկական փորձարկումների արգելումը,
- նորամուծության գործունեության արժևորումը, ինչը կարող է տեղի ունենալ պետության կողմից գիտատեխնիկական նվաճումների և նորամուծությունների քարոզչության, նման գործունեությամբ զբաղվողների բարոյական խրախուսման և այլ եղանակներով,
- նորամուծական գործընթացների պետական կարգավորումը, ինչը ենթադրում է

պետության կողմից ցանկալի ուղղություններով դրանց տարածքային տեղաբաշխման խթանում,

- պետության կողմից միջազգային գիտատեխնիկական ինտեգրացիայի խթանումը և հայրենական կզմակերպություններին այդ գործընթացներին ակտիվ ներգրավումը:

11. Պետական նորամուծական քաղաքականությունը պետք է ուղղված լինի.
    - նորամուծական տնտեսության ինստիտուցիոնալ կառույցների ստեղծմանը,
    - արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական նախագծերի ֆինանսավորման և արտոնյալ վարկավորման մեխանիզմի մշակմանը,
    - նորամուծական կազմակերպությունների աջակցության ենթակառուցվածքների ստեղծմանը,
    - արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական գործունեության հարկային խթանման մեխանիզմների ձևավորմանը,
    - կրթական համակարգի կատարելագործմանը և նորամուծական կողմնորոշմամբ կադրերի պատրաստմանը,
    - տնտեսության պետական սեկտորում նորամուծական զարգացման խթանմանը:
12. Նորամուծական զարգացման տարածաշրջանային կառավարումը պետք է իրականացվի նորամուծական կլաստերների ձևավորման արդյունքում ստեղծված տարածքային նորամուծական համակարգի միջոցով և ուղղված լինի.
    - կլաստերների հիման վրա տարածքի նորամուծական զարգացման ռազմավարության ձևավորման համար տնտեսական նպատակների և առաջնահերթությունների որոշմանը,
    - կլաստերի մասնակիցների տեղեկատվական փոխգործունեության մշակմանը և նրանց միջև որոշակի հարաբերությունների համակարգի կազմակերպմանը, տեղեկատվական ցանցի ձևավորմանը,
    - համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման միջոցով գիտելիքատար աշխատանքների խթանմանը և կլաստերի ներսում նորամուծության առևտրայնացմանը,
    - փոքր ու միջին բիզնեսի նորամուծական ակտիվության զարգացմանը և խոշոր բիզնեսի բազայի վրա համալիր նորամուծական համակարգերի ձևավորմանը՝

նորամուծական կլաստերի պայմաններում բաց նորամուծությունների մոդելի օգտագործման միջոցով,

- կլաստերի մասնակիցների միջև արդյունավետ փոխգործունեության ապահովմանը և նորամուծական կազմակերպությունների դրական վարկանիշ ձևավորող և մասնակիցների նորամուծական գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող կլաստերային դեպարտամենտի ստեղծմանը:

13. Նորամուծական զարգացման կառավարման ընդհանուր գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական ուղղություններով:

ա) Նորամուծական կլաստերի ձևավորման պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման ռազմավարական կառավարում.

- նորամուծական զարգացման քաղաքականությանը համապատասխան կազ-մակերպության նորամուծական զարգացման առաքելության և նպատակների ձևավորում,
- նորամուծական զարգացման հնարավորությունների բացահայտման համար արտաքին միջավայրի վերլուծություն կլաստերի պայմաններում և դրա սահմաններից դուրս,
- նորամուծական զարգացման ռեզերվների բացահայտման նպատակով կազմակերպության ներքին միջավայրի վերլուծություն,
- նորամուծական կլաստերի այլ մասնակիցների հետ փոխհարաբերությունների կառուցման պայմաններում նորամուծությունների զարգացման այլընտրանքային տարբերակի մշակում և ընտրություն,
- նորամուծական զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով նշված գերակայություններն ու դրված խնդիրները,
- նորամուծական կլաստերի այլ մասնակիցների հետ փոխգործունեության պայմաններում նորամուծական զարգացման ռազմավարության իրականացում,
- կազմակերպության նորամուծական զարգացման նպատակների արդյունավետ իրականացման համար հսկողական միջոցառումների իրականացում և վերահսկողության համակարգի ստեղծում:

բ) Արդյունաբերական կազմակերպության նորամուծական զարգացման օպերատիվ կառավարում.

- նորամուծական տեխնոլոգիայի յուրացման, շուկայի ուսումնասիրության և արտադրության արդիականացման նպատակով նորամուծական ներուժի ձևավորում և զարգացում,
- տեղական տեխնոլոգիական միջավայրի պահանջներին համապատասխանեցում և սեփական նորամուծական ապրանքանշանի ստեղծում,
- նորամուծական կլաստերի այլ մասնակիցների և արտաքին միջավայրի հետ հարաբերությունների զարգացման հիման վրա արդյունքի կիրառելիության աստիճանի բարձրացում,
- նորամուծական թիմերի ձևավորում, կադրերի որակավորման բարձրացում, նորամուծական կլաստերի մասնակիցների միջև փորձի փոխանակում,
- կազմակերպության նորամուծական զարգացման կառավարման գծով մաքեթինգային միջոցառումների իրականացում,
- նորամուծական գործընթացի ակտիվացման համար ֆինանսական հոսքերի ապահովում:

գ) Արդյունաբերական կազմակերպության նորամուծական զարգացման ծրագրային կառավարում.

- կլաստերի կազմակերպություն-նախաձեռնողի կողմից բոլոր մասնակիցների համար նորամուծական նախագծի հայեցակարգի նախագծի մշակում,
- նորամուծական նախագծի (մասնակիցների պատավորությունների և իրավունքների բաշխմամբ) պլանի և փաստաթղթերի նախապատրաստում,
- տվյալ կազմակերպության և մասնակիցների համար նորամուծական նախագծի առևտրային արդյունավետության վերլուծություն, ինչպես նաև դրա սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատում,
- նորամուծական նախագծի իրագործելիության վերլուծություն՝ ֆինանսավորման տարբեր ծրագրերի կիրառմամբ,
- կլաստերային զարգացման և կազմակերպման բաժնի աջակցությամբ նորամուծական նախագծի մասնակիցների հետ պայմանագրերի կնքում,
- նորամուծական նախագծի իրականացման վերահսկողություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք
2. «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք
3. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ կառավարության արձանագրային որոշում «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլրտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» 28.08.2008թ. N35
5. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգ www.mioneconomy.am
6. Հայաստանի տնտեսական զեկույց 2009, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, 2009. www.mineconomy.am
7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2011 թվականների գործունեության արդյունքներ.- Երևան, 2011.- 120 էջ: report.gov.am
8. Հայաստանը թվերով: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, 2012թ. www.armstat.am/am
9. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակարական ծառայություն: Երևան 2013 (http://armstat.am/file/article/ashx_06_13.pdf)
10. ՀԲ «Ձեռնարկատիրության խթանումը Հայաստանում» զեկույց 2013թ.
11. Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ: Երևան 2013: SMEs_in_figures_Statistics_2010-2012_am
12. «Ամերիա» ՓԲԸ 2013: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում. Ներկա իրավիճակը, զարգացման միտումները և օգտագործվող գործիքները: Ամբողջական հետազոտության կարճ ներկայացում: www.ameria.am SME_Research_Ameria_MAS,
13. Թոֆլեր էլվին, Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Զանգակ-97, Եր., 2006թ. 151 էջ

14. Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան -Երևան «ԱՈՏ» 2002թ. 372էջ

15. Մենեջմենթ: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ (երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն),-Եր.:Տնտեսագետ 2009թ. 560 էջ

16. Վարդանյան Գ. Ի. «Գիտելիքահենք տնտեսություն: Հնարավորություններ և մարտահրավերներ», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատար. 2008թ. 402 էջ:

17. Авсянников Н.М. Инновационный менеджмент: Учебник. М.:ИНФРА-М, 2002г. 295 стр.

18. Анализ рынков в современной экономической социологии. М.: изд.дом ГУВШЭ, 2008г. 423 стр.

19. Андриссен Д., Тиссен Р. Невесомое богатство. Определите стоимость вашей компании в экономике нематериальных активов. М.: ЗАО ,Олимп-Бизнесե, 2004г. 304 стр.

20. Аузан А., Золотов А. Коалиции за модернизацию: анализ возможности возникновения. Вопросы экономики. 2008г. № 1.

21. Базилевич А.И. Инновационный менеджмент предприятия. Под ред. В. Я. Горфинкеля. М.: ЮНИТИ-ДАНА, 2009г. 416 стр.

22. Балабанов И.Т. Риск-менеджмент. М. Финансы и статистика,1996г. 192 стр.

23. Белогруд И.Н. Средний класс как предмет социально-философского анализа. М. ПЕР СЭ, 2004г. 326 стр.

24. Белянин А. Даниел Канеман и Верной Смит: экономический анализ человеческого поведения. Вопросы экономики. 2003г. № 1.

25. Бовин А.А., Чередникова JI.Е., Якимович В.А. Управление инновациями в организациях. М. Издательство ,Омега-Лե, 2009г. 416 стр.

26. Богатин Ю.В. Оценка эффективности бизнесаи и инвестиций. М. Юнити-Дана, 2001г. 452 стр.

27. Булгаков С.Н. Философия хозяйства. М. ТЕРРА - Книжный клуб, 2008г. 352 стр.

28. Волынкина М.В. Правовая сущность термина ,инновацияե.Инновации.2006г. №1.

29. Веблен Т. Теория праздного класса. Пер с англ. М. Прогресс. 1984г. 183 стр.

30. Воронина Л.А., Ратнер С.В. Научно-инновационные сети в России: опыт, проблемы, перспективы. - И.: ИНФРА-М. 2010. 254 стр.

31. Воронина Л.А., Ратнер С.В., Иванова Н.Е. Итерационный маркетинг инновационного развития экономики России. Ростов н/Д: Изд-во СКНЦ ВШ ЮФУ АПСН, 2008г. 204 стр.

32. Гегель Г.В.Ф. Философия права. М.: Мысль, 1990г. 524 стр.

33. Голиченко О. Российская инновационная система: проблемы развития. Вопросы экономики.2004г. № 12.

34. Гопоненко Н. Инвестиции и инновацинная политика на этапе переходу к новому технологическому порядку. Вопросы экономики, 1997г. N 6

35. Гранатуров В.М. Экономический риск, сушность, методы измерения. М.: Дело и сервис, 2010г. 204 стр.

36. Денисов Е.Ф. Инновационный процесс в условиях рыночной экономики, СПб, Вестник СПб -5,: Изд. СПбУЭиФ, 1993 г. 59 стр.

37. Доу Ш. Психология финансовых рынков: Кейнс, Мински и поведенческие финансы. Вопросы экономики. 2010г. № 1

38. Завлин П.Н., Ипатов А.А., Кулагин А.С. Инновационная деятельность в условиях рынка, СПб, ‚Наука‛ 1994г. 192 стр.

39. Зарубина Н.Н. Социология хозяйственной жизни: проблемный анализ в глобальной перспективе. М. Университетская книга, Логос, 2006г. 392 стр.

40. Захаров Н.И. Стратегические горизонты модернизации России (политико-экономический аспект). http: //www. rkpr. inion. ru/ras/view/publication/general. htmlid=100020853

41. Жигло А.Н. Расчет ставок дисконта и оценка риска. Бухгалтерский учет, 1996г. №6.

42. Ивонов М. Инновационная сфера: состояние и перспективы. Экономист. 1993г. №10.

43. Инновационная ориентация российских экономических институтов. Под ред. В.Е.Дементьева. М.: Книжный дом ‚ЛИБРОКОМ‛, 2009г. 304 стр.

44. Инновационный менеджмент: Учебное пособие. Под ред. д.э.н., проф. Л.Н.Оголевой. М. ИНФРА-М, 2007г. 238 стр.

45. Институциональная экономика: Новая институциональная экономическая теория: Учебник. Коллектив авторов. Под ред. А.А.Аузана. - 2-е изд. - М.: ИНФРА-М, 2011г. 447 стр.

46. Кастельс М. Информационная эпоха, экономика, общество и культура: Пер. с англ. Под науч. ред. О.И. Шкаратана. М.: ГУ ВШЭ, 2000г. стр. 513

47. Кастельс М. Становление общества сетевых структур. Новая постиндустриальная волна на Западе.Анталогия (под ред. В.Л. Иноземцова) М. 1999г. 721 стр.

48. Кирина Л.В., Кузнецова С.А. Управление нововведениями. ИЭОПП СО РАН. Новосибирск, 1994г. 38 стр.

49. Кондратьев Н.Д. Большие циклы конъюнктуры и теория предвидения. М.: Экономика, 2002г. 767 стр.

50. Колесниченко Ю.В Личность в евразийстве. Гносеологические основания. М.: Альфа-М, 2008г. 198 стр.

51. Колодко Гжегож В. Мир в движении. пер. с пол. Ю. Чайникова. М.: Магистр, 2009г. 576стр.

52. Кокурин Д.И. Инновационная деятельность. М.: Экзамен, 2001г. 575 стр.

53. Корчагин Ю. Технологические уклады экономики с позиций теории развития ЧК. http://www.lerc.ru/?part=articles&art=11&page=25

54. Клейнер Г.Б., Качалов Р.М., Нагрудная Н.Б. Системная парадигма в экономических исследованиях: стратегическое планирование кластеров. Стратегическое планирование и развитие предприятий: Тез. докл. и сообщ. 8- го Всерос. симп. Секция 1.М.:ЦЭМИ РАН, 2007г. 98 стр.

55. Кулагин А.С. Немного о термине ‚инновацияЂ. Инновации. 2004г. №7.

56. Маслоу А. Мотивация и личность. 3-е изд. Пер. с англ. - СПб.: Питер, 2010г. 800 стр.

57. Мелкумов Л.С. Экономическая оценка эффективности инвестиций и финансирование инвестиционных проектов. М.: ИКЦ ‚ДИСЂ, 2005г. 160 стр.

58. Медынский В.Г. Инновационный менеджмент: Учебник. М.: ИНФРА-М, 2008г. 295 стр.

59. Мищенко Л.Я., Арутюнов Э.Ю. Формирование механизма управления развитием промышленной корпорации: Монография. Краснодар, изд-во Кубанский госуниверситет, 2002г. 435 стр.

60. Морозов Ю.П., Гаврилов А.И., Городнов А.Г. Инновационный менеджмент: Учеб.пособие для вузов. 2-е изд., перераб. и доп. М.: ЮНИТИ-ДАНА, 2003г. 400 стр.

61. Нравственные основы современного социально- экономического развития: Монография. - М.: Издательско-торговая корпорация ‚Дашков и К^{0}Ђ, 2009г. 196 стр.

62. Нижегородцев Р.М., Никитенко С.М. Эффективные механизмы модернизации и инновационного развития экономики (теория и практика). Р.М. Нижегородцев, С.М. Никитенко. Кемерово: ООО ‚Сибирская издательская группаЄ. 2010г. 311 стр.

63. Новиков В.С. Инновации в туризме М.: ИЦ "Академия", 2007г. 208 стр.

64. Лацоник У. Теория инновационного предприятия. Экономический вестник Ростовского государственного университета. 2006г. Том 4. №3

65. Ольсевич Ю.Я. Психологические основы экономического поведения. М.: ИНФРА-М, 2010г. 413 стр.

66. Попов Е.В. Рыночный потенциал предприятия. М. 2002г. 559 стр.

67. Портер М. Конкуренция. СПб.: Питер. 2002г. 208 стр.

68. Ратнер С.В. Методологические проблемы развития конкурентоспособных научно-инновационных сетей: организационно-экономическое и инструментальное обеспечение. С.В. Ратнер. Ростов-на- Дону: Издательство ЮНЦ РАН, 2009г. 208 стр.

69. Румянцева Е.Е. Новая экономическая энциклопедия. М.: ИНФРА-М, 2010г. 826 стр.

70. Савка А.В. Основы философии хозяйства. М.: ИКЦ ‚АкадемкнигаЄ, 2010г. 357стр.

71. Санто Б. Инновация как средство экономического развития. М.: Прогресс. 1990г. 296 стр.

72. Системный анализ в экономике: Материалы научно-практической конференции. Москва, 24-25 ноября 2010 г. Под ред. члена-корреспондента РАН Г.Б. Клейнера. М.: ЦЭМИ РАН, 2010.г 358 стр.

73. Скаржинский М.И. Рутины и инновации.Часть II. Проблемы новой политической экономии. 2005г. № 2

74. Сурков С. Социально-психологические модели в анализе трудовой мотивации работников. Вопросы экономики. 2004г. № 8.

75. Стрелец И.А. Сетевая экономика: учебник. М.: Эксмо, 2006г. 208 стр.

76. Суворова А.Л. Инновационный менеджмент: Учеб.пособие.–Йошкар-Ола: Мар. ГТУ, 1999г. 144 стр.

77. Традиции и инновации в современной России. Социологический анализ взаимодействия и динамики. Под редакцией А.Б. Гофмана. М.: Российская политическая энциклопедия (РОСПЭН), 2008г. 479 стр.

78. Третьяк В.П. Квазиинтеграция: природа, формы проявления. Современные проблемы экономической теории. М. МГУ. 2004г. 84 стр.

79. Третьяк В.П. Кластеры фирм как новая форма организации бизнеса. Экономический рост и вектор развития современной России М., ТЭИС. 2004г. 121 стр.

80. Туган-Барановский М.И. Избранное. Периодические промышленные кризисы. История английских кризисов. Общая теория кризисов. М.:Наука- РОСС-ПЭН, 1997г. 239 стр.

81. Фатхутдинов Р.А. Инновационный менеджмент: Учебник для вузов. 5-е изд. СПб.: Питер, 2008г. 496 стр.

82. Фукуяма Ф. Великий разрыв. М.: АСТ: АСТ МОСКВА, 2008г. 474 стр.

83. Хотяшева О.М. Инновационный менеджмент: учебное пособие. 2-е изд. СПб.: Питер. 2007г. 384 стр.

84. Цаплин В.С. Разумное, но не мыслящее. М.: Крафт, 2009г. 352 стр.

85. Чесноков А. С. Инвестиционная стратегия и финансовые игры М. Изд-во Пробл. автоном. ин-та междунар. Сотрудничества. 1994г. 318 стр.

86. Шайбаков Л.Ф. инновационный процесс в регионе. М.: 1995, 159 стр

87. Шерешева М.Ю. Межфирменные сети. М.: Экономический факультет МГУ, ТЕИС, 2006г. 340 стр.

88. Шерешева М.Ю. Инновационные кластеры. Региональные аспекты формирования национальной инновационной системы. М.: Статут, 2007г. 320 стр.

89. Шумпетер Й.А. Теория экономического развития. М.: Эксмо, 2007г. 867 стр.

90. Яковец Ю.В. Эпохальные инновации XXI века. Ю.В. Яковец; Междунар. Ин-т П.Сорокина-Н.Кондратьева. М.: ЗАО ,Издательство ,Экономикаt, 2004г. 444 стр.

91. Ольсевич Ю. Психологические аспекты современного экономического кризиса. Вопросы экономики. 2009г. № 3

92. Чеснаков А.С. Инвестиционная стратегия и финансовые игры. М.: 2004, 320 стр

93. План действий по увеличению инновационной активности, модернизации экономики и технологиическому развитию Краснодарского края. Официальный сайт Департамента экономического развития Администрации Краснодарского края.URL: http: //economy. krasnodar. ru/news /economy news/21031101 .html

94. Федченко А.А. Достойный труд и толерантность как инновационные составляющие рынка труда. Инновационное развитие экономики России: ресурсное обеспечение: Вторая Международная конференция; Москва, МГУ имени М.В. Ломоносова, Экономический факультет; 22-24 апреля 2009 г. Сборник статей: Том 1. Под ред. В.П. Колесова, J1.А. Тутова. М.: Издательство МГУ, 2009г. 490 стр.

95. Шихирев П. Природа социального капитала: социально- психологический подход. Общественные науки и современность. 2003г. №2.

96. Яковлева Н.В. Структурные и институциональные условия инновационного развития региональных промышленных систем. Экономическая наука современной России, 2009г. №3(46).

97. Яшин А.Н. Сдвиг парадигмы или ‚перезагрузка‛ ценностей. Арктика: общество и экономика. 2009г. № 1

98. Уэбстер Ф. Теории информационного общества/ Ф. Уэбстер; Пер. с англ. М. В. Арапова, Н. В. Малыьиной; Под. ред. Е. Л. Вартановой- М.: Аспект Пресс, 2004г. 400 стр

99. Bell, D (1967) Notes on the Post-Industrial Society// The Public Interest No 7

100. Crawford R. In the Era of Human Capital: The Emegence of Talent, Intelligence, and Knowledge as the Worldwide Economic Force and What It Means to Manegers and Investors/ R. Crawford. New York Harper Business, 1991.

101. Encyclopedia of New Economy, Wired , May 1998 www.hotwired.com/special/ene/

102. Goden B. The New Economy. What the Concept Owes to the OECD. Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №21. 2003a. Mode access: http://www.csiic.ca.

103. Goden B. Taking Demand Seriously: OECD and the Hole of users in Science and Technology Statistics // I Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №12. 2001. Mode access: http://www.csiic.ca.

104. Goden B. Technological Gaps: Quantitative Evidence and Qualitative Arguments // Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №23. 2003c. Mode access: http://www.csiic.ca.

105. Goden B. Knowledge-Based Economy: Conceptual Framework or Buzzword? // Project on the History and Sociology of S&T Statistics [Electronic resource]. Working Paper №24. 2003b. Mode access: http://www.csiic.ca.

106. Emerging Entrepreneurship and SME Policy Development in the BSEC After Economic Crises, Konrad-Adenauer-Stiftung, Istanbul 2011

107. Mensch G. Das technologische Patt: Innovationen ubervinden die Depression. Frankfurt, 1975.

108. Shumpter Josef A. Business Cycles.Theoretical, Historical and statistical Analysis of Capitalist Proces. N. Y., Vol. 1.2. 1939

109. Rogers E. M. Diffusion of Innovations/Fifth Edition, Free Press, New York.- 2003.

110. Kevin Kelly , New rules for the New Economy, WIRED September, 1997, www. wired. Com /wired/5.09/newrules.html

111. J. Bradford De Long, A. Michael Froomkin “The Next Economy” April 1997 www. law. miami.edu

112. OECD. The knowledge-based Economy. Pariz 2006

113. http://www.economy.gov.ru

114. www. gov. am

115. www. armstat. am

116. www. taxservis. am

117. www. smednc.am

118. www. aeplac.am

119. SMEs_in_figures_Statistics_2010-2012_am

120. http://ru.wikipedia.org/wiki/Кластер

121. http://armstat.am/file/article/ashx_06_13.pdf